


3. Уперынар
Тургунутигы Тургундо
Хитан 1913р.

9(47.925)
V-37



ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀԳ.

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԺԱԳՈՒՄԸ

Ա.

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՃԻՒՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բ.

ՎՐԱԿԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԺԱԳՈՒՄԸ



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1913.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՆՆԵՐ ՀԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Գ.

ՎՐԱԿԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԺԱԳՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ՀԳ.

Բ.

ՎՐԱԿԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԺԱԳՈՒՄԸ



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1913.

ՎՐԱԿԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԺԱԳՈՒՄԸ

ԳՐԵՑ

ՊՐՈՖ. ԴԿՏ. Յ. ՄԱՐԿՈՒԱՐՏ

ԳԵՐՄԱՆԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. Մ. ՀԱՊՈՋԵԱՆ

ՄԻԻԹ. ՈՒՍԵԷՆ



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1913.

ՎՐԱԿԱՆ ԲՆԳՐԱՑՈՒՆԵՆՑ ԺԱԳՈՒՄԸ

Ռուսները Վրաստանի կառավարութիւնը ձեռք առնելով՝ որուն հարիւրամեակը պիտի տօնեն ձօտերս, յանձն առին նաեւ գիւցազն ցեղիս պատմութիւնն ըստ կարի լուսաբանելու պատուոյ պարտականութիւնը: Գծրախտաբար Վիլք Հայոց պէս՝ ժամանակակից պատմագիրներ՝ շունին, ուստի որչափ ալ զնահատելի համարուի այն ժողովածոյքը զոր ամբողջութեամբ հրատարակեց եւ թարգմանել տուաւ Ս. Պետերբուրգի կայսերական ակադեմիան եւ որ Վրական ժամանակագրութիւն անուամբ ծանօթ է, սակայն սակէ աւելի անհրաժեշտ է ի լոյս հանել օր յառաջ Վրական վանքերէն այն բոլոր յիշատակարանները, որոնք ժԲ դարուն Վրացի գիտնոց՝ իրենց ժամանակագրութիւնները կազմելու հիմ ծառայած են¹: Այս առաւելագէս նախամոնկղեան շրջանին համար կ'արժէ: Գարձեալ որչափ ես գիտեմ՝ զեռկը պակսի Վրաստանի մասին՝ հռոմէական, բիզանդական, հայկական եւ արաբական տեղեկութեանց հաւաքածոյ մը, որ հիմ կազմելու էր արդիւնաբեր քննադատութեան եւ գլխաւորաբար հնագոյն դարերու ժամանակագրութեան վերլուծման: Բարեբախտաբար կայ

¹ || Այս գործս հիմայ կառարուելու վրայ է. տես Մ. Գ. Զանաշուէլի «Բարթիւն-Ծխորիդա — Վրաստանի կեանքը» — Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племенъ Кавказа. Տեոր. 35. Տփղիս 1905. Մասն Ա. էջ 113—235, ի մասնաւորի 113—183: ||

երկու ժամանակամիջոց որոնց համակշռութիւնը եւ ըստ այսմ ալ արուեստական հիւսուածքին լուծումը հնարաւոր կ'ընեն արտաքին ժամանակակից ազդիւրները: Այս շրջաններէն մին է Բագրատունեաց Տայոց եւ Վրաց աշխարհին մէջ երեւան գալը, որուն նկատմամբ ազգային ժամանակագրութենէ եւ Վարդանի (ԺԳ դար) տեղեկութիւններէն զատ տրամադրելի են նաեւ Կոստանդին Ծիրանածնի (952) պատմածներն՝ զորոնք ինքը պաշտօնական ազդիւրներէ կը քաղէ եւ անձամբ ալ եղելութիւններուն շատ մօտ է:

Ջանանք նախ տեսնել թէ արժանահասաւատ պատմութիւնը՝ Վրաստանի Ջրդ եւ Էրդ գարու քաղաքական հանգամանաց վրայ ինչ կրնայ սորվեցընել:

[Ս. Եւստաթիոս Մցխէթացւոյ մարտիրոսութենէն ետքը Խոսրովի տասներորդ տարին Վրաստանի վրայ պարսիկ մարդպան էր Արուանդ Վշնասպ. իբեն ժամանակն իսկ Գրիգոր Վրաստանի տանուտէր (մամածախիս) էր եւ Արշունք բոլորէր էր Վրաստանի՝ այսինքն Գուգարաց: Երէք տարի ետքը Վժռն-Բոշիւ (Բոշիւ) մարդպան էր: Ինչպէս Հառնաք ապացուցած է մարտիրոսութիւնը Խոսրով Անուշըրուանի կառավարութեան ժամանակ կ'ընայ, իսկ անոր տասներորդ տարին 440/41ին կը համապատասխանէ. տես Ջ. Վ. Ս. Եւստաթէոս Մցխէթացւոյ մարտիրոսութիւնը. SBBA. 1901, էջ 880 յջ. Բրոսէ, Hist. de la Géorgie I 226, ծան. 1:] Հայոց 572ի ապստամբութեան ժամանակ Վրաց իշխան էր Գուրգէն. Թէոփանէս Բիւզ. Գինդորժի քով, Hist. Gr. min. I. 448: Գարձեալ ծանօթ են մեղի երեք իշխան որոնք իրենց անուամբը Որմիզդ Գ.ի (579—590) տիպով պահլաւերէն եւ վրացերէն դրամ կտրած են. Գուրգէն, Վախտանգ եւ Ջուանշէր (Բրոսէ, Deux histor. armén. XI, էջ 249, ծան. 1):

Հայ եւ Վրական եկեղեցիներու բաժանման ծագման մասին (Գիրք Թղթոցի՝ եւ անկէ քաղելով) Ուխտանէս Ուս. Հայեցւոյ (Ժ դարու վերջերր) տուած վաւերագիրները մեծ կարեւորութիւն ունին. սակայն որպէս զի գաստնը առանց տարակուսի պատմութեան համար գործածել կարելի ըլլայ՝ հարկ է նախ զանոնք՝ բայց ի մասնաւորի անոնց ժամանակագրութիւնը առանձին քննութեան ենթարկել: Հոս յաջորդքս թող բաւական համարուին. Վրկանի նախկին մարդպանը՝ Սմբատ Բագրատունի, Սերէոսի համաձայն 68 Խոսրովի իր. տարին՝ իր հաշուովը 616/17ին մեռաւ. Մովսէս կաթողիկոսի յաջորդ ընտրուեցաւ Սմբատ Բագրատունւոյ ազգեցութեան տակ՝ ըստ Սերէոսի 64 Խոսրովի ժը. տարին՝ Աբրահամ կաթողիկոսը, որ Խոսրովի իա. տարին՝ այսինքն 609/10ին վախճանեցաւ (Սեր. 78):

|| [Եթէ մտածենք որ Սերէոս Խոսրովի կառավարութիւնը 589/90ին արդէն սկսած կը գնէ, այն ատեն վերն ըսուածին կը համաձայնի Գիրք Թղթոցի էջ 151, հաղորդածը թէ Աբրահամ կաթողիկոսն ընտրութենէն անմիջապէս ետքը Ապրուէզ Խոսրովի ժէ.րդ տարին Սմբատ Վրկանի մարդպանին գործակցութեամբ ժողով մը գումարեց: Ըստ այսմ ալ Աբրահամն ընտրութիւնն եղած է 606/7ին եւ այն հաւանականօրէն 607ի գարնան: Ուխտանէս սոյն թուականը Գ. Թղթոցէն առած է եւ չորս անգամ ալ կրկնած, բայց «ի թագաւորութեանն Հռոմայեցւոց Մուրկայ» յաւելուածով աղնւաղած է (Բ. ա. Լ. լբ. լե.): Աբրահամի առաջին տարին սուգուելէն ետքը բնական է որ սուտ կ'իլլէ այն տեղեկութիւնը թէ ԻԳ տարի կաթողիկոս մնացած ըլլայ (Ուխտ. Բ. ա. հմմտ. Վաղարշապատի բնագիր 1871, Բ. էջ 3, Բրոսէ, Deux historiens armén. էջ 278. St. Petersb. 1871, Ստ. Ասողիկ Բ. բ., էջ 86. Յովհ. Կաթղ.)

43, *Διήγησις*. *Υαδբեֆիսի քով*, էջ 281). Ճիշտն է գ. տարի (607—610): *Կաթողիկոսաց ցանկին մէջ ուրիշ շատ մը տարեթիւեր սխալ են*. *Կոմիտաս ոչ թէ ք. այլ ժը. տարի կառավարած է (610—627)*. *Աբրահամու նախորդը Մովսէս, 'այրն Աստուծոյ, իբր թէ Լ. տարի մնացած է Ս. Գրիգորի աթոռոյն վրայ, ինքք յաջորդ էր Յովհաննէս՝ Գարեղենացւոյն, որ 573ին Կոստանդինուպոլսոյ մէջ մեռած էր՝ ինչպէս որ կ'իմանանք Յովհաննէս Եփեսացիէն Բ. իբ. (տ. J. P. N. Land, Johannes von Ephesos, der erste syrische Kirchenhistoriker, էջ 145) եւ ժէ. տարի կառավարած (557—573): Յովհաննէսի նախորդին Ներսէս Աշտարակեցւոյ ժամանակ գումարուեցաւ Գունոյ նշանաւոր ժողովքը՝ Խոսրովի ԻԴրդ տարին (Գ. Թղթոց, էջ 72 յԵ.) ուստի 554/5ի յ. ք. (Տմն. *Երոստանդ ճեյ-Սիմասեան Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորոց եկեղեցիների հետ*. Էջմ. 1908, էջ 91, ծան. 1) կամ ըստ *Ճիհիսիսի Ներսէս կաթողիկոսի քսանուչորբորդ տարին*. *եթէ վերջին տեղեկութիւնս ճիշտ է այն ատեն Ներսէսի կաթողիկոսութեան առաջին տարին 531/2ին կ'իյնայ*. ըստ այսմ ալ ոչ թէ թ. ամ այլ իգ. ամ կառավարած է: Խոսրովի ԻԳ տարին՝ Քաղոցի երկուքին՝ եղաւ Յիզաբուղիտի մարտիրոսութիւնը *Martyrdom of saint Hiztbouzit*. F. C. Conybeare, *The Armenien Apology and Acts of Apollonius and others Monuments of early Christianity*, 2nd ed., London 1896, էջ 270): *Մովսէսի կառավարութիւնը կ'իյնայ 574—603*. *իր մահուընէն ետքը երեք տարի աթոռը պարապ մնաց*. *այս միջոցիս Աբթանէս քերթող տեղապահ էր, ուստի 604—606/7*. *Ուխտանէս Բ. ք. լե - լւ., էջ 22—67.] ||**

Գիրք Թղթոցի եւ Ուխտանէսի յառաջ բերած մէկ գրութիւնը, որ Աբրահամ կաթողիկոսին

օճմանէն յառաջ գրուած է հետեւեալ վերնա-
գիրն կը կրէ. «Աբբասիրի Տեառն Աիւրոնի Վրաց
կաթողիկոսի եւ այլ եպիսկոպոսաց աթոռակցած
ձերոց եւ իշխանաց աշխարհիդ Ատրնբրեսհի եւ
ամենայն լաւացդ, ի Սմբատայ վրկան Մարգպանէ
եւ տերանց զինուորէ եւ Գաւառիւնէ եւ ի Վար-
դպետէ Հայոց Շարսաղարէ եւ յայլ յազատաց»
Գ. Թղթոց, էջ 168 = Ուխտ. Բ. ծե. 92; Այս
թղթոյս պատասխանին մէջ Աիւրոնէ եւ անոր ա-
թոռակիցներէն ետքը կը յիշուին «Իշխան Ատր-
նբրեսհ եւ Աշուշան եւ ամենայն լաւք աշխարհիս
Վրաց» Գ. Թղթ. 170 = Ուխտ. Բ. ծգ. 95:

Գուգարաց՝ Յուրաւայ Մովսէս եպիսկոպոս-
տին մէկ նամակին պատասխանին մէջ, որ Աբբա-
ճամ կաթողիկոսի ընտրութենէն բաւական ետքը
գրուած է (Գ. Թղթ. 174 = Ուխտ. Բ. ծթ. էջ
101/2) Սմբատ՝ Ատրնբրսնի նո Մովսէս երկու
եղբայրներն՝ անոր իբրեւ հակառակորդներ կը յի-
շէ. ասոր հակառակ Մովսէս՝ կաթողիկոսական տե-
ղպահէն վրթանէս քերթողէն կը խնդրէ որ իր
տեղը նամակ մը հրամայէ գրել «առ կաթողիկոս
(Աիւրոն) անուն եւ առ (Ատր)նբրսնէս եւ վաճան
(Բրգմիհր) (Ուխտ. Բ. գրմեհ)» (Գ. Թղթ. էջ 133
= Ուխտ. Բ. ի. էջ 40). Վրթանէս այս աղաչանքը
կը կատարէ (Գ. Թղթ. 138 = Ուխտ. Բ. իբ. 42):
Վրահան իշխանաց բաղմութիւն մը կը գնէ առ-
ջեւնիս Ուխտանէսի երկրորդ գիրքը, եւ այն թէ
իւր գրուածները եւ թէ վաւերագիրները. իսկ ան-
գամ մը Աիւրիոն Աբբաճամու գրած թղթոյն մէջ
կը յիշէ «Թագաւորք եւ իշխանք եւ ամենայն
բնակիչք աշխարհիս մերոյ» (Ուխտ. Բ. ծբ. էջ 89):
Մայրաքաղաքը Տփղիս էր (Բ. է. էջ 19):

Այս իշխաններուն զլխաւորը յայտնապէս
Ատրնբրեսհ էր, սակայն իր վաճան եւ Բրգմիհր
(Բղրմեհ) եղբայրներն ալ կառավարութեան մէջ
մաս ունէին: Աշուշան նոյն ժամանակուան Գու-

գարաց բղեաշինն է, որ Յուրտաւ կը նստէր՝ ինչպէս կ'իմանանք Ուխտ. է. Բ. Ժր. էջ 34: Գուգարաց բղեաշնը երգ. դարուն ալ Աշուշայ կը կոչուէր (տ. իմ Eranšahr էջ 169), [դարձեալ ըստ Եւստաթէոսի վկայարանութեան 540ի ատեններն ալ նոյն անունն ունէր]:

Վրաստանը իր Տփղիս մայրաքաղաքով այն ատենը պաշտօնապէս դեռ յունական պետութեան կը վերաբերէր ինչպէս որ կը տեսնուի Աբրահամու Արարիոնի գրած խօսքերէն (Գ. Թղթ. 165 = Ուխտ. Բ. խդ. 75) «դե է ինչ որ շհաւատալի իսկ թուեցաւ մեզ. դիբնդ աւտար թագաւորութ (եամբ)՝ արքայից արքայի ծառայից սիրոյ միաբանութիւն առնել եւ զքնական հաղորդակիցս որոշել կարի իսկ դժուարին է: Այս յանդիմանութիւնները կիս խուժատանցի նեստորականին եւ Յուրտաւայ Մովսէս եպիսկոպոսին հանդէպ կիւրիոնի բռնած վարմանքին համար են. օտար թագաւորութիւնն, որուն հպատակ էին Վիրք, Յոյններն են: || Գարձուածքներով լի է կիւրիոնի պատասխանը. «Իսկ այն որ վասն հաւատոց եւ ժողովոյն (Քաղկեդոնի) եւ վասն տուժարին (Աւեոնի) գրեալ էր, եւ զայս գրեալ էր թէ արքայից արքայի ծառայից բնդ աւտար թագաւորաց ծառայս հաւատի՝ ի զուգաց ունել եւ զքնական հաղորդակիցս ուրանալ՝ յոյժ անհնարին թուի: Մեր եւ ձեր հարքն արքայի ծառայք էին, եւ զհաւատ զերուսաղէմի ունէին, եւ մեր եւ գուք նոյնպէս:՝ Թէպէտ եւ ծառայք արքայից արքայի եմք, զհաւատ զերուսաղէմի ունիմք եւ կալցուք: Ձի թէ ցայժմ խոնսունդ՝ էին տեարք, այժմ որչափ եւս առաւել երանելի եմք, որք յարքայից արքայի ծառայութեան հասեալ եմք: Ձի մինչ երկինք եւ երկիր լեալ էին, չէր եղեալ եւ ոչ մի տէր, որ ամենայն ազգի զիւր աւ-

1 Ձ. հաւտի:

2 Այս բառս անձանութ է ինծի:

րէնս ի վերայ թողեալ էր, որպէս այս տեր եթող, եւ մանաւանդ զմեր քրիստոնէից հաւատս. իսկ ազատի աշխարհի մերոյ աւելի քան զամենայն աշխարհաց, եւ բարի անձինս իմոյ՝ լաւագոյն քան զամենայն ընկերաց իմոց¹ եւ արքայից արքայնոյնպէս տէր է Հոռոմոց², որպէս եւ տիրեաց աշխարհի. եւ չէ այսպէս, որպէս դուք գրեցէքս. թէ որիչ որիչ թագաւորութիւնք են³: Հոս Ուխտանէս կը յաւելու այս նախադասութիւնք. «զի Աստուած փառաւորեացէ զարքայ, զի նա զին փառաւորեաց» : Գ. Թղթ. 167 = Ուխտ. Բ. խէ. 76/7 :

Հոս ենթադրուած քաղաքական եւ կրօնական յարաբերութիւնները Փոկասի կառավարութեանը կը հային, երբ խոսքով Բ. Մօրիկ կայսեր վրէժխնդիր ելաւ եւ իբրեւ թէ անոր սրգւոյն իրաւունքները պաշտպանելու համար զէնքի գիմեց³ :

Խոսքովի զօրավարները Հոռոմոց՝ Հայաստանի մէջ կրկին ու կրկին յաղթելէն եւ ի վերջոյ իր ԺԸրդ տարին = 606/7 (Սեր. 77) Արնէն ալ դուրս վաճառելէն ետքը (հմտ. Սեր. գլ. իա. եւ յՂ.), Աքաստան, բայց ի մասնաւորի Տփղեաց բերդն անձնատուր եղաւ Պարսից՝ իր անկախութիւնը եւ կրօնի ազատութիւնը բացայայտ ապահովելով : Ուխտանէսի քով Թղթոյն վերջը թագաւորին համար եղած մաղթանքը եթէ նոյն իսկ վաւերական ըլլայ, ամենեւին զարմանալի չէ, վասն զի կիւրիսն՝ Սմբատ Բագրատունւոյ մէկ Թղթոյն պատասխանին մէջ (Գ. Թղթ. էջ 171 = Ուխտ. Բ. ծղ. էջ 96) այսպէս կը գրէ. վասն քեզ ի կամս

1 Ուխտանէս դուրս ձգած է :

2 Ուխտ. եւ Արեաց :

3 Ասոր հակառակ Ուխտանէս այս գիրքը յարաբերութեան մէջ կը գնէ այն խաղաղութեան եւ բարեկամութեան գաղտնիքին հետ, որ խոսքով Բ. ի գահակալութեանէն ի վեր Պարսից եւ Հոռոմոց պետութեան մէջ կար : Այս ըմբռնումը կը կրկնէ նաեւ գլ. ծէ եւ է :

Հասուցանելոյդ եւ առաւել բարի առնելոյ, զարքայից արքայ անմահ արասցէ (Տէր), եւ աւելի ի կամս հասուցէ: Նոյն նամակն Ռւխտանէս այսպէս կը վերջացընէ. «Ողջ լիջկը ի Տէր, այլ կեցողոյց (կեցուցէ) Աստուած զկայսր, զի նա զաշխարհս մեր կեցողոյց: Այս նախադասութիւնը ի հարկէ իրուամբ կը պահտի Գ. Թղթոցին մէջ: Այս բացատրութեանցս համար Ռւխտանէս զՎիւրիոն կը մեղադրէ որ մէյմը Պարսից եւ մէյմը Հռոմոց կողմը կը կազար. «Բաժանեալ Վիւրիոնի զկամս իւր յերկուս թեւակոխէր՝ յայն կողմն Հռոմոց՝ շուք զնելով եւ շնորհուկս առնելով Մուրկայ կայսեր. եւ նովաւ պարծի ասելով. մեք ասէր զկայսեր ընկալաք զհաւատ եւ ունիմք . . . եւ Աստուած զկայսր կեցուցէ: Իսկ ապա թեկն ածէ յայս կողմն Պարսից. զի եւ նոցա աշխարհն ընդերկուացեալ էր ի Պարսից կողմն եւ ի Հռոմոց. եւ նա ի կասկածի եղեալ յարքայից արքայէ՝ թէ զի մի դուցէ խնդիր առնիցէ իմոց իրացս ի սաղրելոյ Սմբատայ Վրկան մարզպանի . . . : Արդ յաղազս այսպիսի կասկածի կայր Վիւրիոն, յայն կողմն պարծէր, վասն զի հաւատ գնոցայն էր ընկալեալ. եւ յայս կողմն երկնչէր, թէ խնդիր լինի յարքայէն հաւատոցն ի յազգմանէ ազատացն Հայոց, եւ ասէր փառաւորեսցէ Աստուած զարքայ . . . : Եւ այնու ի մարդիկ ապաւինեալ պարծէր, եւ շոգմոգ բանիւք եւ աղերսանօք կեանս խնդրէր կայսեր եւ փառս հայցէր արքայի սնտի իմացմամբ» (Ռւխտ. Բ. ծէ. էջ 97—98): (Բրոսէի թարգմանութիւնը հոս [էջ 335] շատ սխալ եւ մոլորեցուցիչ է:) Վիւրիոնի այս երկմիտ վարմունքն անով կը մեկնուի որ փոկասի բանականերուն պարտութենէն ետքը Վրաստանի մէկ մեծ մասը բռնեցին Պարսիկք թէեւ երկիրը կերպապէս դեռ Հռոմոց կը վերաբերէր, եւ ասոր համար ալ Վիւրիոն ստիպուած էր արքայից արքան նկատողութեան առնուլ՝ Պարսից իշխա-

նութեան տակ գտնուած իր հպատակներուն պատճառաւ: Ասկէ զատ այսչափս միայն գիտենք թէ խոսարով Բ. իր գահին վրայ վերստին հաստատուելէն ետքը Մօրիկի թողուց նաեւ (Սեր: 45) Վրաստանի մեծ մասը մինչեւ Տփղիս քաղաքը. եւ ան ալ ըստ Գ. Թղթոցի վաւերագիրներու Տփղիսն ալ ի միասին առնելով. սակայն Հերակղէ արշաւանաց ժամանակ այս քաղաքը հաստատուն եւ անխախտ միացած է Պարսից հետ (տես վարը էջ 83):

Կիւրիոն Սմբատի գրած պատասխանին մէջ (Գ. Թղթոց էջ 271 = Ուխտ. ծղ. էջ 96) Յուրտաւայ Մովսէս եպիսկոպոսը կ'անբաստանէ որ « վասն չար գործոց իւրոց գաղտ ի գիշերի փախըտական գնաց, եւ յապտամբս չոգաւ՝ առ վախրամ, եւ այնպէս չարութեամբ գիտաց առնել. զի սակաւիկ ինչ պիտեցաւ, եւ դեռ զքաղաքսն առնուլ տայր, եւ Արեաց աշխարհի մեծ զիեան հասուցանէր »: Իսկ Մովսէս այս խօսքերուս հանդէպ ինք զինքն կը ջատագովէ որ՝ Կիւրիոն կաթողիկոսին տուած իր այցելութենէն ետքը ոչ թէ գիշերը այլ ցերեկով մեկնած է եւ Ս. Յովհաննու վանքը (Արագածի վրայ) գացած է: « Չեմ երթեալ առ Վահրամ, եւ ոչ նոքա կացուցանել կարեն զայդ. այլ եւ այնու եւս անգուման առնեմ (համոզեմ) զՏէրդ, զի Վահրամայ առ իս գրեալ էր, թէ իմ սրտի մեծ պակասութիւն է ձեր ի սրբոյ եկեղեցւոյն հեռանալդ, բայց մինչ գնացէքդ՝ ճանապարհ առ մեզ պիտէր ունել. զի եւ եկեղեցւոյն մեծ բաժին կայ աստ, որով եւ զձեզ յանձն ունել մարթ էր »: Չայս թուղթ տեսան կաթողիկոսին տեսեալ է եւ Քեզ Տեառնդ ցուցանեմ. եւ ես անդէն պատասխանի արարի: Արդ՝ ասեմ ապա անտի զի գնայի, զի առ քեզ գայի, զի հաւատ ձեր եւ նոցա մի է » (Գ. Թղթ. 173 = Ուխտ. Բ. ծր. 100): Մովսէսի այս պատասխանէն կը տեսնուի որ Վահրամ կամ Վարհամ Քաղկեդոնի

կուսակից իշխան մըն էր, սակայն ՂՄովսէս կը պաշտպանէր, ի հարկէ, ինչպէս կ'երեւայ անձնական շահերու համար, վասն զի անոր թեմը մեծաւ մասամբ իր երկրին մէջն էր: ॥ Սակայն եթէ Մովսէս անոր կողմն անցնելով Արեաց ձեռքը եղած Տփղիսը՝ թշնամեաց կը մատնէր, այն ատեն ամենահաւանականն այն է որ Աահրամ իշխան էր Արաստանի՝ Տփղիսէ արեւմուտք եւ հարաւարեւմուտք եղած մասին, որ Արեաց թշնամուոյն այսինքն Յունաց ձեռքը մնացած էր: Գժուարաւ կարելի է զինքը Գուգարաց Բրէւշիին հետ նոյնացնել: վասն զի քանի որ Մովսէս բղետաշխին պալատան եպիսկոպոսն էր եւ անոր պէս Յուրտաւ կը նստէր (Գ. Թղթ. 116 = Ուխտ. Բ. Ժա. 25, հմմտ. նաեւ Ժգ. 28) զարմանալի կ'ըլլար որ Աիւրիոն աւելի բացայայտ չէ գրած թէ Մովսէս իր իշխանին՝ Բրէւշիին քով փախած է. ուստի այս պարագայիս պարզապէս իր աթոռը դարձած կ'ըլլար: Թերեւս կարելի է Բրէւշիը վերը յիշուած Առուշանին (Գ. Թղթ. 170 = Ուխտ. Բ. Ժգ. 95) հետ նոյնացընել, այնպէս որ ասով Աշուշան կամ Աշուշայ (հնագոյն Աբշուշայ) բղետաշխներու հասարակաց անուն մը (տոհմի անուն կամ տիտղոս) կ'ըլլայ: Իսկ Աահրամի երկիրը Աուրի վերին կողմերն փնտռելու ենք: ॥

Մօրիկ կայսեր Քաղկեդոնականն ընդունելի ընելու ջանքերն՝ բնական է միաժամանակ սկսան յունական շայաստանի (Պեր. Թ. 52/53) եւ Արաստանի մէջ. եւ Ուխտանէս ի հարկէ իրաւունք ունի երբ կը զիտէ թէ Աիւրիոն կայսեր հետ միախորհուրդ եւ անոր հրամանաւր կը գործէր եւ թէ օգուտ մը պիտի չըլլար եթէ Սմբատ նոյն իսկ (Պարսից) արքային եղածներուն վրայ տեղեկութիւն տար (Ուխտ. Բ. Ե. 17): Երուսաղէմի եւ Աղեքսանդրիայի առումէն (քստ Պեր. 82, Խոսրովի իւրգ տարին = 613/14) ետքը՝ Սմբատ Բագրատունւոյ եւ արքունի բժշկապետին առաջնորդու-

Թեան տակ արքունիքը գումարել տուած սինոդին մէջ՝ որուն ներկայ էր Երուսաղէմի գերեալ պատրիարքը՝ Չաքարիա, Խոսրով Ապրուէզ՝ միաբնէութիւնը Պարսից պետութեան մէջ պաշտօնապէս ճանչցաւ (Սեբ. 121—123), երբ Երուսաղէմի պատրիարքը — ուստի այն եկեղեցին որուն հաւատարին վրայ կը կաթնէին նախասիրութեամբ վիրքը, — ֆաղկեգոնի ժողովոյն հակառակ վճռեց:

Երբ Հերակղ իր երկրորդ պարսկական արշաւանքին Ատրպատականէն կը դառնար եւ Աղուանից, Արաց եւ Հայոց երկիրներուն մէջ ձմեռել կ'ուզէր (624)՝ այս երկիրներուս իշխաններուն եւ մեծերուն գրեց որ ինքնակամ գան զիմաւորեն զինքը, բնդունին եւ ամբողջ ձմեռն իր բանակն եւ զինքը խնամեն. ապա թէ ոչ զիրենք հետեանոններու տեղ պիտի դնէ իրենց բերդերը պիտի գրաւէ եւ երկիրներն իր բանակներով պիտի բռնէ: Սակայն կ'երեւայ թէ այս սպառնական հրաւերը նոյն իսկ Աղուանից վրայ մեծ ազդեցութիւն մը չէ ունեցած. Հմմտ. Մ. Կաղանկ. Բ. Ժ. էջ 237, տպ. Շահնազարեանի. Մ'ականդեան, Beiträge zur albanischen Geschichte, էջ 38 յջ.: Այսու հանգերձ յաջորդ տարին Լազերէն եւ Ապխազներէն դատ վիրք ալ անոր բանակին մէջ էին իբրեւ զինակից (Թէոփան. էջ 309, 14—15). բայց երբ Հերակղ եւ ճերու Խաբան՝ Խազրաց կամ արեւմտեան Թրքաց իշխանը՝ վրական մայրաքաղաքը Տփղիսը պաշարեցին, բնակիչներն հաստատութեամբ Պարսից կողմը բռնեցին: Հմմտ. Մ. Կաղանկ. Բ. Ժա. 211. Մանանդեան, անդ, 42—44: Ինչպէս որ Մ. Կաղանկատուացեոյ տեղեկութենէն կը քաղուի՝ երբ ճերու Խաբան եւ անոր որդին Շաթ՝ բերդը առնելու կ'աշխատէին, ներսը հրամանատար էր պարսիկ մարդպան մը, որուն օգնական էր տեղացի իշխան մը: «Աձին եւ գերկոսին իշխանան, զմի իշխանն պետ կողմնակալութեան Պարսից, եւ զմիսն՝

ի բուն բնակչաց իւրոց, ի տոհմէ բնակչաց աշխարհին Վրաց, զերկոսեանն ունելով: Որք իբրեւ ածան ձերբակալք առաջի թագաւորին՝ (Ճերու խաբանայ) հրամայեաց փորել զաշս նոցա փոխանակ զի կոյր նկարեցին զպատկեր նորա ի նախատել նոցա զնա: Եւ դառն շարշարանօք հեղձամահ արարեալ զնոսա ողջոյն, այլ եւ վարեցին զմորթ նոցա յանգամոց նոցա. եւ պրկեալ, կանգնեալ, լցեալ զնոսա խոտով՝ կախեցին ի վերուստ զպարսպէն,» (Մ. կաղանկ. Բ. ԺԳ. 263—264): ԳԺբախաաբար այս երկու իշխաններուն անուաները չեն հաղորդուիր, սակայն եթէ կարելի է ամենափոքր վստահութիւն մը տածել ժամանակագրութեան տեղեկութեանց, այն ատեն խաղրաց արքայէն գլխատուած Վրաց իշխանով՝ միայն Ստեփանոս Ա. կրնայ իմացուիլ (տես վարը էջ 91, ծն. 11): Երբ կաւատ Բ. Հերակղի հետ խաղաղութիւն կնքեց եւ խոսրովի եւ Մօրիկի ժամանակ դրուած սահմանները վերստին հաստատուեցան, (Սեբ. 101) Վրաստան գարձեալ Հուռմոց ձեռքն անցաւ: Մցխեթայ Ս. Խաչի եկեղեցւոյն արեւելեան պատուհաններու վրան խուճուրի գեղեցիկ տառերով եղած արձանագրութեան մը մէջ՝ Ստեփանոս Քարթլիի պատրիկ, Ատրներսեհ հիւպատ եւ Գեմեար իրենք զերենք զանազան սրբոց եւ հրեշտակապետաց պաշտպանութեանը կը յանձնեն: Բրոսէ (Hist. de la Géorgie, I, 232, ծն. 1) կը համարի թէ այս անձինքներս են Ստեփանոս Բ. եւ անոր հայրը Ատրներսեհ Ա. (ուղիղ Բ.) յետոյ Գեմեար՝ Ստեփանոս Ա. նոյն եղբայրը (Hist. de la Géorgie, 224) եւ երկրպագելի Ս. Նշանի եկեղեցւոյն կառուցանողը: Ռահզադի դէմ մշած պատերազմին մէջ (627) Հերակղ պարսկական Վրաստանի Βαρσαμούσγης իշխանը գերի բռնեց. (Թէոփան էջ 319, 19 «Ըմբռնեցաւ կենդանւոյն վարսամուսէս իշխան Վրաց, որք էին բնգ. Պարսից [եւ] Հուռմոցեւոց»): Կարծեմ՝ քնդդիմութիւն պիտի չգտնեմ եթէ սա

կարծիքը յայտնեմ թէ Βαρσαμούσης ձեւը սխա-
 լագրութիւն մըն է *Baramu <a> σούσηςէ =
 վահրամ-Աջուջայ ուստի եւ հոս առջեւնիս ունինք
 Գուգարաց Բղնաշի մը: Մովսէս Ուտեցին իր
 Աղուանից պատմութեան մէջ երկրորդ Ասորներուն
 մը ունի: Տիգփոնի առումէն ետքը Զուանշէր
 Աղուանից սպարապետը Պարսից դէմ ապստամբե-
 ցաւ եւ զանոնք Պերոզպատ եւ Կապիճան գա-
 լառներուն մէջ՝ Կուր գետի հիւսիսային կողմերն՝
 զարկաւ. յետոյ Վրական սահմաններուն վրայ
 դադար բրաւ: Եւ անդ մեծապատիւ այրն Ատր-
 ներսէ՝ Իշխան աշխարհին, որ երբեակ գահսերե-
 ցութիւն (πρωτοθρονία) ի Հռոմայէցոց թագա-
 ւորութենէն ունէր, դայր առ նա. եւ իւրովի
 պատէր զվերս նորա. եւ զմեծ քաջութեան նորա
 ղյաղթութիւն քաջութիւն համարեալ: Զուան-
 շէր յետոյ օգնութեան կ'առնու վրական բանակը.
 Մ. Կաղանկ. Բ. ԺԹ. 295. Հմմտ. Բրոսէ, Hist.
 de la Géorgie, I, 231, ծն. 7. Յաւելուած,
 էջ 476: «Երբեմն զաներեցոն ինն» բացատրու-
 թիւնը կը ցուցնէ բացայայտ թէ Վրաց իշխանը
 կայսերմէ երեք պատիւ ստացած էր, որոնց մէջ ան-
 շուշտ առաջին տեղին կը բռնէր Կիւրապաղատու-
 թիւնը: Ակնյայտնի է որ Ժամանակագրութիւնը
 հոս ալ երկու Ատրներսէնները ի մի ձուլած է: Վա-
 խուշտի Ատրներսէն առաջնոյն կառավարութեան
 համար տուած Ժամանակը (619—639) բնական է
 որ Մ. Կաղանկ. ւոյ տեղեկութեան առջեւ ընդու-
 նելի չէ. եթէ անոր կառավարութեան սկիզբը
 հաշուենք Հերակղ կայսեր Տփղիսի պաշարման
 ուղիղ թուականէն (627), այն ատեն իրեն վերա-
 գրուած 20 տարին զմեզ մինչեւ 646/47 կը հաս-
 ցնէ: Վրական ուրիշ իշխանի մը կը ծանօթանանք
 Յ. Կաթողիկոսի Պատմագրութեանը մէջ. «Յա-
 ւուրս սորա (Իսրայէլ Կաթողիկոսի 669—678)
 ղԲստոսիայ ոմն զօրագլուխ զօրուն Տաճկաց որ ի

Հայք՝ վանեալ վասնէ կոտորմամբ սաստիւ յնը-
 սին իշխան Արաց՝ փախստեայ զնա արարեալ»
 (Յովհ. Վաթղ. 53): Այս ներքէնը կը յիշուի նաեւ
 Սոկրատի Եկեղեցական պատմութեան հայ թարգ-
 մանութեան նախաբանին մէջ. «Յառաջ քան զու-
 թուտասն ամ ի թարգմանելոյ Փիլոլինի զգիրսդ
 զայդ Սոկրատայ զԵկեղեցական պատմութիւն»,
 թարգմանեալ էր արասուն Գրիգորի Չորոյփորեց-
 ւոյ թարգմանի՝ ընդ փառաւորս յիշելոյ ներսեհի
 վրաց իշխանին փեսային Վամարականաց, զգիրս
 Պատմութեան վարուց Սրբոյն Սեղբեստրոսի եպիս-
 կոպոսին Հռովմայ» Սոկրատ. Էջմ. ներքն. էջ ԺԷ:
 Սեղբեստրոսի վարուց թարգմանութիւնը կա-
 տարուած է 696էն ժր. տարի յառաջ, ուրեմն
 678ին համա. Գր. Խալատեանց, Մովսէս Խորե-
 նացու նորագոյն աղբիւրների մասին քննադատա-
 կան ուսումնասիրութիւնք, վիեննա 1898,
 էջ 5 յջ.: Խաղբաց գէմ կռուոյ մը մէջ 685ին
 ինկան Գրիգոր Մամիկոնեան, Հայոց Իշխանը,
 վրաց եւ Աղուանից Իշխանները (Ղեւոնդ 35,
 Ստ. Ասողկ Բ. Բ. 100): Գար մը ետքը Մուսա Բ.
 ալ-Մահդի Խալիֆան (3 Օգոս. 785 — 15 Սեպտ.
 786) վրաստանի Իշխանը անգթութեամբ սպան-
 նեց (Ղեւոնդ 200, համա. Բրոսէ, Hist. de la
 Géorgie I. 253, ծան. 3): Ասիկա հաւանակա-
 նագոյնս նոյն է Մարտիրոս Արշիլ թագաւորին
 հետ, որ Չիչում ոստիկանին — նաեւ Ասիպ
 կ'անուանուէր — ժամանակ մարտիրոսական մա-
 հուամբ մեռաւ: Վասն զի այս ոստիկանով ըստ
 Զուանշէրի էջ 103, ուր երբեմն Չիչնաում
 Մահդիի որդի կ'անուանուի, իսկ երբեմն «Չիչ-
 նամ որ նաեւ Ասիմ կը կոչուէր» կարելի է
 միայն Խուզայմա Բ. Խաղիմը հասկնալ որ Մուսա
 Բ. ալ-Մահդիի ժամանակ Հայաստանի ոստի-
 կան էր եւ Ղեւոնդէ 195, 200, խաղմ կը կո-
 չուի (տես վերը էջ 41—42):

Իշխանք Վրաց

5. Ատրնեքոսէ Ա. $\left\{ \begin{array}{l} 594-598^9 \\ \text{Վաչան} \\ \text{Բզրմեհ} \end{array} \right.$

6. Ստեփանոս Ա. Պատրիկ
 Բարթոլոյ փնջեւ 628¹¹
 Ատրնեքոսէ Հիւսպատ 12
 Պեմետր 12

7. Ատրնեքոսէ Բ. Աիւրապաղատ 627ին,
 645/46, Հերակղէ գրուած 13

8. Եւերոսէ, փեսայ Աամեքրականաց
 678ին կիլիկիայ Խաղրաց դէմ 685¹⁵

Ատրնեքոսէ (Գ) Աիւրապաղատ եւ
 Երիսթաւ ֆարթի

Եւերոսէ	Գուսար, ամե.
Երիսթաւ	Գուրգէն Երիսթաւ
772ին ¹⁴	
	Ստեփանոս
	Երիսթաւ ֆարթի
	785/86 ¹⁴

Բղնաշխը Գուգարաց

Վաչրամ, Իշխան Հռոմէ-
 ազան Վրաստանի¹⁰

Վարամ <ա> շուշիս, Իշ-
 խան պարսկական Վրաս-
 տանի 627¹²

(Վաչրամ Աիւրապաղատ)¹⁵
 Գուսար¹⁵, ամե.

Մարզպանք

1. Գուրգէն, հաւատքի համար կաւատէ նեղուելով՝ Յուստինիանոս Ա. կայսեր պաշտպանութեան կը դիմէ. Յոյներէն բաւական օգնութիւն չգտնելով, իր բոլոր ազնուականաց, կնոջը, որդւոցը եւ եղբայրը հետ Լազիստան անցաւ: Յետոյ Ալիք Բիւզանդիոն կ'երթան. Պրոկոպ, Պարսկ. Ա. ժբ, էջ 56, 22—58, 14. հմտ. Բ. իբ, էջ 282, 17:

2. Պիրան-Վ շնասպ, Միհրանական տնէն, մարդպան Գուրգանի եւ Ասանի, քրիստոնեայ կը դառնայ՝ Գրիգոր անուամբ եւ կաւատի Լ. բդ տարին = 517/18 վար կ'առնուի. երեք տարի վերջը 520, 21 կը վերահաստատուի. Յոյներէն գերի կը ըննուի. Խոսրովի երրորդ տարին (533/34) խաղաղութեան ատեն Պարսկաստան կը դառնայ եւ իր նախկին գաւառին մէջ շարժուի կ'առնուի. բայց մոգերու ջանքերով վար կ'առնուի. կը գլխատուի Խոսրովի ժ. բդ տարին (540/41: G. Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer 78—86:

3. 533ի խաղաղութեան դաշանց ժամանակ այսպէս կը գրէ Պրոկոպ. «Վրաց կամաց ձգուեցաւ, որ եթէ կ'ուզէն Բիւզանդիոն մնան կամ հայրենիք դառնան. անոնցմէ շատերը մնացին, իսկ ուրիշներն հայրենի վայրերն դարձան» . Պրոկոպ. Պարս. Ա. իբ, էջ 113, 21: Պերանիոս՝ Գուրգէն թագաւորին երէց որդին (կամ եղբայրը?) «Ամուսնոյն, եղբարց եւ որդւոցը հետ, որոնց երիցագոյնն Պերանիոս էր» Պրոկ. Ա. ժբ, էջ 58, 8—9. «Պերանիոս, Վրաստանէն որ Մարաց մօտ է, Վրական արքունի տնէն՝ Պարսից անհամբոյր բարուց պատճառաւ, յառաջուրնէ Հռոմայեցոց ապաստանած էր» . Պրոկ. Վրան գոթական Պատերազմին. Ա. Ե. էջ 26, 12: Իբրեւ Հռոմայեցի ղորավար 537ին եւ 538ին Խտալիա արեւելեան Գոթաց դէմ կը կռուէր (Գոթ. Ա. Ե. 26: 12. Բ. ա. էջ 146, 11, ժթ. 221, 10) 543 եւ 544ին Հայաստանի մէջ (Պարս. Բ. իգ. էջ 262, 4. իե. 267, 13. իգ. էջ 270, 18. 272, 11. իե. էջ 279, 17) եւ 544ին. որսորդութեան ժամանակ դժբախտ արկածի մը զոչ

կերթայ. Բ. իր. էջ 280, 16: Անտարակոյս Պիրան-
Վշնասպի ի պատիւ անուանուած է:

4. Հռովմէական զօրավար յիտալիա 542ին Գոթ.
Գ. զ. էջ 302, 18. է. էջ 305, 13, 16:

5. Հռովմէական զօրագլուխ յիտալիա 547 եւ
552, Պրոկ. Գոթ. Գ. ի. էջ 391, 14. Գ. իզ. էջ
597, 6, 12. յք. էջ 633, 17. 634, 3, 6, 9, 11.
Հմմտ. Lebeau—Saint-Martin 9, 162, 243:

6. Ըստ Պրոկ. ի (Պարս. Բ. իր. էջ 282, 16—283, 2)
Պարսիկները 550ին Գուրգէն թագաւորին փախուտէն
ետքը՝ թագաւոր ընտրելու իրաւունքէն զրկեցին զՎրա-
ցիները. «Անոր համար ալ այս բարբարոսաց ազնուա-
կանութիւնը իրենց Գուրգէն թագաւորին հետ Հռով-
մայեցւոց ապաստանեցան . . . իսկ Պարսիկները զանոնք
թագաւոր ընտրելու իրաւունքէն զրկեցին: Վերք Պար-
սից սիրով չէին հպատակեր եւ երկակողմանի կասկա-
ծով եւ անվստահութեամբ կը նայէին իրարու: Պար-
սիկք անտեղիակ չէին թէ իրենք Վրաց անտանելի էին
եւ թէ կարճ ժամանակէն այս բանս երեւան պիտի ելլէր,
եթէ կարենային անոնք առիթ մը ձեռք բերել»: Այս
կը համաձայնի Էւստաթէոս Մցիսեթացւոյ վկայարանու-
թեանց, որոնք պարսիկ մարզպանին քով հասնելու մը
կը ճանչնան. եւ դաւձեալ ասոր կարելի է համաձայն-
ցընել Չաքարիա հռետորը (Ահրէն-Վրէ-էր, էջ 253,
3—5) որ կը գրէ թէ Գուրգան՝ Պարսից թագաւորին
հպատակ ըրիստոնեայ Գոնարէր մը ունէր: Անոր հա-
կառակ Մաղաղաս էջ 429, 15. Յուստինիանոսի կա-
ռավարութեան սկիզբը լբրեւ ժամանակակից՝ Վրաց
Բագարէր կը յիշէ Չաքարէրու. իսկ թվոգրան. էջ 2. 6,
6—14 ամ Սշ. 6027ին = 535. ուրեմն Խոսրովի դա-
շինքէն անմիջապէս ետքը այսպէս կ'աւանդէ. «Այն
տարին Վրաց Չամանարոսս թագաւորը Յուստինիանոսս
բարեպաշտ ինքնակալին եկաւ ի կոստանդինուպոլիս՝ ա-
մուսնոյն եւ բովանդակ արքունեաց հետ եւ խնդրեց որ
Հռովմայեցւոց զինակցութեան եւ բարեկամութեան

մէջն ընդունուի: Ինքնակալը ազաշանքը կատարեց եւ զինքը ու իշխանազունները բարձր պատիւներով պատուեց. . . . եւ այսպէս ինքնակալը զիրենք դարձեալ իրենց թագաւորութեան երկիրը զրկեց: Եթէ Մարազասի տեղեկութիւնն չըլլար, կարելի էր Չամանարտորդ Գուրգէն թագաւորին մէկ եղբայրը համարիլ եւ ընդունիլ թէ խաղաղութեան դաշնագրութենէն ետքը Վրաստան դարձած եւ Պարսիկներէն ազգապետ (Տուշ-տիւ) գրուած ըլլայ:

7. Տես վերը էջ 74:

8. Թէոփ. Բիւզ. Phot. bibl. cod. 64: Ըստ Սեբ. ի 26 Հայոց (եւ Վրաց) ապստամբութիւնը Խոսրովի 41րդ տարին կ'իյնայ (2 Յուլ. 571 — 30 Յուն. 572): Աւելի ուղիղ թուական կու տայ Ստ. Ասողիկ Բ. ք. էջ 84. Վարդան Մամիկոնեան բռնչիւր Սուրէն մարդպանը կը սպաննէ Խոսրովի 41րդ տարին = Յուստինանոսի (Յուստին Բ.) եթներորդ տարին, Արեգ ամսոյ 22ին, Փետրուարի երեքշաբթի մը, ուստի եւ 572ին: Հմմտ. Գիւլորիէ, Recherches sur la chronol. armén., էջ 206. Յուստինանոս Բ ի եթներորդ տարին կը ղնէ նաեւ Թէոփիլ. Sim. 3, 9, 4. 9. Սակայն ապստամբութեան շարժումը կանուխէն արդէն սկսած ըլլալու է. Հմմտ. Յովհանու արքայի Բիկլարեան Վանաց' Ժամանակագրութիւն ապ. Մոմսէն. Chron. minora II, 211, Mon. Germ. Auct. antiquiss., Հար. XI յամն 1 եւ 5 Յուստինոսի Բ. ի. Եւազր. Պատմ. եկզ. Ե. է. Գրիգոր Տուրոնացի Գ. թ, Սէն-Մարտէն Լըբոյի քով 10, 79 յջ.:

9. Տես վերը էջ 77/78:

10. Տես վերը էջ 81:

11. Տես վերը էջ 84: Արձանագրութեան երեք անձերը կը նոյնացընեմ Ստեփանոս Ա. անոր Գեմետր եղբոր եւ Ատրնեբսէհ Բ. ի' անոր յաջորդին հետ:

12. Տես վերը էջ 84:

13. Տես վերը էջ 85: Ստեփանոս Բ. մթազարի Ժամանակը դեռ կարելի չէ ճիշտ որոշել. կ'երեւայ թէ

Ժամանակակից էր Յուստինիանոս Բ. ի եւ Մուհամմադը. Մրուանի:

14. Տես վարը:

15. Տես վարը: Ըստ այսմ՝ Կղարջեթի Վահրամ կիւրապաղատը՝ Ատրնբրեսի (Գ.) Կիւրապաղատին ժամանակակից կ'ըլլայ:

16. Տես վերը էջ 86 եւ վարը:

17. Տես վարը:

Եթէ Բրոսէի (Hist. de la Géorgie, Additions et éclaircissements էջ 153—155 եւ 161) այս աղբիւրներու համաձայն կազմած ճիւղագրութեան վրայ ակնարկ մը արձակենք, ամէնէն յառաջ աչքի կը զարնէ թէ Վարդան եւ Ժամանակագրութիւնը՝ հնագոյն հեղինակութենէ՝ Կոստանդնէ վկայուած վրական Բագրատունեաց՝ Դաւթի եւ Բերսաբէի մէկ որդիէն սերումը, գոնէ Կոստանդինէ յառաջ բերուած ձեւին մէջ չեն ծանչնար: Ուստի կ'երեւայ թէ Վիրք միջնանջրպետին մէջ իրենց անձաշակութիւնը գիտած եւ ազգատախտակին ժամանակագրական անհետեւութիւնը զգացած են. Բագարատ՝ Լեւոն Իմաստասէրէն (886—912) Կիւրապաղատի պատուով պսակուած Ատրնբրեսի (Գ) պապը, Դաւթի մը, որ Բերսաբէի բնական զաւակն էր, որդին պիտի ըլլար!։ Ուրիշ տարբերութիւն մը յայնմ է որ Կոստանդին Ատրնբրեսի հայրը Աշո֊ կ'անուանէ, իսկ Վարդան եւ Ժամանակագրութիւնը Դաւթի կը կոչեն: Ասոր հակառակ այս երկուքը ազգատախտակը Բագարատէն անդին կ'երկարեն հայ Բագրատունի Աշո֊ Քաջին ժամանակակից՝ Աշոտով մը, որուն կիւր Վրաստանէն էր, եւ որ ամիրապետէն Վրաստանը աւատ ընդունեցաւ եւ ամբողջ երկիրը նուաճեց, որուն վրայ Լեւոն Ե. էն կիւրապաղատի տիտղոս ընդունած ըլլալ կ'աւանդուի: Սակայն կայսեր օգնութիւնը ստանալու իր Զանքերը ապարդիւն

մնացին, վասն զի կայսրը նոյն միջոցին Միքայել Թոթովի դաւադրութեամբ զբաղած էր¹: Ասկէ ետքը Վարդանի եւ Ժամանակագրութեան ազգատախտակներն իրարմէ կը շեղին, մինչ առաջինը Վրական Բագրատունիները կը բարձրացնէ եւ հայ Բագրատունեաց հետ կը միացնէ. ժամանակադիրը կը ջնայ թերակազմ աւանդութեան թելագրութեանց հետեւելով, Կոստանդինի պէս, ծննդագրութիւնը շարունակել:

Հատ. Կոստանդինի Գաւթի եւ Սպանդիատ եղբարց Վրաստան մտնելէն մինչեւ իր ժամանակը (952) 400 կամ 500 տարի անցած էր²: Ասոնք անձամբ կամ Գաւթի սերունդը — Սպանդիատ անղաւակ մեռաւ — յետոյ Հերակղ կայսեր հետ միացան անոր պարսկական արշաւանաց միջոցին, եւ պարսկական շատ մը քաղաքներ եւ երկիրներ նուաճեցին՝ Պարսից Հերակղէ ունեցած երկիրդին ազդեցութեամբը: Կոստանդինի համաձայն Վրական Բագրատունիք կը պարծին նաեւ իրենց Աստուածամօր հետ ունեցած ազգակցութեան կապին համար, քանի որ իրենք ալ Անոր նման Գաւթի ցեղէն էին (էջ 197, 19 յջ.): Այս ակնարկութիւնները ժամանակագրութեան հեղինակներուն քով անպտուղ գետնի վրայ չեն ինկած. Բագրատունեաց անմիջական նախահայր Գաւթի բնական զաւակը չէր, այլ Սողոմնն անուն հրեայ մը, որ իր քսանուութերորդ նախասերնդեամբը սրբոյն Յովսեփայ Աղէովպայ եղբոր հետ ազգականութեան կապ մ'ունէր: Անոր եօթն որդիներն Եկղեց (Եկեղեցաց) դաւառը Ռաքէլ թագուհւոյն եկան, որմէ յատուկ ձեռօք մկրտուեցան: Ասոնցմէ երեքը Հայ թագաւորական տանց հետ ընտանեկան կապեր հաստատեցին, մինչ մնացեալ չորսը, որոնց

¹ Բրուէ, Additions et éclaircissements էջ 160:

² De admin. imp. Խե, էջ 199, 8 յջ.:

մէջէն էր Գուրամ կամ Գուարամ Վրաստան ան-
ցան: Այս միջոցիս Բակուր Գ. Թագաւորը (557 —
570 բնա Վախուշտի) անշափահաս զաւակներ ձգե-
լով մեռած էր: Ասոր վրայ խոսքով Ապրուէզ, որ
իր Որմիզգ հօրմէն՝ Պարսից արքայէն՝ Ռանի (Ա-
ռանի) եւ Մովսկանի կառավարութիւնն ընդու-
նած եւ իր կայանը Պարտաւ հաստատած էր,
Վրացի երեսմաներու հետ բանակցութեան մէջ
մտաւ, որոնք իրենք զիրենք (Վրաստանի Թա-
գաւորէն) անկախ հրատարակեցին եւ խօսքով
հարկ վճարեցին. մինչդեռ Բակուրի որդիները Ա-
խսեթի լեռնազաւառները քաշուեցան, իսկ Վախ-
տանգի որդւոյն՝ Միհրդատի որդիները՝ որոնք
Աղարջեթի եւ Ջաւախեթի տէրերն էին, Աղարջեթի
ժայռերն ամրացան: Բայց երբ Թուրքերն Պարս-
կաստան յարձակում մ'ըրին, իսկ Յոյներն Միջա-
գետքէն զՊարսիկներն վանեցին եւ Պարսկաստան
մտան, խօսքով Ապրուէզ ստիպուեցաւ Վրաստանը
եւ Հռովմը (Հռովմէական տէրութիւնը) թողուլ՝
հօրը օգնութեան հանելու համար¹: Այն ատեն
Վիրը յոյն կայսերմէ իրենց Թագաւոր մը խնդրեցին
եւ ստիկա իրենց տուաւ Միհրդատի քեռորդին
Գուարամը² որ Աղարջեթի եւ Ջաւախեթի կը տի-

1 | խօսքով իր հօրը հանդիպած արկածին ժամանակ
դեռ երիտասարդ մըն էր ինչպէս որ յայտնի է. Վահրամ
Չորինի ապստամբութեան ծագելուն՝ հօրմէն Աորպատա-
կան փախած էր, բայց իշխանաց ապստամբութեան լուրն
առնելուն պէս Տիգրան դարձաւ եւ արքայական պատիւ
պահանջեց: Առտի եւ ինչպէս կ'երեւայ խօսքով եւ զար-
ձած էր ո՛չ թէ իշխաններէն վար առնուած եւ բանտար-
կուած իր հայրն ազատելու, այլ զՎահրամ Չորին կան-
խելու համար. հմտաւ, Nöldecke, Gesch. der Perser und
Araber, էջ 273, ծան. 1: Առանի եւ Մովսկանի կուսա-
կարութիւնը երեւակայութեան գիւտ մըն է պարզապէս: |

2 | Գուրամ կամ Գուարամ զուտ Վրական ձեւը
միայն կրնայ ըլլալ հայ Առաքիլ — Պուրամ, պարս.

րէր, եւ անոր կիւրապազատի տիազոր տուաւ: Ասոր ժամանակը կ'իյնայ Վահրամ Չորինի ապստամբութիւնը: Խոսքով զայն Մօրիկի օգնութեամբ յաջողութեամբ նուաճելէն ետեւ, Վրաստանը անկախ ճանչցաւ եւ Գուարամ այնուհետեւ Յունաց գերիշխանութեան տակ թագաւորեց¹: Վախուշտ ասոր կառավարութիւնը 575—600 արհնեբու մէջ կը դնէ, բոտ այսմ' ալ անոր Վրաստան դալը կոստանդին Ծիրանածնէ իրապէս 400 տարի յառաջ կ'իյնայ: Անոր որդին Ստեփանոս Ա. Փոկասի եւ Հերակղի (600—619) ժամանակակիցը, ինք զինքը թագաւոր չէր կոչէր այլ երիսթաներու մթավար միայն: Երբ Խոսքով Մօրիկի վրէժն առնելու համար, Փոկասի գէմ ելաւ, Ստեփանոս Յայներն թողուց եւ Խոսքովի կողմը բռնեց եւ Պարսից գերիշխանութեան տակ բովանդակ Վրաստանի կ'իշխէր՝ Տիգրէս նստելով: Երբ Հերակղ արեւմտեան թուրքերուն օգնութեամբ Տիգրսը պաշարեց, Ստեփանոս քաջութեամբ պաշտպանեց քաղաքը, սակայն կռուոյ մը մէջ ինկաւ, որուն վրայ կայսրը տիրեց քաղաքին² եւ զայն Բակուր Գ. թագաւորին Ատրնեքսէ հանուամբ որդւոյն յանձնեց. որ կախեթի երիսթաւն էր, եւ զինքը Վրաստանի մթավար անուանեց: Հերակղ ուրիշ երիսթաւ մը ջիւղա՝ հոն թողուց կալա բերդը պաշարելու համար, եւ ինքը Տիգրոնի գէմ արշաւեց: Զփրջու քանի մ'օրէն գրաւեց բերդը³. ասով

¹ Warrämte եւսմ' Wurhränt յն. Γοργάνης (Թեոդորեա. Գամ. եկդ. Ե. 16, 17.) Wrrhran յն. հայ. Աթաւնէս = Ούργάνης. Հմմտ. Nöldecke, Gesch. der Perser und Araber, էջ 46, ծան. 3, Meillet, Revue crit. 1 80. Կիս 1896, Թ. 213:

² Hist. de la Géorgie, էջ 214 յլ.:

³ Տես վերը էջ 83/84:

⁴ Այս յարակէպը (Episode) կը պարտինք Հերակղի պարսկական արշաւանքին եւ սկիւթական Զփրջու խաբանի

Յոյներն ձեռք բերին վերստին Վրաստանի երկիրները, Սպեր, Կլարջեթի եղևներն եւ ծովեզոր: Ստեփանոսի որդիները Կլարջեթի լեռներուն մէջ մնացին, մինչ Ատրնեբսեհ Վրաստանի մնացեալ երկիրներուն կը տիրէր, առանց սակայն թագաւորի տիտղոս կրելու: Երիւթաւներն իրենց երկիրները իրենց որդւոց ժառանգութիւն կը ձգէին, թէեւ Ատրնեբսեհի գերիշխանութիւնն ալ կը ճանչնային¹:

Հայոց պատմութեան մը, զոր Զաւարուէի ուսներէն թարգմանութեամբ հրատարակած է Տփղիսի եկեղեցական թանգարանի մէջ եղած՝ 1042ին գրուած մագաղաթեայ ձեռագրէ մը (Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племень Кавказа, Տեօր 27, Տփղ. 1900, Մասն. Ա. էջ 1-64, Բնդ. 8-61): Սակայն դժբախտաբար ձեռագրին ճիշտ այն կտորը, որ Զերզու խաբանի արչաւանքին կը հայե թղթերու անկմամբ կորսուած է: Հմմտ. Զանաշուի, СБОРНИКЪ, Տեօր. 35, էջ 129 յջ.: Բայց կերեւց թէ հոն «սկիւթական խաբանին» անունը չէ յիշատակուած, էջ 51-53 պարզապէս «Թուրքաց իշխան» եւ անգամ մըն ալ «սկիւթական խաբան» կը կոչուի:

Ճամանակագրութեան Զերզու խաբանի արչաւանքին պատմութիւնը՝ ակնյայտի շօշափումներ կը ցուցնէ Մ. Կաղանկատուացւոյ Պատմութեան հետ. Բ: Ժ-Ժբ, Ժդ, էջ 24-27, 28-30 ||: Բրոսե արդէն մտադիր եղած է (Hist. de la Géorgie, էջ 228, ծն. 1, 226, ծն. 3, 5, 225, ծն. 4) որ այս Զէքու-Մոփս. Կաղանկի Զէքու-Խաբանին եւ Թեոփանի Հիւթիին կը համապատասխանէ: Ասիկա նոյն աստեղուան արեւմտեան թուրքաց Թոնգ ճափու-Խաբանն է: Տփղիսի Զերզու խաբանէ եւ անոր Շաթ որդիէն առումը կը պատմէ Մ. Կաղանկ. Բ, Ժդ. 28-30. սեւ վերը էջ 83/84: Տփղիսի մօտ՝ Կալա բերդն անտարակոյս արաբացի աշխարհագիրներու Տփղիսի հանդէպ յիշած ܐܠܠܐ ܡܫܐ բերդն է:

1 Զուանչէր, Համառոտ Պատմութիւն Վրաց. Վեներակ 1884, էջ 96 յջ.:

Բայց Բագրատունեաց Վրաստան զազթելու զէպօրին ուրիշ խմբագրութիւն մ'ալ կայ: Ստեփանոս Բ.¹ Ատրնեքսեհ առաջնոյն (639—633 թառ Վախուշտի) որդին ու յաջորդը, որ նմանապէս Տփղիս կը նստէր, ստիպուեցաւ Արարացոց առջեւէն իր երէց որդւոյն՝ Միհրի հետ Էգրիս փախուիլ, ուր քիչ մը ետքը եկաւ նաեւ կրտսեր որդին՝ Արշիլ, արքունի գանձերն զանազան տեղեր, իսկ եկեղեցւոյ գանձերը Մցխեթի Սիոնի եկեղեցւոյն գործարարին մէջ ապահովեցրնելէն ետքը: Ստեփանոս Էգրիս մեռաւ: Մինչդեռ Միհր եւ Արշիլ եղբայրներն Էգրիս էին, Վրաստանի մէջ Հագարացի Մրուան-Քրու¹ էմիրն երեւան ելաւ. մինչեւ ծովը՝ Յունաց եւ Հայոց գաւառներն մտախի ու մտեղի քաղմութեամբ բանակով մը աւերեց, բովանդակ կաւկասը շրջեցաւ եւ Գարիալի եւ Գերբենդի դռներուն տիրացաւ: Երբ Վրաստանի բոլոր քաղաքներն աւերելէն եւ բաղմութիւ բերգեր գրաւելէն՝ ետքը՝ ապականիչ արշաւանքով Սամցխէէ, Արգուեթէ, Էգրիսէ, Մինգրիխայէ եւ Ափխազաց աշխարհէն անցնելով՝ Անակոփ ամրոցին առջեւն երեցաւ եւ զայն պաշարեց, Միհր եւ Արշիլ եղբայրներէն, որոնք անոր արշաւանաց միջոցին Էգրիսէ Ափխազիստան քաշուած եւ կոյսերական երիտթաւին՝ Լեւոնի քով ապաստան գտած էին, պարտութիւն² մը կրեց, որ սակայն Պիտիոսէ,

¹ Ե. յս անձնաւորութեան մէջ կը միանան Նախիջևանի դահիճը Մուհամմէա բ. Մրուան եւ անոր որդին՝ Մրուան բ. Մուհամմադը, որ յետոյ ամբապետ եղաւ:

² Մխիթար Այրիվանեցի այս դէպքը Ներսէհ Վասարականի (689—691) եւ Սողոմոն կաթողիկոսի (792/3) կառավարութեան միջոցին կը պատմէ (Մխիթար Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց. տպ. Էմֆն 1860, էջ 51): Հմմտ. Մխիթարայ աղբիւրը Սա. Առողիկ Բ. բ. էջ 72, 76. Յովհ. Վաթ. տպ. Երս. 140. Էմֆն սխալմամբ Տէր Սողոմոնը 696ին կը գնէ: Սակայն ինձի անհասկանալի է թէ ինչպէս Բրթսէ այս

Գուրխայե եւ Սպերե եւ գառնալու միջոցին եղե-
րագաւառին քաղաքներն ու ամրոցներն նուաճելու
արգելք չեղաւ: Միհր վերքէ մը մեռնելով՝ իրեն
յաջորդեց Արշիլ (668—718 ըստ Վախուշտի) որ
իրեն պահեց Եգրիսը, Սուանեթը, Թաւկուէրը, Վր-
գուեթը եւ Գուրխան, կը նստէր Յիխէ-Գ՝ջ ու
կուժաթիս, իսկ կղարջեթն ու միջին Մթիս լե-
թին իւր հանգուցեալ եղբօր բաղձանաց համա-
ձայն եղբորազօրիներուն ձգեց: Ասոնցմէ առաջինն
ամուսնացուց կղարջեթի եւ Զաւախեթի աէր
Գուարամ կիւրապաղապին հօրեղբօր որդւոյն կամ
թոռան հետ. երկրորդը Փերոյէ սերող բղեաշխին
հետ, որ Թրբալեթի, Տաշերի եւ Արցի (հայ.
Աշոց) մթավար էր. երրորդը Վախտանգ թագաւո-
րին մեծամեծներէն միուն՝ Ներսէհ Ներսէհեանի
հետ. չորրորդը Աարնեքսէհ Աարնեքսէհեանի հետ,
որ նախորդին հետ ի միասին՝ Վերին գաւառին
կամ Քարթլիի աէրն էր. հինգերորդը Վարազ-
մանի հետ, որուն կուսմանի երկիրը մինչեւ Քուր-
դիս-Խէվ տուաւ եւ որ Պարտաւի պարսիկ երիս-
թաւէն՝ Վախտանգ՝ թագաւորին մօրը հօրմէն կը
սերէր¹. վեցերորդը՝ Ռէվի գծով Միհրան թա-

եզրակացութեան կու գոյ թէ Միսիթար Արիվանցի այս
գէպը Հայոց ճԼ թուականին — 681, կը գնէ (Hist. de
la Géorgie I, 242, ծան. 2: „En l'an arménien 130 —
681 de J. C. les rois de Géorgie Artchil et Mibr battirent
Mourwan près de la citadelle d'Anacop^u etc.)»: Ուս-
թարայ ընդդէմը հոս ամենեւին տարեթիւ. չունի. եւ
Միհրի եւ Արշիլի յաղթութեան ժամանակին համար գրկթէ
հարիւր տարւոյ շտի խաղց անհրաժեշտ կայ: Արախան իշ-
խանաց փախուստը ամենէն կանուխ կրնայ կայ մ'ուսնելու
հայ նախարարաց՝ Նախիջևանի արկածին (705ին) հե-
տեւ. թիւնն էզոզ՝ փախուստին հետ (Ղեւոնդ. էջ 58) | *
1 Արիկա ապահովարար Արմաշահիներու անէն էր,
որոնք յետոյ իրենք զիրենք Վասրամ Չարիեհ կը սերեց-
նէին:

գաւորին սերունդէն Զուանշէր Զուանշերեանի
 Հետ եւ ասոր տուաւ Զուար, խերկ, ամբողջ
 Մթիուլեթը եւ Մանգղիս ձորը մինչեւ Տփղիս:
 Իսկ Ափխազիստանի կայսերական երիւթաւին՝
 Լեւոնի տուաւ իւր Գուրանդուխտ եղբորաղջիկը եւ
 այն թագը՝ զոր յոյն կայսրը Միհրան թագաւորին
 պարգեւած էր: Արշիլ իր բնակութիւնը Հաստա-
 տեց Եգրի մէջ մինչեւ Շորապան, բոլոր քաղաք-
 ներն ու բերդերն վերաշինեց, Գուրիայի եւ Յու-
 նաստանի սահմանին վրայ շինեց իր ամրոցը. այս-
 պէս անցաւ տասնուերկու տարի. Վրաստան դար-
 ձեալ Հոգի առաւ, բայց Մցխեթը դեռ աւերակ
 էր: Երբ Արշիլ թագաւորը Եգրիսէ գալով գաղար
 առած էր երբեմնի խիղար բերդին մէջ՝ իրեն եկաւ
 Գուրիթ մարգարէին սերնդէն մթափար մը՝ Ատր-
 ներսեհ անուամբ՝ Ատրներսեհ Աղյրին մէկ եղբորո-
 ղին, որուն հայրը Բագրատունեաց ազգական էր
 եւ Յոյներէն Սամխեթի (Հայաստանի) երկիրներուն
 մէջ իշխանութիւն մը ստացած էր, բայց Քրուի
 արշաւանաց միջոցին Աղարջեթի մէջ՝ Գուարամ
 Ալիւրապաղատին որդւոց քով ապաւինած եւ հոն
 մնացած էր: Այս Ատրներսեհն Արշիլ թագաւորին
 սա աղաչանքն ըրաւ. «Եթէ կ'ուզես, զիս քու աւա-
 տառուներէդ մին ըրէ եւ աւատ մը տուր ինձի, 1
 Թագաւորն իրեն Շուլաուէրը եւ Արտանը՝ շնորհեց:
 Ասոր վրայ Արշիլ Ասխեթ անցաւ, զոր իւր արքու-
 նականաց մէջ բաժնեց, անոնց ազնաւորութիւն
 պարգեւելով: Սաթմորի եկեղեցին շինեց եւ Գուա-
 րամ Ալիւրապաղատի — որ Վախտանգէ եւ անոր
 յոյն ամուսնոյն որդիներէն կը սերէր — դստեր
 Հետ ամուսնացաւ: . . . Այս միջոցին Սարակինոցը

1 Սամցիտէի մէջ. Հմմտ. Բրուէ էջ 249, ծն. 5.
 Խ. Խորենացոյ Աշխարհագրութեան մէջ Արտանը՝ Արտա-
 հան կը կոչուի, արարերէն ۱۱۶۵۱۱ کھام ۱۱۶۵۱۱ Բաւ.
 ԿՎՄ 1:

Ռանի (Առանի) մէջ զօրացած ու Գաղիբը (Խաղիբը) եւ Հայաստանը գրաւած էին. Մապամա Յունաց դէմ պատերազմ կը մղէր: Ատրնեբուհ Վոյրին երեք եղբորորդիները, որոնք իրենց հօրեղբոր աչքերն խարած էին՝ Տարօնէ Շակիկ (Շաքէ?) եկան, եւ հոն հաստատուեցան Արչիլի հաւանութեամբ, վասն զի Ռանի (Առան) շուրջը տարածուող Վուկասի երկիրն անաւերունջ էր¹: Հարեթի եւ Վախեթի մէջ հազիւ քանի մը հողի մնացած էր՝ թաւուաներու եւ անտառներու մէջ ազատելով, անոր համար ալ այս երեք եղբայրներն երկիրն մինչեւ Գուգուղա տիրացան²:

Տեղւոյս չէ պատմութեանս մանրամասնութեանց իջնալը. մեզի համար կարեւորն հոս այն է որ մատնանշենք այն իրողութիւնը թէ այս պատմուածքին անձանօթ է Գուարամ Վիւրապաղատին Բագրատունի եւ դաւթեան ծագումը: Բագրատունիներու Վրաստանի մէջ առաջին անգամ գահ բարձրանալու աւանդութեան երկրորդական ծագում՝ ունենալուն փաստը՝ միանգամայն վճռատու է այդ աւանդութեան պատմական արժէքին: Ասոր հակառակ շատ աւելի ճշմարտութեան մերձ է,

¹ Հմմտ. Ղեւոնդ էջ 170:

² Hist. de la Géorgie I, 232—250: Հայ թարգմանութեան այսչափս միայն ծանօթ է (Չուանչեր Վենետ. 1884, էջ 100—101) «Այլ ի խոցոյ անախ՝ մեռաւ Միհրն եւ թաղեցաւ ի Մցխիթա. եւ դագարեաց երկիրն ամս երկրասան:

Յաւուրան յայնոսիկ իշխան ոմն ի ամսէ Գաւթի մարգարէի, Ազրնաս կոչեցեալ, եկն առ Արչիլն որ լիալ էր ի Հայս, եւ դերեալ որդւովքն յայլազգեացն, եւ զերձեալ անախ խնդրէր ի նմանէ տեղի բնակութեան. եւ ետ նմա զՌիշա եւ զՀոսեբ եւ զՄսօնէ: Եկին եւ ի Տարնոյ եղբարք երեք եւ բնակեցան մինչեւ զՔաղզազ հրամանաւ Արչիլն: Եւ կինն Արչիլն էր դուստր Գորոմայ կիւրապաղատին, ի զարմացն Վախտանգայ արքայի:»


ինչպէս այժմ՝ Երեւան կ'ելէ, վրական բազրատունաց ծննդաբանութիւնը Ատրնեբոսէ (Գ) դէպի վեր մինչեւ Աշոտ կիւրապաղատ: Եթէ նոյն իսկ յինչեալ աղբիւրներուն յարաբերական հնութեան իրենց աւանդածներուն ծագման համադր ժամանակ մը՝ համապատասխանելու ըլլայ, սակայն եւ այնպէս նիւթապէս կոտանդին կայսեր պատմուածքը հնագոյն նկատուելու է, ուսկից յինքենէ կը բխէ ճիւղադրութեան Բագարատ Ա. նէն դէպի վեր յաջորդական շարքը: Ուստի պիտի ստիպուինք ընդունիլ թէ վերջնոյս հայրը՝ ըստ կոտանդինի՝ Գաւիթ — Բերսաբէի բնական զաւակը — եւ Ատրնեբոսէ (Գ) կիւրապաղատի հայրը Աշոտ՝ տոհմածառին կրտսեր անդամին վրայ տեղերն փոխանակած են եւ այսու Աշոտ կիւրապաղատ մը ստացուած է: Բայց վերջնոյս նկատմամբ վարդանի տեղեկութիւնը եւ անոր ծննդաբանութիւնն այնպէս բնական կը ներկայանայ, որ նպատակեալ խարդախման վրայ խորհիլ կարելի չէ: Վարդանի տեղեկութիւնը ներքուստ կապ ունի՝ Հայաստանի Աշոտ Քաջ Իշխանին մասին հաղորդած տեղեկութեանց հետ, զորոնք անտարակոյս Շապուհ Բագրատունւոյ պատմութենէն քաղած է, ուստի եւ զանոնք յախուռն անտեսել ու արտաքսել ներեալ չէ: Սակայն ասով իսկ հաւանական կը դառնայ թէ՛ Աշոտ կիւրապաղատի հայրը տեղեկութիւններն ալ միեւնոյն աղբիւրէն ըլլալու են, ուսկից ինքնին կը հետեւի թէ դաւթեան աղնուաղարմ սերնդաբանութեան ստեղծումը Շապուհ Բագրատունիէ ետքը, ըստ այսմ ալ թ. դարու վերջէն ոչ յառաջ կատարուած է՝ եւ կամ առնուազն Շապուհի դեռ եւս անծանօթ եղած պիտի ըլլայ¹: Ուրեմն վերն նշանակուած

¹ Ստոյգ է որ թովմ. Արծրունի այս սերնդաբանութիւնը կ'ենթադրէ, սակայն ինքը կոտանդին ճիւղա-

խորդախումբն ի հակառակէն՝ դաւթեան ծննդաբանութեան հեղինակէն կատարուած ըլլալու է. իսկ Ատրնեբոս հիւրապաղափ հայրը՝ Գաւիթ այդ խորդախումբն իբրեւ մեկնակետ ծառայած է:

Ըստ այսմ մէկ կողմանէ Աարդանի եւ Ժամանակագրութեան եւ միւս կողմանէ Աոստանդինի ծննդաբանութեան աղերսը հետեւեալն է.

Աարդան եւ Ժամանակագիր Աոստանդին Օլերանսծին



Այս տեսութիւնը կատարելապէս կը ստուգուի Աարդանի տեղեկութեանց վերլուծումովը, որով այս արդիւնքիս կը հասնինք թէ՛ Աարդան արաբացի ամենալաւ մատենագրաց համաձայ-

նածին կայսեր ժամանակակից ըլլալով դուցէ թէ արդէն անկէ վկայուած աւանդակէպին տեղեակ էր: Աասպուրականի Աշոտ Արծրունի իշխանին մահուընէն ետքը ոչսպէս կը գրէ. «Եւ եկեալ ի մի վայր Գապիկ եւ Գուրգէն եղբարք համահարք եւ միոյ մօր ծնունդք, յերկուց քաջատոհմիկ դահակալութենէ Սենեքերիմայ եւ Գաւթի.» Թ. Արծր. Գ. իթ. էջ 251: Այս երկու եղբարց մայրը Աշոտ Ա. Բագրատունի թագաւորին դուստրը, Սոփիան էր:

1 Ժամանակագրութիւնը չունի:

նող սրանչելի տղբիւրէ մը կը քաղէ: Այսպէս կը պատմէ Ղարգան, էջ 76—78.

⁴ Բայց անկելոցն ի մեծ պատերազմին¹ մնացորդք՝ էին այսոքիկ. երկու որդիք Սմբատայ որդւոյ Աշոտի, որոց անուանքն՝ Աշոտ եւ Շապուհ. եւ Սամուէլի (Մամիկոնեան) եղբայր մի Շապուհ անուն. իսկ Մուշեղայ (Մամիկոնեան)՝ երկու որդիք եւ շորս դստերք. անդրանկին Շապուհ անուն: Որք անկան յերկիրն Վասպուրահան. զորս եսպան զերկոսին Մեհրուժան Արծրունի, որպէս թէ ի պատճառս հօրն նոցա եղեւ աղէտն մեծ. եւ մի ի քերց նոցա ետ զինքն յամուսնութիւն Զաւհի ումեմն Իամայելացոյ՝ թիկունս առնելով զնա: Իսկ որդիքն Սմբատայ Աշոտ եւ Շապուհ, հասարակ բաժանեցին զհայրենիս իւրեանց. եւ զի Զաւհայ յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց, եւ խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին², զայն առին յինքեանս Աշոտ եւ Շապուհ³. եւ ելեալք զկողմամբքն Շիրակայ՝ հարին զգօրսն Իամայէլի՝ որ անդ, եւ դրաւեցին յինքեանս զՇիրակ եւ զԱշոցք, եւ զգաւառն Տայոց: Եւ այսպէս ըստ բախտին ելեալ Աշոտի քաջի՝ շինէ զկամախ⁴, եւ բնակեցուցանէ ի նմա զընտանիս իւր. եւ ինքն նմանեալ նախնոյն իւրոյ Սմբատայ, որդւոյ Բիւրատայ իշխանի Սմբատաւանայ, որ է Բեբերդ ի Սպեր⁵ գաւառի: Քանզի յաւուր միում պաշա-

¹ Բագրեւանդայ ճակատն, 772ի Հրոտից ամսոյն. շմն. Daghbasean, Gründung des Bagraditenreiches 63:

² Երբէն ի վեր արդեօք Մամիկոնեանք Արշարունեաց մէջ կալուածներ ունէին:

³ շմն. Ստ. Ասողիկ, էջ 106. «Աշոտ որ Մասիկերն կոչիւր գանձագին արար զգաւառն Արշարունեաց յազգէն կամասրականաց, եւ զարքունիսն ի Վոգովտէ յԱրշարունիս փոխեաց»:

⁴ Տայոց մէջ:

⁵ Մ. Խոր. Բ. լէ.:

րեցին զնա թշնամիքն՝ մինչ կայր յաղօթս, եւ անսեալ՝ ոչ խափանեաց զխօսելն ընդ Աստուծոյ մինչեւ ցկատարումն, եւ ապա ելեալ ընդդէմ նոցա, կարէր յերկուս զգլխաւորն, որում անուն էր Լիպառոն Աբղլա, եւ հարկանէր իբրեւ արս հինգ հարիւր: Առ սա բողոք կայեալ ազգին Գնունեաց թափել զնոսա յԻսմայելացւոցն, որոյ երթեալ հաղար արամբ յԱղիովիտ գաւառ, եւ առ ինքն դումարեալ զամենեայն ազգն ախիւն իւրեանց տանի բնակեցուցանէ ի Տայս:

Յայնմ ժամանակի ազմկեալ Իսմայէլի ընդ միմիանս, հանգչէր երկիրս Հայոց, եւ սկսան զօրանալ ի իշխանքն մեր յիւրաքանչիւր իւր տեղիս: Եւ տայր ի իշխանն Իսմայէլի Աշոտի որդւոյ Ատրնեբսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Հայոց ի իշխանի՝ զերկիրն Վրաց, որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան. եւ կայսրն առաքէ նմա պատիւ կիրապաղատութեան: Իսկ Ջահայն ապստամբեալ յիւրմէ ի իշխանէն, գայ նստի ի Գուին բունութեամբ, որդւով իւր Աբղլայիւ: Եւ իբրեւ ետես զայն կիրապաղատն Աշոտ, առաքէր առ կայսրն Լեւոն օգնել նմա, եւ նա չէր պարապ. զի Միքայէլ ոմն ջանացեալ սպանանել զնա, եւ ոչ յաջողեալ գործոյն, այլ իմացեալ կայսերն՝ կամեցաւ սպանանել զնա, եւ ազաչեցեալ ի թագուհւոյն՝ մինչեւ անցցէ զատկին¹ օր, վասն որոյ եղաւ ի բանտի. եւ էր բանտապահն բարեկամ Միքայէլի, որ կաշառեաց զմանկլաւիկքն, որք են սենեկապանք արքայի եւ մօտակայք. եւ սոքա յանկարծակի սրովք զիմեցին ի վերայ կայսերն յեկեղեցին ի ժամ պատարագին, եւ նորա փախուցեալ առ սեղանն բուռն եհար զնմանէ. իսկ նոքա անողորմ գազանաբար սպանին զնա ի տեղւոջն: Եւ թագաւորեաց Միքայէլն. ելանէր ի խնդիր մեծ զօրավա-

1 Լաւ եւս Եննդեան օտնը.

րին Մանուէլի Մամիկոնենոյ, եւ նորա ածապարեալ
 Հարիւր եւ յիսուն արամբք անկանի ի Ամասի¹, եւ
 անտի առ Մամուն իշխանն Իսմայելի, որ սպանեալ
 զեղբայրն Մահմէտ՝ ինքն տիրէր Տաճկաց. եւ նորա
 յոյժ պատուեալ զնա, կորեաց ուստիս աւուրն
 Հազար երեքհարիւր եւ վեց կշիռ արծաթոյ, եւ
 զայլ որ ըստ օրէ պարգեւս անչափ եւ անկշիռ:
 Բայց Աիւրապաղասն Աշոտ տիրեաց ի Աղղջաց
 (կարգա՛ ի Աղարջաց) մինչեւ ի Տփղիս, լեռնա-
 կողմամբն հանդերձ: Բայց տունն Ջահապոյ զօ-
 րացեալ ի Գուին, իբրեւ հինգ հազարու կամեցան
 գնալ ի Տարօն, յիշխանութիւնն Աշոտոյ՝ որդւոյ
 Սմբատայ. իսկ ողջախոհն այն եւ քաջն հաւատա-
 ցեալ՝ երկերիւր հեծելօք եւ երեքհարիւր հետե-
 լակօք եւ ընդդէմ՝ նոցա չմնացեալ հաւաքման
 զօրացն, եւ կոտորեաց ի նոցանէ զերեք հազարն,
 եւ հասեալ ի բանակս նոցա՝ էառ զամենայն մե-
 ծութիւնս նոցա, եւ դարձան խնդութեամբ փա-
 ուաւորելով զՔրիստոս: Եւ Շապուհ եղբայր նորա
 ասպատակեալ ի կողմանս Գունայ, եւ առեալ
 աւար բազում դառնայր. եւ թափեցաւ զօրն ի
 քաղաքէն զհետ նորա, եւ քաղաքացիքն դիմեալք
 ի վերայ Արղմէլէքի սպանին զնա, եւ ամին զդուռն
 քաղաքին. եւ դարձեալ զօրացն եւ իմացեալ զե-
 ղեալն, շքութեցան եւ կորեան ի միջոյ՝:

Ջահապ Իսմայէլացւոյն առաջին անգամ՝
 երեւան դալու ժամանակը՝ յառաջ բերուած
 պատմութեան մէջ որոշակի չի նշանակուիր, ասոր
 հակառակ Ատրնեքսեհի որդւոյն Աշոտի ամիրա-
 պետէն Արաստանի իշխան կարգուիլն եւ Ջահապի
 Գունոյ մէջ ասպատակութիւնը յայտնապէս ալ-
 Ամիրի եւ ալ-Մամունի տնային պատերազմին ժա-
 մանակ (ՀՃ. 195—198 = 810/11—813/14) կամ
 Մամունի ամիրապետութեան առաջին շրջանէն

¹ Հին Անին. Եփրատի վրայ:

մինչև Բաղդադ մտնելը (ՀՃ. 204 = 819/20) կը գրուի: Որչափ ես գիտեմ Ջահապինընին արաբացիներէն չի յիշուիր, այլ իւր սրդին: Մխիթարեանք շատ ուղիղ գիտած են թէ պատմութեան հատուածիս վերջերը յիշատակուող Աբդուլէլէ+ը՝ վերը յիշուած Ջահապի որդւոյն Աբդուլ-ը (= Աբդուլլահի) հետ նոյն է: Բայց երբ Մամուն 198ին (813/14) Հասան բ. Սահլը Իրաք զրկեց, բնա Էսքուրի¹ Հայաստանի տիրացած էին Աբդլմէլիք բ. Գահհաֆ ա-Սուլամի եւ Մուհամմէտ բ. Ատտար: Առաջինը՝ Մամունէ Հայաստանի վրայ կարգուած Թահիր բ. Մուհամմէտ Սանանիի դէմ ապստամբած էր՝ անոր երկիրն հասնելէն քիչ մը ետքը, միեւնոյն ժամանակ Բայլաքանի (Փայտակարան) (արաբացի) ժողովրդեան մէկ մասը ոտք ելաւ եւ Թահիրը իւր կայանին՝ Պարտաւի մէջ պաշարեց. սակայն եւ այնպէս Աբդլմէլիք՝ Թահիրի յաջորդէն՝ Սուլէյման բ. Ահմէդ բ. Սուլէյման ալ-Հաշիմիէ ներում ընդունեցաւ²: Մէքայէլ Թուֆոյի դաւադրութիւնը եւ լեւոն Հայկազնի (813 — 820) սպանութիւնը 820ին կ'իյնան. Աբդլմէլիք բ. ալ Գահհաֆի կործանումը Էսքուրի թէեւ չի յիշեր, սակայն կարելի չէ տարակուսիլ որ ալ-Մամունի կառավարութեան երկրորդ պաղտատեան շրջանին ժամանակ (819/20 — 833) կ'իյնայ: Նոյն միջոցին է նաեւ Աշոտ կիւրապաղատին Աղարջքի մէջ հաստատուիլը:

Յետնագոյն շրջանի մը մէջ կը մտցընեն զմեզ վրական Ժամանակագրութեան Աշոտ կիւրապաղատի վրայ տուած տեղեկութիւնները. ահաւասիկ ասոնք.

¹ Այս Աշոտ կիւրապաղատը Պարտաւի երկրին կ'իշէեր եւ կը նստէր համանուն քաղաքին եւ

1 Էսքուրի Պամ. Բ. օ 2 • 11:

2 Էսքուրի Բ. օ 7 3-7:

Տփղիսի մէջ, վերջնոյս շրջակայքը իր ձեռքն էին: Երբ Մասրաման Յունաստան եկաւ եւ անկէ յաղթուած ու ամօթակոր ետ դարձաւ (717—718), կոյսրը իրապէս ալ նոյն միջոցին Աշոտի կիւրապադատութեան պատիւը տուաւ, որով ասիկա զօրացաւ, մինչդեռ Սարակինոսը տկարացան. այլ եւս միոյն Շուաբի որդի Ալին մնաց Տփղիսի մէջ: Գրիգոր կախեթի մէջ մթափար էր: Աշոտ երկու որդի ունէր Ագարնաս եւ Բագրատ¹:

Հոս նախ շատ մը կոշտ սխալներ պէտք է ուղղել. բնական է որ Աշոտ Պարտաւի երկրին վրայ չէ իշխած եւ չէ նստած ո՛չ այս քաղաքիս մէջ, որ Ատրպատականի, Հայաստանի, Աղուանից եւ Վրաստանի արարացի ամիրաներու կայեանն էր եւ ո՛չ Տփղիս, որ նոյն միջոցին եւ յետոյ ալ երկայն ատեն արարական բերդ մըն էր: Իր իշխանութեան իրական երկիրը Վարդանէն գիտենք: Գարձեալ բացայայտ է, որ անոր կիւրապադատ անուանման ժամանակը նշանակած պահուն Լեւոն Ե. Հայկազնը (813—820) եւ Լեւոն Գ. Իսաւրացին (717—741) իրարու հետ չփոթած է:

Ի վերջոյ՝ թէ Շուաբի որդի՝ Ալին նոյն ժամանակը Տփղիսի մէջ Սարակինոսաց իշխանն էր, այս պարզապէս հետեւեալ մանրամասն պատմութենէն հանուած հետեւութիւն մըն է:

Ահա այդ պատմութիւնը.

Նոյն ատենները, յաջորդ տարին, երբ Աշոտ արշաւանք մը կատարած էր, Թէոդոս՝ Ափխազաց թագաւորը, իւր փեսան եւ Լեւոն երկրորդին որդին իրեն օգնեց: Գրիգոր կախեթէն ելաւ, իրեն օգնական ունենալով Մթիւլները, Ծանաբք եւ Տփղիսի ամիրան: Քսանի մօտ մղուած ճակատի մը մէջ կախեթի մթափարը Աշոտէն յաղթուեցաւ. Աշոտ անոր Քարթլիի մէջ ունեցած ամբողջ եր-

¹ Բրուէ, Hist. de la Géorgie, էջ 26:

կիրներուն տիրացաւ այնպէս որ Աղարջեթէ մինչեւ Օսան տարածուած երկրին տէր եղաւ :

Ասկէ ետքը Խալիլ՝ Եղեղի որդին որ Արարիայէն գալով Հայաստանի, Գարթլիի եւ Հերեթիի բռնացած էր, սկսաւ Աշոտի դէմ կռիւ մղել, որ զիմադրելու անկարող ըլլալով Յունաստան փախաւ, մայրը, կինը եւ երկու անչափահաս որդիները հետը տանելով, որդիներէն երէցը Աղարնասէ եւ կրասերը Բագարաս. երրորդ մը Գուարամ Արտանուջի մէջ ծնաւ : Իր հետեւորդներն էին սակաւթիւ ծառաներ իրենց կիներովը եւ զաւակներովը : Զաւախեթի լեռանց ձօռ, Փարամնի մեծ լճին ափը հասնելով, լճին քով իջան հանդշելու համար, կերան եւ քիչ մը քնացան : Իրենց քնացած միջոցին Սարակինոսաց մեծ բաղձութիւն մը վրայ հասաւ. սակայն Աշոտ Արարապաղաս Աստուծակ պաշտպանութիւն գտնելով իր սակաւթիւ հետեւորդներովն յաղթող ելաւ կռուէն եւ թշնամեղջ բնակին արիւնահոս ջարդ մը տուաւ : Անկէ չուեց եւ Շաւշեթ հովիտը դնաց, ուր նոյն ատենը քանի մը զիւղեր միայն կային, վասն զի պարսկական կառավարութեան տակ անպատ դարձած էր, երբ Քրու բաղդադցին բոլոր բերդերն քանդեց եւ նոյն կերպով բովանդակ երկիրը եւ Ղատոյ լեռները շրջեցաւ : Ասկէ ետքը ապականիչ հիւանդութիւն մը Շաւշեթը եւ Աղարջեթը բոլորովին մարդաթափ ըրաւ, այնպէս որ հոս ու հոն ցրուած փոքրաթիւ բնակչութիւն մը միայն մնաց : Բնակչութեան այս տկար բեկորներն ուրախութեամբ եւ սիրով հիւրնկալեցին Աշոտ Արարապաղասը, որ հոն հաստատուեցաւ. Աստուած զինքը յաղթող ըրաւ եւ Շաւշեթի ու Աղարջեթի վրայ իր իշխանութիւնն ամրացուց : Իր գրամովը քանի մը զիւղեր գնեց, ուրիշներու աւերակներն կանգնեց եւ իր երկիրներուն մէջ շատ մը նոր զիւղեր շինեց. Աստուծոյ շնորհքովը յոյն կայսրներն անոր

իշխանութիւնը ճանշցան: Անտառներուն մէջ գտաւ այն քարաժայռը, որուն վրայ Աստուծոյ Գութնաբանը Արտանուջ ամրոցը հիմնած էր, բայց Բրուի արշաւանքին զոհ գացած ըլլալով, վերստին շէնցուց զայն, ամրոց կանգնեց եւ անոր պարիսպներուն առջեւն եւ անոնց կից քաղաքի մը հիմք դրաւ: Գարձեալ շինեց հոն Պետրոս եւ Պօղոս առաքելոց անուամբ եկեղեցի մը, որուն մէջ պատրաստեց նաեւ իր դամբանը. իսկ ինքը նոյն բերդին մէջ բնակութիւն հաստատեց: Ասոր վրայ մինչեւ Պարտաւի դուռն երկիրը ձեռք անցուց. Աստուած շատ անգամ իրեն յաղթութիւն տուաւ եւ զինքն իւր թշնամիներուն սարսափելի դարձուց:

Օր մը Արտանուջէն ելաւ դունդ ժողովելու եւ Սարակինոսաց վրայ յարձակելու համար. տեղ մը հասաւ, ուսկից իր մարդիկներն ասդին անդին զրկեց զինուոր ժողովելու համար. սակայն դեռ իր հրամանները չկատարուած, Սարակինոսներն յանկարծակի իր վրան յարձակեցան եւ զինքը փախչելու ստիպեցին: Փախաւ եւ նիգալ հովիտը մտաւ եւ կը ջանար իր դունդը զօրացընել. իսկ անոնք, զորոնք ինքը զրկած էր, զինքը սպաննելու նպատակաւ կ'ուղէին դարձեալ իրեն հետ միանալ: Սակայն Աշտ որ յառաջ անոնց դիտման վրայ կասկած մ'անգամ չուներ, երբ անոնք իր դուռն հասան անմիջապէս կռահեց զայն: Գիմազբել կարենալու բաւական մարդ չունենալով քովը՝ եկեղեցի մը ապաւինեցաւ, ուր խորանի մը առջեւ՝ որ իր արիւնջին արատաւորեցաւ, սրոյ հարուածներով սպաննուեցաւ. զոհուեցաւ ոչխարի նման՝ Արբու-թեան աստիճաններուն վրայ, ուր դեռ այսօր ալ կարելի է տեսնել անոր հոն թափուած արեան հետքը: Եբք Ալիւրապաղատի Գոլիս-խանա գտնուող մարդիկը լուր առին թէ իրենց տէրը Որոյմօրդի որդիներէն սպաննուած է, Գոլիս-խանայէն շուքցին եւ դաւաճաններն հետապնդելու ելան. անոնց

գարձին ժամանակ Ճորժի մօտ հասան եւ մինչեւ վերջին մարդն անխնայ կտորեցին. յետոյ Աշոտի մարմինն առին եւ Արտանուջ բերդին Առաքելոց եկեղեցւոյն մէջ իրեն զամբանը դրին: Այս Աշոտը սպաննուեցաւ (Մինգրեյացիներէն) 6324 ԱՄ. Աշխ. երեքտասաներորդ Աիւկղոսի 46րդ տարին, Յունուար 29ին (= 826 յ. Ք.): (Երեք որդի թողուց. Ադարնարսէ՝ երեցը, Բագրատ՝ երկրորդը, այս երկուքը Շաւշէթ եւ Աղարջէթ գացած միջոցին իրեն հետ էին, Գուրամ՝ կրտսերը, որ իր Արտանուջ գալէն ետքը ծնած էր):

Աշոտի մահուանէն ետքը Սարակինտաները անոր անշափահաս որդւոց բովանդակ արտաքին կալուածներն զբաւեցին եւ Արաստանի կ'իշխէին. բայց երբ անոք մեծցան Աստուած իրենց հօրը բոլոր կալուածներն իրենց գարձուց. այս երեք եղբայրները՝ Աշոտի որդիներն Արտանուջ բերդին մէջ կրթուեցան: Շաւշէթի, Աղարջէթի, Նիգալի բոլոր հովիտները Սարակինտոսաց տուրք կը վճարէին, իսկ Ալե՝ Շուաբի որդին խալիլէ հաստատուած ամիրայ էր Տփղիսի:

Նոյն ժամանակներն Գարտաբանացիները մարտնեցան եւ քորեպիսկոպոս անուանեցին Գաճին, Յովհան Բուարուլիս-ձէի որդին. իրմէ ետքը նոյն տիտղոսը ստացաւ Սամուէլ Գոնուոր: Այս միջոցիս խալիլ արաբացին գարձեալ ետ եկած ըլլալով՝ Գարտաբանացիները ճակատ մը տուին Գալագի մօտ եւ մեծ կորուստով զինք փախչելու ստիպեցին: Իսմայէլի որդի Սահակը նոյն ատենը Տփղիսի ամիրայ էր: Խալիլ երբ որդւանգամ մըն ալ եկաւ եւ ջաւախեթի մէջ սպաննուեցաւ: Երբ իր որդին Մահմեդ Բարթըլի եկաւ՝ Աշոտ Աիւրապաղատի որդին՝ Բագրատ անոր հետ միացաւ, Բարթըլին իրեն տաւին, եւ Աստուած անոր կառավարութեան բարեգաւաճում շնորհեց¹:

¹ Բրուէ Hist. de la Géorgie, էջ 261—265:

Բարերախտաբար կրնանք այս պատմութեան գլխաւոր գծերը Եւքսուրիի պատմութեամբը հաշուելու ել. Եւքսուրի նախ եւ յառաջ կը հաստատէ թէ Խալիզ բ. Եղեղ բ. Մաղեազ ալ-Շայբանին ստուգիւ երեք անգամ իբրեւ կուսակալ Հայաստան եկաւ: Անոր առաջին գալստեան ժամանակ իբրեւ այս վիճակիս մէջ էին. Մուհամմադ բ. Հումայդ ատ-Թուզի, որ Բաբաբի դէմ մղուած ճակատին մէջ մնաց՝ անկումէն ետքը, ալ-Մամուն ամիրապետը Գիրալի, Հայաստանի եւ Արարատահանի կուսակալութիւնն Աբգրիւս բ. Թահիրի տուաւ, սակայն երբ վերջինս իր Թալհա եղբոր մահուանէն ետքը Խորասանի վերին կուսակալութիւնը ստացաւ, այն ատեն Արարատահանի ամիրայութիւնը եւ Բաբաբի դէմ կռիւք յանձնեց Ալի բ. Հիշամի. իսկ Հայաստանի կուսակալ եղաւ Աբգալ-Ալա բ. Ահմադ բ. Եղիտ բ. Ասայդ ատ-Սուլամին: Անկա երկիրը հասնելէն ետքը Մուհամմադ բ. Ատտաբի, որ Արաստանի բռնացած էր եւ որուն միացած էին նաեւ Ծանարք, դէմ դնած, սակայն բռնակալէն յաղթուեցաւ: Այս Մուհամմադ բ. Ատտաբն Տիգրիսի այն ամիրան է, որ Ասխետի միջովարին Գրիգորի հետ դաշնագրութեան մէջ էր: Գրիգորի օգնական ցեղերն էին Միթիուները եւ Ծանարք, արաբացի եւ հայ պատմութեանց մէջ միայն վերջիններս գեր ունին: Եւքսուրիի հաղորդածը թէ Ծանարք Մուհամմադ բ. Ատտաբի հետ միացած է, ըստ ամենայնի կը համաձայնի ժամանակագրութեան: Գեռ աւելի յառաջ կարելի է երթալ եթէ մտադիր ըլլանք որ Յովհ. Ասիթղ. ի եւ Ժրգ դարու ուրիշ մատենագրաց մէջ Ծանարք եւ իրենց քորեպիսկոպոսները ճիշդ այն քաղաքական դերը կը խաղան, ինչ որ ժամանակագիրը Ասխետի քորեպիսկոպոսներու կու տայ: Յովհ. Ասիթղ. է գլխաւորաբար երեք տեղիք նկատուութեան առնուելու են հոս. էջ 89,

“Այսպէս ձգեալ աճեցուցանէր զշաւիղ տէրութեան իւրոյ յարեւմտից հիւսիսոյ մինչեւ ցկարնոյ քաղաք, եւ անդր եւս քան զկղարջն՝ քերեալ մինչեւ առ ամն ծովուն մեծի, եւ մինչեւ ցասմանս Եգեբրացւոց եւ մինչեւ ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս եւ զԾանարս մինչեւ ցԳուսն Ալանաց, առեալ եւս յինքն եւ զամբոց գրան պահակի նոցա. եւ անտի ի հարաւակողմն կոյս զկար գետով մինչեւ ի քաղաքն Տփլիս. եւ զՈւտի գաւառ մինչեւ ի քաղաքն Հունարակերտ եւ մինչեւ ի Տուս եւ ի Շամքոր:” Էջ 163, “Անդապա մեծ քաղաքս զԿոստան, որ պայազատէրն իսկ զմասն Գուգարաց մերձ ի Գրունս Ալանաց՝ գայր հասանէր զօրու բազմաւ ի թիկունս օգնականութեան թագաւորին (Աշոտ Բ. ի ընդդէմ Մովսիսի Ուտեցւոյ):” Էջ 164 “Յանկարծակի դիմեալ չուեալ գնացեալ Մովսէսն ի Սիսական կողմանցն՝ ի մտի գնէր երթալ առ մեծ քորեպիսկոպոսն Ծանարաց:” Ուտի Կախեթի եւ Ծանարքի աղերսը շատ նման է Ուտոյ եւ Սեւորգեաց աղերսին: Վարբ պիտի տեսնենք դէպք մը, ուր Ժամանակագրին Մթիււններն արաբացի եւ հայ պատմագիրներուն Ծանարքին տեղը կը բռնեն:

Ժամանակագրութեան համաձայն Աշոտ կիրապաղատ իր իշխանութիւն ընդարձակեց ի վրաս Ծանարաց եւ Կախեթի մթավարին, որուն օգնական էր Տփղիսի ամիրան: Խալիզ բ. եզիզ բ. Մաղիազ՝ ալ-Մամունէ անկարող Աբգալ-Ալա բ. Ահմադի տեղ Հայաստանի կուսակալ անուանուելով երբ երկրին մէջ հաստատուեցաւ Մուհամմադ բ. Ատտարն իրեն կանչեց եւ ներուժ շնորհեց անոր. սակայն երբ անոր գաշնակիցներն Ծանարք ալ հպատակութիւն խոստացան՝ Խալիզ Մուհամմադ բ. Ատտարէն դրդուելով՝ չընդունեցաւ, այլ անոնց դէմ քալեց Վրաստանի մէջ վրանին յարձակեցաւ, զարկաւ եւ նախիրն առաւ. յետոյ

զերենք ստիպեց խաղաղութեան դաշինք դնել եւ որոշուեցաւ որ անոնք 3000 նժոյգ եւ 20,000 ոչխար տան¹։ Հօս Աշոտի՝ խալիզ բ. Եղիշի գէմ մղած կռիւներն չեն յիշուիր սակայն անտարակուսելի է որ այս ժամանակս կ'իյնան. եթէ այս ստոյգ է, այն ատեն Աշոտի Արտանուջ հաստատուին Մամունի կառավարութեան (813—833) վերջին տարիներուն է, ասով ինքնին կը տեսնուի թէ ժամանակագրին Աշոտի մահուան համար տուած թուականը սխալ է։ Մէկալ կողմանէ սակայն դեռ կարելի չէ՝ Տփղիսի վրայ խալիզէ նշանակուած Շուաբի որդի՝ Ալի ամիրային մասին որոշ վճիռ մը տալ։ Անուան նայելով հօրեղբայր ըլլալու է Իսհակ բ. Իսմայիլ բ. Շուայբի, որուն հայրը Իսմայիլ բ. Շուայբ վրաստանի մէջ Մարուան բ. Մուհամմադ բ. Մարուանի մէկ պաշտպանեալն էր եւ Ամինի կուսակալութեան սկիզբն արդէն եահաբ բ. Սայիդի՝ Առաւօտեան աստղէն՝ հետ միացած Հայաստանի տիրացած էր²։ Սակայն (դեռ ալ-Մամունի ժամանակ) խալիզ բ. Եղիշի երկրորդ յաջորդին Հասան բ. Ալի ալ-Բադղիսիի, որ ալ-Մամունի կը կոչուէր, ժամանակ՝ կը տեսնենք թէ Իսհակ բ. Իսմայիլ բ. Շուայբ աթ-Թիֆլիսին Գուրգանի տէրն էր։ Բադղիսի կուսակալը վերջնայս Գուրգանի թուղթ մը դրեց պահանջելով որ դրամներն տայ եւ երբ Իսմայիլ զլացաւ Տփղիսի վրայ քալեց, ասոր վրայ վերջինս դումար մը վճարելով զինքն ետ դարձուց³։ Երբ ալ-Մուտաշիմի ժամանակ (833—842), Մուհամմադ բ. խալիզ Բուխարա—Խոտահն՝ Ափշինէ

¹ Եւրոբի բ. օ 7օ, 14—օ 77, տես նաեւ վերը էջ 49։

² Եւր. բ. օ 78, 1—4, տես նաեւ վերը էջ 42—43, 50։

³ Եւր. բ. օ 77, 18—օ 77, 2, նաեւ վերը էջ 50։

Հայաստանի կառավարութիւնը ստանալով Ծանարաց դէմ կռուեցաւ եւ Տփղիս եկաւ Իսհակ բ. Իսմայիլ, ջանաց իրեն հետ յարմարիլ: Բուխարա-խոտահի յաջորդը Ալի բ. ալ-Հուսայն բ. Սիբա ալ-Քայսին անկարող ըլլալով Մուսաջիմ Խալիդ բ. Եզիզը վերստին Հայաստան ղրկեց. սակայն անոր երկիւղը Հայաստանի մէջ այնչափ տարածուած էր որ բոլոր իշխաններն ինք զինքնին ապահովեցին անկէ եւ ապստամբութեան կը պատրաստուէին: Այս լուրիս վրայ ամիրապետը ստիպուեցաւ Խալիդն ետ կանչել եւ Ալի բ. ալ-Հուսայնը վերստին հաստատել: Խալիդի այս երկրորդ կուսակալութեան ժամանակ կ'իյնայ անոր Գաւաղի մօտ Գարգաբանացիներէն պարտուիլը: Երրորդ անգամ մը եկաւ Խալիդ լիազօր իշխանութեամբ եւ բազմաթիւ բանակով մը ալ-Վադիքի ժամանակ (842—847): Իր շուն սարսափեցուց տկար բռնակալները, այնպէս որ շատերն իրենց հպատակութիւնը ցուցնելու աճապարեցին. բայց ինքը միայն զանոնք կ'ուղէր ընդունիլ, որոնք իրենց մեծարանաց նուէրներն անձամբ կը բերէին: Իսհակ բ. Իսմայիլէն ալ պահանջեց որ իր ոտքն գայ, եւ երբ շեկաւ անոր դէմ քալեց. եւ երբ Իսհակ անձամբ նուէրներն բերելու վրայ էր՝ Խալիդ հիւանդացաւ եւ քանի մ'օրէն մեռաւ. դիակն դադարով Գուին բերուեցաւ եւ հոն թաղուեցաւ¹: Անոր մահունէն ետքը Հայաստան՝ ուրիշ անգամներէն շատ աւելի մեծ խռովութեանց մէջ ինկաւ, անոր համար ալ-Վադիք՝ Խալիթի որդին Մուհամմադը՝ հօրը տեղը կուսակալ անուանեց. ասիկա (Ռաբիացի) դասալիք գունդը

¹ Հմմտ. Ստ. Ասողկ, էջ 106: «Ի սորա (Սմբատ Ապլարասայ իշխանի) աւուրս, ի մղ թուականին (841—42) Խալթ իպն Եզիմ՝ Հայոց ամիրայ եկն եւ էանց բազմութեամբ ի Վիրս. եւ մեռաւ ի Զաւախս, ի գիւղն որ կոչէ Խոզարիրոյ»

եւ Տօրը պաշտպանեալներն վերստին ի մի հաւա-
քելէն ետքը՝ Ծանարաց եւ Իսհակի դէմ կռուե-
ցաւ՝ մինչեւ որ վերջինս վաճակեց եւ զանոնք փախ-
ցուց¹։ Զարմանալի կերպով Ճամանակագիրը վեր-
ջին խօսքերուս կը համաձայնի. «Այս Բազարա-
տին եւ իր եղբօրը, կ'ըսէ, ձեռքն էին իրենց Տօր
ամբողջ կալուածներն Արտանուջէն սկսեալ, սակայն
Սարակինոսաց հպատակ էին. երբ Մոհամէդ Քարթլի
եկաւ եւ Բազարատ իրեն հետ միացաւ, Տփղիսի
ամիրան բանակով մը պատերազմի ելաւ եւ Ռեխ
չուեց²։ Այս միջոցիս Մոհամէդ եւ Բազարատ Ուփլիս-
Յիխէն³ առին, իսկ Ախսերն Գարդաբանացիներուն
հետ Սահակին օգնութեան եկան։ Ռեխի մօտ զար-
նուեցան, սակայն բուռն ճակատէ մը ետքը բաժ-
նուեցան առանց մէկ կամ միւս կողմն յաղթելու,
Մոհամէդ չուեց եւ Պարտաւ քաշուեցաւ։» Հոս ալ
Ճամանակագրութիւնը ապստամբ ամիրային զինա-
կից կը համարի՝ Եաքուբի Ծանաբքին տեղ՝
Ախսերը։

Ճամանակագրին հաղորդածը թէ Աշոտ կիւ-
րապաղատի որդին Բազարատ՝ ամիրապետէն նոր
անուանուած կուսակալին հետ միաբանած է Տըփ-
ղիսի տիրոջ Իսհակին եւ անոր զաշնակից Ծանա-
րաց դէմ՝ շատ հաւատալի է։ Ուստի եւ արաբացի
ուժեղ բռնակալին ձեռքէն իր փրկութիւնը, ամի-
րապետութեան հետ սերտ միութեան մէջ կը յու-
սար գտնել. նոյն քաղաքագիտութիւնը բանեցուց
թիւրք Բուղային հանդէպ։ Երբ Բուղայ՝ Տփղիսի
ամիրան Սահակը՝ սպաննեց եւ քաղաքն աւերեց,

1 Եաք. Բ. Ծ Ա Ա. 1-13, տես վերը՝ էջ 53։

2 Ռեխուլա գետին վրայ՝ քսանէ արեւմուտք. Աւ-
խուլա, Descript. géogr. de la Géorgie, էջ 243։

3 Աուրի հիւսիսային եզերքին վրայ, Դիդի-Ախսուի
եւ քսանի գետերուն մէջտեղը։

Ափխազեթի Թեւդոս թագաւորն իրեն դէմ պատե-
րազմի ելաւ¹ դիմադրելու համար, ասոր վրայ անի-
կայ Զիրակ զօրավարը եւ Բագրատ կիւրապաղատն
անոր դէմ զրկեց: Ասոնք մեծ կորուստով զարկին
զինքը եւ Ռուսալեթի վրայէն փախչելու ստիպե-
ցին. սակայն ի դարձին Զուարիս-Գուերթի մէջ
Գարդարանացիներէն յարձակում կրեցին եւ մեծա-
պէս պարտուեցան: Բուղայ հազիւ թէ այս լուրը
տեսնուի, Չարտալեթ² արշաւեց, հոն բանակ դրու-
եալ Ռսեթէն 300 պատանդ առաւ: Միտք ունէր
Ռսեթ մտնել եւ անկէ մինչեւ Յիւաւոս յառաջա-
նալ, սակայն Աբուլբաս³ Հայաստանի երկաթաւը
եւ Գուարամ մամիալ՝ Բագրատ կիւրապաղատին
եղբայրը, Մթիուլներուն ազդարարեցին որ
չբլայ թէ թողուն որ ներս մտնէ: Ասոնք ասով
շատ գոհ եղան եւ պատանդներն զոհեցին. Աս-
տուած օգնեց իրենց. ձիւն եկաւ, Մթիուլներն
թշնամեղն ճամբան բռնեցին. Աստուած յաղթու-
թիւն պարգեւեց, սարակիւնոսներէն շատերն չդի-
մացան ցրտին, իսկ ձիերէն շատերն սատկեցան.
սակայն զինուորաց բազմութեան պատճառաւ —
բանակը 120.000 մարդու կը հասնէր — այս կո-
րուստը գրեթէ անզգալի էր:

Բուղայ ետ դառնալէն ետքը՝ ձմերոցը Պար-
տաւ գնաց՝ երիցու որդի մը՝ որ մթաւար եղած էր
բռնեց եւ Գարդարանը փճացուց. Գերբենդի պա-
հակը բացաւ ուսկից 300 խաղրեցի գերդաստան
ներս բերաւ եւ Շամքուր բնակեցուց. իսկ Գարիալե
կիրճէն ալ 3000⁴ ստիական ընտանիքներ հանեց եւ
Գիմանիս հաստատեց: Միտք ունէր գարնան Ռսեթ

¹ Սելուշտ իբրեւ դաշնակից կամ աւաստառու Սա-
հակայ տես վարը:

² Description Geogr. de la Géorgie, էջ 221:

³ Սմբատ Ապլարաս:

⁴ Հայ բնագիրը «հարիւր Օսս», Զուանէր, էջ 106:

մանեւ, սակայն Իմիր ալ-Մամունի իմացած ըլլալով որ անիկա իր հայրենակցաց՝ Խազրաց հետ միաբանած է, իրեն հրաման զրկեց որ Քարթլին Խալիլի որդւոյն Մոհմէդի թողու. ասոր վրայ Բուղայ ետ գարձաւ Մոհմէդ իբրեւ ամիրայ ձգելով հոն, որ յետոյ վար անուեցաւ. անոր տեղը զրուեցաւ Իսէ՛ Շիխի որդին որ նոյն Մոհմէդին ազգական ալ էր: Քորեպիսկոպոս էր Գաբրիէլ Գոնաուր՝ Սամուէլ Գոնաուրի եղբայրը¹:

Հոս յեականս ճիշդ ստորագրութիւն մը ունինք Բուղայի Տփղիսի դէմ արշաւանքին եւ դարձին: Այն ամօթակոր պարտութիւնը զոր կրեց Մթիռւլներէն որոնց երկրին մէջէն Ոսեթ մանեւ կ'ուղէր, կը համապատասխանէ Ծանարաց դէմ դժբախտ արշաւանքին, որուն մասին կը խօսին հայ եւ արաբացի պատմագիրներն եւ զոր թովմաս Արծրունի (Գ. Ժ.) մանրամասն կը ստորագրէ: Թէ Բուղա Մթիռւլներէն կամ Ծանարքէն պատանդներ ունէր՝ ուրիշ մատենագիրներու ծանօթ չէ. եւ արդէն Ժամանակագրութիւնը ինքն իրեն կը հակասէ, քանի որ ի սկզբան կը պատմէ թէ այդ պատանդներն Ոսեթէն առած էր²: Գարձեալ հայ եւ արաբացի աղբիւրները կը լռեն այն պարագան թէ Աբուլբաս այսինքն Բագրատունի Սմբատ Աբուլ Աբբասը՝ Հայոց սպարապետը, Մթիռւլներն զիմադրութեան զրգուած ըլլայ: Բուղայէ դերի բըս-

¹ Hist. de la Géorgie, էջ 266-268:

² Այս արշաւանքիս ժամանակ բռնուեցան Սողոմոն որ Սեւորդի (Մաճառ.) կը կոչուէր եւ Կախայ՝ Աերին աշխարհեցին, որոնք ամիրապետին արքունեաց մէջ մարտիրոսութեան պատկն ընդունեցան (Թովմ. Արծր. Գ. Ժա. էջ 187, 188): Երկրորդը կը նշանանայ Ս. Կոստանդին հետ, որ Կախեթցի հարուստ վրացի մը, Աերին աշխարհին կամ Կուրե հիւսիս Քարթլիի մթափար էր եւ 853ին Բագրատաի մէջ զլխատուեցաւ: Հմմտ. Բրոսէ, Hist. de la Géorgie, էջ 268, ծան. 2:

նուած երիցու որդին, որ մթավար եղած էր, և Ապու Մուսէ Եսային՝ երիցու որդի անուանեալը Աղուանից իշխանը, որ Ծանարաց վրայ տարած յաղթութենէն քաջալերուած՝ Բուղայի բանակին վրայ փառաւոր յաղթութիւն տարաւ եւ գրեթէ մէկ տարի անոնց դէմ դիմացաւ եւ ընդ ամէնն 28 յաջող ճակատ մղեց, սակայն ամիրապետին ներումէն ետքն անձնատուր եղաւ¹:

Գարդմանաց (վրաց. Գարտաբան) Կորիճ իշխանը արդէն Բուղայի Ծանարաց երկրէն դարձին ժամանակ իր բերդին մէջ պաշարուած եւ գերի բռնուած էր²: Այն իրողութեանը թէ Բուղա Շամքորի մէջ խաղընցիներ բնակեցուցած է՝ կը վիպէ նաեւ տեղ մը Բալադուրի Կ. Կ, 15—16: Զարմանալի է ժամանակագրին Բուղայի յետ կոշման համար տուած պատճառը, թէ խաղըաց հետ միաբանած ըլլալու կասկածի տակ ինկաւ: Ուղիղ շարժառիթն կու տայ Եաքուրի, որուն՝ Բուղայի Վրաստանէն յետս չուելու ստորագրութիւնը ուրիշ պարագաներու մէջ սքանչելապէս կը համաձայնի ժամանակագրութեան. Բուղա Ծանարաց դէմ քալեց եւ անոնց դէմ ճակատեցաւ. իր գունդերն փձացան եւ զինքն փախչելու ստիպեցին, ուստի պարտուած ետ քաշուեցաւ: Այժմ՝

¹ Թովմ. Արծր. Գ. Ժ, էջ 177, 180. Հմմտ. Մովս. Կաղնկ. Գ. ԺԺ. (հար. Բ. էջ 55) Յովհ. Կաթող. էջ 71 Ստ. Ասող. Բ. բ. 107, Տար. Գ. Վ Վ Կ, 9—10 զինք կը կոչէ Խա Բ. Եռսուֆ՝ Ստեփանոսի քեռորդին, նոյնպէս ալ Մ. Կաղնկ. կ'անուանէ քեռորդի ՍՏԵՓԱՆՈՍԻ որ ԱՊԼ-ԸՍԱԳ կը կոչուի: Վերջնոյս համաձայն շճ. 223ին (838) Բարակի եղբայրը Արգալլահը ծածկուած մնացեր է. Տար. Գ. Վ Կ Կ, 19. Վ Կ Կ, 2 Վ Կ Կ, 2, 4—6 Վ Կ Կ, 2: | Գիտնիտս ՏԷԼ-Մահրէ՛ առ Միք. Ասոր Գ. 1, էջ 532 — 90 թրգմ. զինքը Ստեփանոս անուամբ կը յիշէ !:

² Յովհ. Կաթ. էջ 71, Տար. Գ. Վ Վ Կ, 8—9:

սկսաւ հալածել եւ բռնել զանոնք որոնց ինքն իսկ ներուժ չնորհած էր, անոնցմէ շատերն փախան եւ բանակցութեան մէջ մտան Հոռոմոյ, Խաղարաց եւ Սլաւներու իշխանաց հետ եւ մեծ բազմութեամբ հաւաքուեցան: Եղածին մասին լուր տուաւ Մուտաւակիլիւի, որ երկրին վարչութիւնը յանձնեց Մուհամմատ բ. Խալիդ բ. Եզեդ բ. Մաղիադ աշ Շայբանիի. երբ վերջինս եկաւ խռովեալները (խռովարարներն) հանգարտեցան եւ ինքը ներումն կրկնեց¹:

Ժամանակագրութիւնն շատ քննական պատմագրութիւն մը կը ներկայացնէ հոս, ուստի կ'երեւայ թէ ալ-Մամունի կառավարութեան վերջին տարիներէն սկսեալ՝ Վրաստանի մէջ Իսլամական տերութեան մասին՝ ընտիր աղբիւրներն ունեցած է ձեռքին տակ: Այն ենթագրութիւնը թէ ժամանակագրութիւնը խմբագրողներն արաբացի եւ հայ ժամանակագիրներ գործածած եւ անոնց հետ բաղադրած են ազգային աւանդութիւնները, ինքն իրեն հակասող կը գտնենք եթէ ի մերձուստ քննենք: Անոր համար հարկ է ընդունիլ որ Վրաստանի իշխող Բագրատունիներու կարգը եւ անոնց տրուած ժամանակներն իրապէս լաւ աւանդութեան մը վրայ կը հիմնուին, թէեւ արաբացի եւ հայ մատենագիրներն, Վարդանէն զատ, կ'անգիտանան զանոնք: Վերջիններուս պահած լուրթիւնն անով կը մեկնուի որ անոնք գրեթէ բոլորովին անյիշատակ կը թողուն Աբու Սայիդ Մուհամմատ բ. Եուսուֆ ալ-Մարվաղիի (849) եւ անոր Եուսուֆ որդւոյն (851—852) արշաւանքներուն շրջանը, նոյն իսկ Աշոտ Ա.ին կառավարութեան վրայ հաւաքաբար միայն կը խօսին, Շապուհ Բագրատունւոյն պատմագրութեան առաքելով. ընդհանրապէս անոնք արդէն Հայաստանի վրայ կը սահմա-

¹ Եսքուրի Բ. օ 9 Ը. 16—օ 9 9. 2.

նափակուին եւ վրական յարաբերութիւններն ցանցառ կը շօշափեն: Թէ՛ հայ եւ թէ՛ արաբացի հեղինակներն՝ Բուղայէն Սամարրա դերի տարուած աղտուականաց ցանկը կը ներկայացնեն, որոնց մէջ չէր ըստ երեւութին Բագարատ Արտանուջին. սակայն ըստ Վարդանի ան ալ մէջն էր, սակէ զսա Վարդան կը հաղորդէ թէ Սմբատ սպարապետին մէկ դուտորը ամուսնացած էր Աշոտ Կիւրապաղատի որդւոյն՝ Բագարատի հետ¹:

Հիմայ կրնանք այլ եւս մասամբ իւրիք ճանչնալ թէ Գաւթի սերնդէն Ատարնասէի՝ Արշիւ թագաւորին դալու պատմութեան (վերը էջ 286) հիմն քնչ է. իր հայրը Բագարատունեաց ազգակից է, իսկ ինքը իբրեւ Ատարնասէ Կոյրին եղբորորդին կը յիշուի: Ատարնասէ Կոյրով կրնայ հասկցուիլ միայն Աշոտ, Վասակի որդին, Հայաստանի իշխանը եւ Պատրիկը (732—748), որ 748ին Գրիգոր Մամիկոնեանէն յարձակում մը կրեց եւ անկէ, ի վրէժ իր եղբորը՝ Գաւթի գլխատմանը՝ կոյրցուեցաւ եւ 13 տարի յետոյ մեռաւ²: Ուստի եւ Ատարնասէն տգիտութենէ կամ վարանումէ ծագած անուն մըն է: Վարդանի համաձայն այս Աշոտը հայ եւ Վրացի Բագրատունեաց նախահաւն է³. իր երկրորդ որդին Վասակը՝ ըստ Վարդանի մեր Ատրնեքսեհին հայրը, 771—772ի ապստամբութեան ատեն թէեւ կը յիշուի եւ այն իբրեւ յատուկ զօրաբաժնի մը տէրը⁴, սակայն Բագրեւանդայ ճահատին մէջ ինկածներէն չէ: Ղեկնդի հաղորդած յաջորդ տեղեկութիւններէն դուրս կարելի ըլլայ հետեւցընել թէ Վասակը Արճէշի եւ Վասպուրականի մօտ, ուստի դուրս

¹ Վարդան էջ 79:

² Տես վերը էջ 27: Հմմտ. Daghbasschian, յիշեալ գործը, էջ 54 յջ.:


³ Վարդան, էջ 75, 81:

⁴ Ղեկնդ, էջ 178:

Տարօն կը բնակէր: Ատարնասէ կոչրին՝ ուրիշ ա-
նուամբ Աշոտի եղբորորդւոյն Ատարնասէի Արշիլ
թագաւորին երթալու պատմութիւնը, զոր ժամա-
նակագրութիւնը կ'ընծայէ, ըստ ինքեան Աարգանի
սերնդարանութեան ըսածին կը յանգի, որուն հա-
մաձայն Ատրնեբսէ՛ք Աշոտ պատրիկի թոռն էր.
միայն թէ վերջինս վրական Բաղրատունիներն
Աշոտի ուղիղ սերնդէն կը համարի, մինչդեռ ժա-
մանակագրութիւնը զանոնք այլուստ անձանօթ
կողմնական ճիւղէ մը կը սերեցրնէ: Ի նպաստ Աար-
գանի կը վճռեն ցեղաբանական պարագաները.
Բագարատ՝ Ատրնեբսէ՛ի թոռը, կ'ամուսնանայ
Սմբատ Ապարաս սպարապետին մէկ դստեր հետ,
ուստի եւ Ատրնեբսէ՛ի հօրեղբոր՝ Աշոտ Մասկերի
թոռան հետ¹:

Այսչափովս արդէն զգալի եւ ակն յայտնի է
Գաւթի ցեղաբանութեան ուշ ժամանակի ծնունդ
ըլլալը. սակայն ասկէ զատ ժամանակագրութեան
յետագայ տեղեկութիւնը թէ՛ Սովսէթի գա-
ւառին մէջ Յունացմէ երխթաւութիւն ընդու-
նող Ատրնեբսէ՛ին հայրը՝ Քրուի աւարառութիւն-
ներուն պատճառաւ կղարջեթ՝ Գուարամ կիրա-
պաղատին սերնդոց քովն ապաստանած է, պար-
զապէս փոփոխակ մը կ'երեւայ վաւերականութեան
գոյն առած այն լուրերուն՝ որոնց համաձայն Ատար-

¹ Ըստ Աարգանի ազգակցութեան աղբրան այս է.



նասէ Արշիլ Թագաւորին դիմած եւ անկէ Շուաւերը եւ ԱրտաՏանը աւատ ստացած է: Յիրականին Ափսաղեթի մէջ տարիներէ ի վեր յունական հողի վրայ ապրող Արշիլը որեւիցէ իրաւունք չունէր հոն հրամաններ արձակելու: Արնայ ըլլալ որ Ասակ Բագրեւանդի կուռոյն յաջորդող հալածանքներէն ստուգիւ Աղարջեթ փախած ըլլայ. սակայն այս պարագայիս ինքն է եւ ոչ Թէ իր որդին՝ Շուաւերը եւ ԱրտաՏանը աւատ բնդունողը, ըլլայ այն Յոյներէն — եթէ այս պատմութիւնը ոեւէ իրական հիմ մ'ունի — ըլլայ Արշիլ Թագաւորէն: Վերջինս իբրեւ Թէ արաբացի զօրավարէ մը մարտիրոսացած ըլլայ. ուրիշ իրաց մէջ ինչ գաղափարաւ որ կալմելու ըլլանք այս Թագաւորիս վրայ, սաչափ անտարակուսելի է Թէ հոս առջեւնիս ունինք Վրաստանի այն իշխանը, որ Մուսա ամիրային (785—786) հրամանաւը սպանուեցաւ¹: Եւ որովհետեւ Սմբատ սպարապետին որդին եւ Ատրներսեհի հօրեղբայրը՝ Աշոտ Մսակերն ալ մինչեւ 788 պատմութեան մէջ չ'երեւար, ուստի Արշիլ Թագաւորին կենդանութեանը ժամանակ՝ Ատրներսեհ ալ որեւիցէ դեր խաղացած պիտի չըլլայ: Ուստի եւ յայտնի է որ այն երեք եղբայրներն, որոնք իբր Թէ Տարօնէն եկած եւ Արշիլ Թագաւորին հաւանութեամբը Շակիք հաստատուած են, Բագրատունի չեն կրնար ըլլալ՝ այլ Մամիկոնեաններ են, եթէ որեւիցէ արժէք ունի հայերէն խմբագրութեան մէջ պակտող հետեւեալ տեղեկութիւնը, որուն համեմատ այդ երեքը Ատարնասէ Վոյրին՝ այսինքն Աշոտի եղբորորդիներն են. ուստի այս պարագայիս իրենց հօրեղբայրը կոյրցուցած կ'ըլլան: || Գուցէ Թէ զայս կը լուսաւորէ Բագրեւանդի ճակատով վերջացող Հայոց ապստամբութեան (772ին) նախօրինակին հայող Ղեւոնդի (գլ. 14. էջ 169—171) մէկ պատմու-

¹ Տես վերը՝ էջ 86:

Թիւնը: Կահատրայի (ալ-Հասան բ. Կահթաբա) որդւոյն Հասանի կուսակալութեան ժամանակ իրենց գազաթնակէտն հասնող բռնութիւններէն, հարստահարութիւններէն ու զարհուրելի հարկապահանջութիւններէն յուսահատած՝ հայ ազնուականներն ապստամբութիւն խորհեցան:

«Եւ սկիզբն բանիս այսորիկ լինէր ի ձեռն Արտավազդայ որ էր ի տանէ Մամիկոնէից. որոյ երթեալ ի մայրաքաղաքն Գուին՝ կազմութիւն մեծ առնէր զօրաց իւրոց. եւ ստանայր անդ զէնս եւ անօթս պատերազմի, եւ վառէր զինքն զբահիւք եւ սաղավարտիւք եւ ամենայն սպառազինութեամբ, եւ մտերիմ զինքն երեւեցուցանէր զօրացն Իմայելի իբրու թէ մարտնչել ընդ թշնամիան նոցա կազմիցի: Եւ որոշեալ զինքն ի միաբանութենէ նոցա՝ հասանէր ի գաւառն Շիրակ եւ գիւղն Աումայրի, եւ սպանանէր զհրամանատար հարկին: Եւ որ ինչ գտանէր ի ձեռին նորա առեալ՝ համբառնայր ամենայն տամբ իւրով, գնայր ի կողմանս Վրաց աշխարհին, եւ ընդ նմա ամենայն նախարարք աշխարհիս: Եւ հասեալ համբառն ի քաղաքն Գուին եթէ այս ոճիրք գառն գործեցան յորդւոցն Հմայելի. վաղվաղակի առնոյր զօր բազում Մահման եւ զՍմբատ՝ որդի Աշոտոյ զսպարապետն Հայոց եւ զայլ նախարարսն, եւ հետամուտ լինէր զինի նոցա. հասանէր յաշխարհին Վրաց ի գաւառին որ կոչի Սամցխէ. եւ կալեալ զկիրճսն՝ թափէր ապուռ ինչ յաւարէն. եւ զնոսա վարեալ փախստական առնէր յաշխարհէս Հայոց:

Իսկ նորա երթեալ պատսպարէին յաշխարհին Եգերացւոց. եւ ստանայր անձամբ զիշխանութիւն անձին իւրոյ ի վերայ Եգերացւոյ եւ ի վերայ Վէռիոյ որ են Վիրք: Եւ ի ձեռն այսր գործոյ առաւել զայրազնեալ հրամանատարն Հասան, եւ վաղվաղակի առաքէր յամենայն կողմանս իւրոյ իշխանութեանն զբռնութիւն հարկին ժողովել

մեծաւ ստիպով . եւ յոյժ սաստկանայր Տեօնութիւն
աշխարհիս ի պահանջողաց հարկին¹ .»

Ուրեմն կարելի է որ Ատրնեբսեհ Վոյրին եղ-
բօրորդիներովն՝ Հմայեակ Մամիկոնեանին (Ար-
տաւազդ իր եղբայրն է) որդիներն կ'իմացունին,
թէ եւ ասոնք ոչ թէ Առան, այլ եգեր (Լազիս-
տան) հաստատուեցան: Արտաւազդ քանի մը տարի
ետքը իրրեւ յունական զօրավար կը յիշուի. (Թէոփ.
էջ 451, 11 յջ. ամ Աշխ 6250): ॥

Արշիլի² յաջորդին եւ որդւոյն՝ Զուանշէրի՝
Բագրատունի կինը Լատաւր՝ Ատրնեբսեհի ոչ
թէ դուստրն այլ քոյրն եղած ըլլալու է:
Ատրնեբսեհի մասին այսպէս կը պատմէ Ժա-
մանակագրութիւնը. «Սակայն որովհետեւ, իր
(Զուանշէր) կենդանութեան ատեն իսկ Վլար-
ջեթի երրորդ մասը, Շաւշեթ, Աջարա, Նիգալ,
Ատիս-Փոր, Արտան, Ստորին Տայք եւ Վախ-
տանդի սերունդէն յորդուոց յորդիս ժառանգած
բագրատունի ամբոյններն Ատրնեբսեհի ինկած էին,
վերջինս Վլարջեթ եկաւ, եւ հոն ալ մեռաւ: [Իր
չայրը, Ներսեհ, որ Վարազ-Բակուր Անտիպատ-
րիկի որդին էր, Վարազ-Բակուրի Գուարամ կիւ-
րապաղատ անունով հայրը, որ Ստեփանոս առաջ-
նոյն որդին եւ Գեմետրի եղբայրն էր, բոլոր այս
իշխանները մեռած էին: Փիլիպէ եւ Ստեփանոս
Ատրնեբսեհի եղբայրներն ալ մեռած էին:] Ատր-
նեբսեհի մահուրնէն ետքը Աստուած իշխանու-
թեան պատուոյն բարձրացուց Աշոտ կիւրապաղատը՝
անոր որդին եւ Գուրգէն Երիսթաւին եղբայրը:»
Փակագծեալ խօսքերը, որոնք ձեռագրի մը մէջ կը
պակսին, ըսուածին համաձայն իրրեւ յետնագոյն
ժամանակի կերտուած բացայայտ կը տեսնուին եւ
նպատակ ունին կարծեցեալ հնագոյն վրական (Տես

1 Հմատ. Daghbascian, Gründung etc. էջ 58 յջ. .

2 Տես վերը՝ էջ 86:

վերը էջ 92—93) Բագրատունիներու հասցը-
նելու:

Եթէ խաղրաց վրաստան բրած այն արշա-
ւանքը, որուն ժամանակ Զուանչէր մթաւարը եւ
անոր Շուշան քոյրը գերի բռնուեցան եւ Տփղիս
առնուեցաւ եւ քանդուեցաւ՝ Արաբացուոց ՀՃ.ի
183ին (799/800) յիշատակած արշաւանքին հետ
նոյն է, այն ատեն Զուանչէրի կառավարութեան
համար գոնէ հաստատուն ժամանակագրական
կռուան մը կ'ունենանք: Յիշեալ ենթագրութեան
ինպատ կը խօսին այս երկու արշաւանքներուն
առասպելական պատճառաբանութիւնները: Տա-
բարիի համաձայն ՀՃ.ի 182ին խաղրաց խաբանին
մէկ դուստրը ալ-Ֆադլ բ. Եահիայի հարս կը բե-
րուի, սակայն կէս ճամբան Պարտաւի մէջ կը
մեռնի, ասոր վրայ անոր ընկերացող տարիւանները
անոր հօրը կը գառնան եւ կը պատմեն թէ իր աղ-
ջիկը թունաւորուած է: Այս պատմութիւնը յի-
րականին ընդօրինակութիւնն է հնագոյն դէպքի
մը որ Եղիզ բ. Ուսայդ աս-Սուլամի ոստիկանին
ժամանակ տեղի ունեցած է եւ պատմականօրէն
լաւ հաստատուած¹: Այս դէպքիս Բարմակեան
ալ-Ֆադլ բ. Եահիայի — որ այն ատեն այլ եւս
Հայաստանի կուսակալ չէր (տես վերը) — ժամա-
նակը փոխագրուիլը, շատ զիւրին է ըմբռնել եթէ
ընդունուի թէ զրոյցը՝ իր ժամանակն կատարուած
խաղրաց արշաւանքին ալ նախորդին յար եւ նման
պատճառ մը կու տար: Վասն զի վրական ժա-
մանակագրութիւնը կը պատմէ. «խաղրաց թա-
գաւոր-խաբանը Զուանչէրի կրտսեր քրոջ՝ Շու-
շանի գեղեցկութեան համբաւը լսելով, Զուան-

¹ Տես իմ Osteuropäische und ostasiatische Streif-
züge, էջ 5, ծան. 1. Ռաժ-Թարխան զօրավարին անունն
ունի նաեւ Եաբուրի, թէ եւ ոչ այս արշաւանքիս առթիւ.
Եաբ. Բ. է է 7. 16:

չէրի պատգամաւոր մը կը զրկէ, քոյրը կնութեան խնդրելու համար՝ խոստանալով որ Սարակինոսաց զէմ ղենքը կը պաշտպանէ: Երբ Խաբանին պատգամաւորը իրեն յանձնուած գործը կատարեց, Չուանշէր նախ եւ յառաջ իր Յոհան եղբօրը եւ մօրը լուր տուաւ, որոնք մերժեցին եւ իրեն ըսել տուին. «Եթէ մեր վիճակը յուսահատական դառնայ լաւագոյն է որ Յունաստան երթանք եւ քրիստոնէից դիմենք, քան թէ թոյլ տանք որ մեր տղան արատաւորուի»: Ըուշան ինքնին Խաղբաց թագաւորն կը նախատէր: Երեք տարի ետքը Խաքանը իր Բլուշան¹ ղորավարը ղրկեց, որ Լեկեթի վրայէն Ասխետ թմուաւ եւ պաշարեց այն բերդը ուր ամրացած էին Չուանշէր եւ իր Ըուշան քոյրը: Քանի մը օրուան մէջ առաւ Բերդը, իշխանները ղերի բռնեց, Տփղիսը գրաւեց եւ Քարթլիի եւ ամբողջ երկրին տիրացաւ: Երբ Գարիալի վրայէն ետ կը դառնար Ըուշան օր մը իր եղբօրն ըսաւ. «Ինձի համար լաւագոյն է մեռնիլը, որպէս զի Աստուած արժանի համարի զիս սուրբ կանանց մէջ ընդունելու, քան թէ հեթանոսներէն պղծուիլը. եւ իր մատանւոյն ակը մէկդի առնելով անոր տակ գտնուած մահաբեր թոյնը ծծեց եւ անմիջապէս մեռաւ: Բլուշան չուեց Չուանշէրը հետն Խաքանին տանելով, եւ վերջնոյս պամեց Ըուշան իշխանուհւոյն մահը: Խաքանը բարկանալով որ անոր դիակը, զոր տեսնել կ'ուզէր, հետը չէր բերած, հրամայեց Բլուշանը բռնել վիզը չուան մը ձգել եւ չուանին երկու ծայրերուն մէյմէկ ձիաւոր կապել, որոնք մին այս կողմը եւ միւսն այն կողմը քաշելով անողորմաբար անոր գլուխը կտրեցին»²:

Թէ հոս եւ թէ Տաբարիի քով պատմութեան տարրներն նոյն են. միայն թէ ժամանակա-

¹ Հայ. համառօտութեան մէջ Բուլշան:

² Hist. de la Géorgie, էջ 256—58:

գրութեան մէջ ի հակառակէն խաղրաց խաբանն է փեսայացուն եւ իշխանուհին ինք զինքը կը թու- նաւորէ անոր ձեռքը շինալու համար: Պատմու- թիւնը ինքնին թէեւ առասպելախառն սակայն հնարաւոր է: Թէեւ Տաբարիի եւ Եւքրուբիի¹ հա- մաձայն յարձակումը կ'ըլլայ Բաբ-ալ-ալվարի (Գարբանդ) մէջէն, մինչդեռ ժամանակագիրը կը պատմէ թէ խաբանի զօրավարը Բլուշան Լեկեթիէ կ'ախեթ մտաւ. դարձեալ Տաբարի եւ Եւքրուբի Տփղիսի առումը եւ քանդումը շեն յիշեր. սակայն առաջինը կը հաստատէ թէ խաղրաց աւարառու- թիւններէն կրեցին թէ պաշտպանեալները, այս- ինքն քրիստոնեայք, եւ թէ՛ Մուսլիմները. իսկ Եւքրուբի կը յիշէ թէ խաբանը (կամ իր զօրա- վարը)² մինչեւ Կուրի կամուրջը յառաջացաւ եւ երկիրը այրեց եւ նոյն իսկ կիներն եւ տղաքը ջար- դեց: Լեկեթի երկրին մէջն էր ըստ արաբացւոց տեղեկութեան նաեւ Կասպից ծովուն եզերքը Սա- մուրի եւ Շարիրանի մէջտեղ եղած եզերագա- ւաւոր³:

Եօթնամեայ գերութենէ ետքը խաբանը ջուանչէրն իր իշխանութիւնն զրկեց: «Այնու- հետեւ (վրաստանի) խորովեան մեծ թագաւորաց փառաւորութիւնը միշտ նուազեցաւ: Կախ որ Սա- բակինոսաց ոյժը զօրացաւ եւ ասոնք իրենց յա- ճախակի արշաւանքներովն բոլոր երկիրն կ'ապակա- նէին. երկրորդ որ մթավարաց թիւը Արաց երկրին մէջ բազմացած ըլլալով ամենուրեք միայն ներ- քին կռիւներ եւ երկպառակութիւններ կը տես- նուէին: Երբ վախտանգի որդւոց մէջէն թագա-ւորութեան արժանի մէկն երեւան ելլէր, Սարա-

1 Տաբ. Գ. 7 է Ա. 3. Եւք. Բ. 5 Վ Ա.

2 Բնագիրն հոս պակասաւոր է:

3 Հմմտ. Բալ. Կ. 4, 7:

կինոսներն զանիկա կ'ոչընչացընէին. վասն զի Հազարի որդիներն Տփղիսը բռնած եւ զայն իրենց որջը դարձուցած էին. երկրէն խարաճ կ'առնէին. վերջապէս մեր մեղաց բաղձութեան պատճառաւ Աստուած թոյլ տուաւ որ անոնք արտաքոյ կարգի զօրանան¹:

Շատ տարիներ ետքը հազարացի ամիրայ մը եկաւ, որ Քարթլի, Հայաստան եւ Հերեթը կը կառավարէր եւ խոսքով կը կոչուէր. ասիկա վերաշինեց Տփղիսը, զոր խաղիքը կործանած էին²:

Խաղրաց արշաւանքին տարեթուոյն 799/800-ի վրայ աւելցրեննք Զուանչէրի գերութեան եօթ տարին՝ այն ատեն իր դարձին տարին կ'ըլլայ 805/6³: Սարակինոսաց Աբաստանի մէջ աճող ուժոյն վրայ ժամանակագրին պատմածներն մասամբ կը յարմարին այս միջոցիս: Խաղրաց այս արշաւանքէս ետքը Հայաստանի երկրորդ ոստիկանն եղաւ Խուզայմա բ. Խաղիմ ատ-Տամիմին, որ Մուսա ալ-Հադիի ժամանակ արդէն Հայաստանի եւ Աբաստանի մէջ ահարկու կառավարութիւն մը ունեցած էր: Ասիկա տիրող իշխանները եւ իշխանազունները բռնեց եւ գլուխներն կտրել տուաւ եւ շատ գէշ վարուեցաւ անոնց հետ: Ասոր վրայ Աիրք⁴ եւ Ծանարք ապստամբեցան. անոնց դէմ ղրկուած առաջին բանակը ջախջախեցաւ, սակայն Սայիտ բ. ալ-Հայդան բ. Շուբա բ. Չահիր ատ-Տամիմի նոր ու հզօր բանակով մը անոնց դէմ կռուեցաւ,

1 Հոս կը յաջորդէ Զուանչէրի՝ Արներսեհի դստեր հետ ամուսնութեան պատմութիւնը:

2 Hist. de la Géorgie, էջ 258-259:

3 Ըստ ժամանակագրութեան եօթներորդ տարւոյն մէջ դարձաւ:

4 Գուրգան, ուրիշ տեղեր Գուրգան, Ախտանէս ալ անգամ մը. Բ. ծր. էջ 89, ունի Աբխազ (զոր Բրոսէ հակառակ իմաստին Hyrcanief կը թարգմանէ. հմտ. Յովհ. Աիւզացւոյ՝ Ἐρανσάη (Eransahr, էջ 115):

մինչեւ որ զանոնք երկրէն գաղթելու ստիպեց եւ ինքը Տփղիս դարձաւ: Խուզալցյմաբ. Խաղեմ տարի մը շմեաց Հայաստան, իսկ իր յաջորդներն ամենքն ալ անոյժ մարդիկ էին: Սուլէյմանբ. Եղեգբ. ալ-Ասամմ ալ-Ամիրիի ձեռքէն երկիրն գրեթէ կը յափշտակէին, եւ անոր փոխարէն նշանակուած Աբբասբ. Չուֆար ալ-Հիլալիի դէմ ելան Ծանարք, բայց զանոնք զսպել չկարենալուն Մուհամմադբ. Չուհայրբ. ալ-Մուսայեար աթ-Թարբին հուսակալ անուանուեցաւ¹:

Թէ Տփղիսը վերաշինող հագարացի Խոսրով ամիրայով որ հուսակալը հասկնալու է դեռ կարելի չէ ճշդել. սակայն հաւանականութիւնը Խուզալցյմաբ. Խաղեմի կողմն է. անունը կը յիշեցընէ Մովսէս Կաղնկի Գ. դլ.ի Խաղը պատգոս ամիրայ, որով հաւանօրէն Խալիգբ. Եղեգբ. Մազհադ ալ Հայբանին կ'իմացուի (Տես վերը էջ 54/55):

Այն տեղեկութիւնը թէ՛ Վրաստանի մէջ մթաւարներու եւ մասնական իշխաններու բազմանալովը քաղաքական պատերազմներն սուլորական դէպքեր դարձան, կ'երեւայ թէ Աբոյ վկային վկայաբանութեամբը կը հաստատուի: Այս վկայաբանութիւնը որչափ կարելի է Բրոսէի սուղահնարկութիւններէն հետեւցընել, կարելոր յայտնութիւններ կը խոստանայ եւ անպատճառ կը կարօտի այն մանրաքնին քննութեան, որուն ենթարկուեցաւ Ս. Եւստատիոս Մցխեթացւոյ վկայաբանութիւնը Ջավախոֆի եւ Հառնակի կողմանէ²:

¹ Եաբուբիբ. 019, 1-11. Տես նաև վերը էջ 42:

² | Ս. Աբոյի վարքն հիմայ գերմաներէնի թարգմանած է Schulze, Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur, N. F.

Այս վարքիս մէջ կը պատմուի՝ թէ ինչպէս Ատարնասէ՝ Կիւրապազատին եւ երիսթաւին որդին՝ Քարթլայ երիսթաւը՝ Ներսէ՛Տ Աբգալա (ալ Մանսօուր) Խալիֆայի առջեւ ամբաստանուեցաւ եւ անկէ բանտարկուեցաւ. Աբգալա իր շինած Պաղտատ քաղաքը կը նստէր: Աբգալայի († 14 Սեպտ. 775) յաջորդելով անոր որդին Մահդի, Ներսէ՛Տն եռամեայ բանտարկութենէ ետքը ազատ արձակուեցաւ եւ իբրեւ երիսթաւ Քարթլի ղրկուեցաւ: Իրեն իբրեւ ծառայ կ'ընկերանար Ս. Աբոյ, որ Պաղտատի մէջ արաբացի ծնողքէ ծնած եւ նոյն ատեն 18 տարեկան էր. Աբաստանի մէջ քրիստոնէայ եղաւ, եւ երբ Ներսէ՛Տ կրկին անդամ շնորհազուրկ եղաւ ամիրապետին առջեւ եւ արաբացուոց հալածանաց պատճառաւ Գարիալի կրճէն Ոսէթ փախաւ՝ Աբոյ ալ իրեն ընկերացաւ: Ներսէ՛Տ՝ վայրենաբարոյ արիւնարբու Խազրաց թագաւորին դիմեց, որոնք միայն մի Ասատուած - Արարիշ մը կ'ընդունին¹ եւ ուրիշ որ եւ է կրօնք մը չունին, սակայն «Տիւսիսային երկրին մէջ շատ քաղաքն երկան, ուր կարելի է աներկիւղ Քրիստոսի հաւատքը դաւանիլ:» Զինքն իբրեւ աղերսարկու մը ընդունող Խազրաց թագաւորին քովէն՝ բոլորովին քրիստոնէայ երկիր մը՝ Ափխազէթ անցաւ, որ Յունաց հպատակ էր եւ որուն մթաւարը զինքը սիրով հիւրընկալեց: Ներսէ՛Տի փախստենէն ետքը Մահդի Խալիֆան՝ Գուրգէն-երիսթաւին եւ Ներսէ՛Տի քրոջ որդին՝ Ստեփանոսը Քարթլայ մթաւար անուանեց. ասոր վրայ Ներսէ՛Տ ամիրապետէն թոյլտուութիւն խնդրեց իր հայրենիքն դառնալու: Երբ Ներսէ՛Տ

¹ Մտադրութեան արժանի է Կոստանդինի Աբուոց հեռ ունեցած համաձայնութիւնը. (տես Osteuropäische und ostasiatische Streifzüge, էջ 15) bibamus in nomine dei unius, creatoris omnium rerum.

Ճամբայ ելաւ՝ Աբոյ ալ, հակառակ Ափիազեթի միջավարին ազգարարութեան՝ անոր ընկերացաւ մինչեւ Տփղիս. հոն երեք տարի ետքը բռնուեցաւ եւ Տփղիսի դատաւորին առջեւ հանուեցաւ, սակայն Ստեփանոս երիսթաւին աղաչանաց վրայ ազատ արձակուեցաւ: Բայց նոր դատաւորամիրայ մը դալով Ս. Աբոյ առջեւ բերել տուաւ եւ շղթայի զարկաւ — Գեկեմբեր 27ին երեքշաբթի օրը — եւ տաս օր ետքը յայտնութեան տօնին, Ուրբաթ Յունուար 6, գլխատեց: Նահատակութիւնը կատարուած է Լեւոնի որդւոյն Կոստանդին կայսեր տասներորդ տարին, Սարակինոսաց Մոսէ ամիրայպետին — որ Մահգիի որդին էր —, Քարթլաց Սամուէլ կաթողիկոսին, Գուրգենի որդւոյն Ստեփանոսի երիսթաւութեան ժամանակ¹:

Կոստանդին (Զ) կայսեր տասներորդ տարին (789/90) եւ Մուսա ալ Հադիի (3 Օգոս. 785 մինչեւ 15 Սեպտ. 786) ամիրայպետութիւնը փոփոխակի զիրար կ'արտաբանեն, ուստի եւ այս տարեթիւերէն մին կամ միւսը միայն կարելի է նկատուութեան առնուլ. ասոր հակառակ մէկալ երկու տարեթիւերն — 890 տարին յետ չարչարանաց եւ յարութեան եւ 6084 ամ աշխարհին — ո՛ր եւ իցէ արժէք չունին:

Ուստի այս պատմութեան՝ 773էն մինչեւ 785 (կամ 789) տարիներու շրջանին համար՝ Քարթլայ երկու երիսթաւ միայն ծանօթ են, որոնք Տփղիս նստող արաբացիներու աւատաւուններն են. Ատրներսեհ կիւրապաղատ-երիսթաւի որդին՝ Ներսեհ, եւ անոր եղբորորդին Ստեփանոս, որ Գուրգեն երիսթաւին որդին էր. իսկ Արշիլ իշխանը եւ ոչ իսկ կը յիշատակէ: Թէեւ վերջնոյս պատմութեան մէջ կոշտ սխալներ եւ ժամանադրական հակասութիւններ կը վիտան եւ թէեւ հնագոյն

1 Բրուէ, Addition et éclaircissements էջ 132-136:

պատմական եւ վկայաբանական ատաղձի մը երեւան հանուելէն յառաջ անհնարին է զանոնք լուծել, սակայն այսչափ դունէ բացայայտ է թէ Արշիլ վկայաբանութեան պատմական պատկերախորքը կը կազմէ Մուսա ամիրայեանին ձեռքով Վրաստանի իշխանին բազմաշարժար նահատակութիւնը, զոր կ'աւանդէ Ղեւոնդ: Եթէ չենք ուզեր Արշիլը ուղղակի ՆերսէՏ երիսթաւին հետ նոյնացընել, որ թէեւ մէկալին նման Ափխազեթ ապաւինած է, սակայն իր նահատակութեան մասին որ եւ է բան ծանօթ չէ, այն ատեն, եթէ ուղիղ կը տեսնեմ, ժամանակագրութիւնը ինքնին այս անբմբռնելի երեւցող առեղծուածին լուծումը կու տայ երբ կը պատմէ թէ, Արշիլ նախ եւ առաջ Եդրիսի մէջ մինչեւ Շորապան այսինքն Իմերեթ ամրացաւ եւ Յիխէ — Գոջ եւ Քութաթիս հաստատուեցաւ, որպէս զի յետոյ Վախեթ անցնի, ուր շատ մը ամբողջութիւններ հիմնեց: Եւ երբ Սարակինոսաց զօրավարը Չիչուժ (Խուզայմա Բ. Խազիմ) Քարթլին աւերելէն ետքը կը պատրաստուէր Վախեթ մտնելու, զայն մարդաթափ ընելու համար, եւ թագաւորները եւ մթաւարները չէին կրնար իրեն դիմադրել, Արշիլ որոշեց անձամբ Չիչուժի առջեւն ելլել, երկրին խաղաղութիւն խնդրելու համար¹: Ըստ այսմ Արշիլ Վրաստանի անուանական իշխանն էր պարզապէս եւ Իմերեթի եւ յետոյ Վախեթի (Ծանարաց) մէջ դեռ իշխանութեան երեւոյթ մը պահած էր: Թէ ստուգիւ Արշիլ սոսկ անուանական թագաւոր մըն էր, արդէն կը խոստովանի ժամանակագրութիւնը. այնպէս մը կը պատմէ սակայն իբր թէ ինքը՝ Արշիլ մասնական իշխաններուն, որոնք իր քեռայրներն են, ծագումը վաւերացուցած եւ երկիրն անոնց մէջ բաժնած ըլլայ: Ասոնց մէջն են նաեւ «Վախտանգ թագաւորին մեծամեծներէն մին՝

¹ Hist. de la Géorgie, 248-249, 253.

Ներսէ՛հ Ներսէ՛հեան, եւ Ատրնեբսէ՛հ Ատրնեբսէ՛հեան, որ նախորդին հետ ի միասին՝ վերին դաւառին կամ Քարթլիի տէրն էր¹. 7 այս երկու անձերը հաւանականաբար կը համապատասխանեն Ս. Աբոյի վարուց կիւրապաղատ-երիսթաւ Ատրնեբսէհին եւ անոր Ներսէհ երիսթաւ որդւոյն: Մինչեւ հիմայ կարելի չէ մեկնել թէ կիւրապաղատ-երիսթաւ Ատրնեբսէհը իր ժամանակակից Արշիլին հետ ինչ աղերս ունի: Թէեւ նախորդ հարատւութեան անկման մերձաւոր պարագաներն չենք գիտեր սակայն եթէ վերոյիշեալ տեղեկութիւնները ուղիղ են, այն ատեն Աշոտ կիւրապաղատ Ջուանշերէն ստուգիւ ոչ շատ ետքը ալ-Ամին ամիրայպետէն Վրաստանն աւատ ընդունեցաւ եւ յետոյ Ղեւոն կայսեր ձեռքէն կիւրապաղատութիւնը ստացաւ: Այսու ամենայնիւ առաջին բազրատունի կիւրապաղատներու իշխանութեան — որուն կենդրոնը կը մնայ միշտ Վղարջեթը եւ Արտանուշը — իրական բայց շատ պակասաւոր ըմբռնում մը ունենալու համար, անպատճառ հարկաւոր է բացայայտ ճանչնալ թէ երկու տասնեակ տարիներու մէջ Վրաստանի իրական տէրը՝ Իսհակ բ. Իսմայիլ ինչ գեր խաղացած է կովկասեան դաւառներու պատմութեան մէջ:

|| Ստ. Ասոյիկ անոր մասին շատ հետաքրքրական տեղեկութիւն մը կու տայ — զոր Շապուհ Բագրատունւոյ կը պարտի անշուշտ — էջ 144. «Ի սորա (Թէոփիլոս) աւուրս եղև գալուստ հոռոմդիերոյն² ի գաւառն Բասեան եւ զրա-

¹ Hist. de la Géorgie, էջ 248, տես վերը, էջ 98:

² | Հոռոմդիերոյ յորձակի սեռականն է ասմկորէն միջին հայերենի Հոռոմդի ձեւին, որ հոմանիշ է Հոռոմդե-րանցին: Հոռոմդիսով հոս կրնայ միայն Յոյներն նշանակել, ուստի պետք էր Հոռոմը կամ Հոռոմայեցիք ըլլալ, թէեւ բառին կազմութիւնը ինձի անյայտ կը մնայ: Շապուհ Բագրատունւոյն ասմկախառն ոճէն օրինակ մըն է

զումս խոխողեցին սրով ի վերայ յարուցեալ գեղաքաղաքին Գոմաձորոյ: Իսկ Թէոփիլոս գնաց ի Խաղտի եւ ել ի ցամաք կամուրջ¹ եւ գերեաց զբազումս ի Հայոց հանդերձ ընտանեօք իւրեանց եւ տուեալ զՏիւպատաւորութեան պատիւն՝ այսինք ապուհիւպատ (ἀπό ὑπάτων) պատրիւթիւն՝ Աշոտոյ որդւոյ Շապհոյ եւ թողու ի Սպեր գաւառի, եւ ինքն առեալ հարկս ի Թէոփուլոսեցեաց՝ դարձաւ անդրէն: Եւ ապա եկեալ Հռոմդի արանցն ի Վանանդ ի գիւղն կաճկաքար՝ կոտորեցան ի ձեռն Սահակայ որդւոյ Իսմայէլի²: 7 || Թէոփիլոսի (829—842) այս արշաւանքը ապահովաբար կապ ունի անոր Ափխազիստան ըրած դժբախտ արշաւանքին հետ, որուն վրայ միայն Թէոփանէսի շարունակողը կը խօսի առանց մանրամասնութեանց իջնալու³: Վրական Ժամանակագրութեան համաձայն Լեւոն Բ. Ափխազաց երիւթաւք եւ Խաղրաց թագաւորին մէկ դատեր որդին՝ վերջնոցս օգնութեամբ Յոյներէն բաժնուեցաւ, Ափխազիստանի եւ Եգեբրի մէջ՝ մինչեւ Լիխ Լեռը անկախ ըրաւ ինք զինքն եւ Վրաց

առաջիկայս. եւ արդէն իր ոճին համար Շապուհ իր յաջորդ հոյ պատմագիրներէն կը պարտաւորի Ասիէ զատ հոս Ասողիկի բնագրին մէջ տեղւոյ անունները մեծաւ մասամբ չափազանց կերպարանափոխուած են: ||

¹ | Պէտք է ընդ համարել ըլլալ: |

² | Ասողիկ նոյն տարին կը գնէ նաեւ Ասորիքի մէջ Աւրպէլի այսինքն Զուպատրա (Սամուէլ Անեցւոյ, Վաղշ. 1893, էջ 92, ԶՈՒՊՍՏԱՆ կարգալու է Զուպատրա) քաղաքին առումը եւ Թէոփիլոսի Աշմուշատի (այսպէս կարգա՛) քով տարած յաղթութիւնը: Այս գէոյքերը ըստ Գիտնիփոս Տէլ-Մահրէի, առ Միքայէլի Աօրւոյ III, 1, 88 — 531, պատահած են 1148ին — 836/7 Ք. ետքը: |

³ | Թէոփան, Շար. էջ 137. 16—18 տպ. Բոնն. «Թէոփորոս եւ օգոստափառին եղբայրը Վարդան բանակաւ Արասոզիս զրկուեցան, բայց այնչափ դժբախտ վախճան մը ունեցան որ այդ արշաւանքէն քիչերն միայն էտ զարձան: 7 Հմմտ Լըբոյ-Սէն-Մարգէն, Hist. du Bas-Empire, 13, 97:

Ջուանչեր իշխանին կառավարութեան վերջերր
 «Թագաւոր Ափխազաց, տիտղոսն առաւ: Իր որդին
 եւ յաջորդը Թեւզոս՝ Աշոտ Կիւրապաղատի փեսան՝
 ասոր օգնական կը հանդիսանայ անոր դէմ գաշ-
 նակցած՝ Կախեթի մթավարին՝ Գրիգորի, Մթիու-
 ներու, Ծանարաց եւ Տփղիսի ամիրային
 գէմ մղուած պատերազմի մը մէջ. (տես վերր
 էջ 107)¹ սակայն Տփղիսի Սահակ ամիրային
 անկուսէն (853) ետքը կը տեսնենք թէ Ափ-
 խազաց թագաւորը Թեւզոս Բուղայի դէմ կ'ար-
 շաւէ, որ իւր կարգին անոր դէմ կը զըկէ Ջիրակ
 զօրավարը եւ Աշոտի որդին Բագարատ Կիւրապա-
 ղատը²: Ափխազաց թագաւորը այս միջոցիս կամայ
 թէ ակամայ իր կուսակցական դիրքն փոխած եւ
 Տփղիսի Իսահակ Բ. Իամայիւ հօր ամիրային գերիշ-
 խանութիւնը ճանչցած էր: Այս վարմունքիս մէջ
 անշուշտ դեր մը ունեցած է այն յոյսը, թէ ասով
 զԻսահակ Յունաց դէմ թիկունք կ'ունենայ՝ ի դի-
 պուածի որ անոնք փորձեն Ափխազիստանի մէջ
 իրենց գերիշխանութեան իրաւունքը զինու զօրու-
 թեամբ վերստին քալեցրնել. եւ թէ այսպէս խոր-
 հելով չէ խարուած ստուգիւ, Ասողիկի եւ Թէո-
 փանի շարունակողին տեղեկութեանց համախմբու-
 մովը ակնյայտնի կը տեսնուի: Թէոփիլոսի (842—
 867) որդւոյն՝ Միքայէլ Գ. ի կառավարութեան
 սկիզբը Յայնք Թէոկրիստոսի առաջնորդութեամբ
 Ափխազիստան դարձեալ արշաւանք մը ըրին, որ
 նախորդին նման դժբախտ վախճան մը ունեցաւ³:
 Այս տեղեկութիւններս Մասուգիի պատմածներն
 կը հաստատեն, որուն համաձայն Ափխազիստան
 ալ նման վրաստանի՝ մինչեւ ալ-Մուռազակիկի
 գալուստը Տփղիսի արաբացի հրամանատարին հար-

¹ Hist. de la Géorgie I, 259—261:

² Hist. de la Géorgie, էջ 266:

³ Թէոփ. Շարունակ. Գ. 39, էջ 203, 2—7:

կատու էր¹ գոնէ Իսհակ բ. Իսմայէլի ժամանակ (գրեթէ 830 — 853), որ երկու տասնեակ տարիներ իրբև անկախ տէր կ'իշխէր Տփղիսի մէջ²: Ստ. Ասողիկի վերը յառաջ բերուած պատմութիւնը արդէն բացայայտ կը ցուցնէ թէ Իսհակի իշխանութիւնը բուն Հայաստանի մէջ իսկ որչափ ընդարձակ էր եւ մէկալ կողմանէ Մասուգիի ստորագրութեան ճշգրտութիւնը կը հաստատէ երբ անոր մասին կ'աւանդէ թէ՛ “Հոն (Տփղիս) Իսհակ բ. Իսմայէլ անուամբ մարդ մը կար, որ իրեն կուսակից մուսլիմներովը շրջակայ ժողովուրդներու վրայ գերիշխանութիւն ունէր, որոնք իր կարգադրութեանց կ'անսային եւ գլխահարկի վճարման մասին իրեն հետ համաձայնած էին: Անոր իշխանութեան տակն էին այն կողմերու ժողովուրդը մինչեւ որ Բուղայէ ղեկուած ալ-Մուսավակիլը — որ Տփղիսի բերդին առջեւ կեցաւ եւ բանակ դրաւ — անոնց դէմ կուսելով յարձակմամբ բերդն առաւ եւ Իսհակն սպաննեց, վասն զի անիկա բռնութեամբ տիրացած էր այն երկիրներուն³: Անոր մասին շատ մանրաւէտներ կան, զորոնք հոս յառաջ բերելը շատ երկար պիտի ըլլար, սակայն ասոնք այն երկրին ժողովրդեամբ եւ այն աշխարհին պատմութեամբ զբաղողներուն քաջածանօթ են: Կարծեմ թէ Բուրաժիշեանց ցեղէն Բանու Ումայէն կամ անոնց պատկանող պաշտպանեալներէն էր⁴ Իսհակ: Արդ այն ժամանակներէն մինչեւ այսօրս Տփղիսի սահմանաբերդին մէջ մուսլիմներու յարգանքը կորսուած է այնպէս որ անոր սահմանակից թագաւորութիւններն հպատակութիւնը զլացած են, եւ

1 Մասուգի, Մարտի Բ. 65. Տես իմ գործս Ost-europ. u. ostas. Streifzüge, էջ 174:

2 Տես վերը, էջ 113/14:

3 Հմմտ. Բալ. Կ Կ Կ, 5-6:

4 Այսպէս Տար. Գ. Կ Կ Կ, 7:

Տփղիսի երկիրներու մեծ մասն գրաւած. իսկ Իսլամի երկիրներուն Տփղիսի հետ հաղորդակցութեան ուզին այս անհաւատ աղգերուն մէջէն կ'անցնի. սակայն բերդին բնակիչներն դեռ ոյժ եւ անպարտելի քաջութիւն ունին, թէեւ յիշեալ թագաւորութիւններէն շրջապատուած են¹: Ալ-Վազիբի ժամանակ (842—847) Իսհակ նոյն իսկ Խալիֆայէն Հայաստանի տէր ճանչցուեցաւ²: Իր կինը քրիստոնեայ³ «գահի տիրոջ» այսինքն հիւսիսային Գաղիստանի² Աւարաց թագաւորին դուստրն էր եւ իր մտարիկներուն մէջ ունէր քաջասիրտ խոյթեցի լեռնականներ, որոնք Եռսուֆ բ. Աբի Սայիդ Մուհամմադ ալ-Մարվազի ստիկանը սպաննած էին, անոնցմէ զատ դեռ ուրիշներն ալ վարձած էր³:

Յորշափ որ Իսհակ բ. Իսմայիլ Տփղիսի կը տիրէր՝ Բագրատունիք, անձուկ առամաք Արաստանի մէջ գործ չունէին, եւ նոր իշխանութիւն մը հիմնելու մասին խորհիլ անգամ կարելի չէր: Այն ահաւոր արիւնային դատաստաններն որոնցմով Ռաշիտի ժամանակ Խուզայմա բ. Խաղիմ մասնական եւ Հայաստանի իշխաններն դատեց, գլխաւորաբար զգացած ըլլալու են Աբացի ազնուականներն, քանի որ այդ գէպքերը Արաստանը եւ Ծանարքն ապրտամբութեան գրգռեցին: Արաբացի աղբիւրներն յետոյ Արաստանի մէջ մասնական իշխաններ չեն յիշեր. եւ եթէ երկրին մէջ անոնցմէ մնացորդներ

1 Իբն Խորդ. Վ 74, 8:

2 Այս տեղիքով կարելի էր ենթադրել թէ Եւտիբոսի Բ. 230 տեղեկութիւնը կը հաստատուի թէ «գահի տէրը» Ծանարաց իշխանն ըլլալու է. հմտ. վերը, էջ 115, եւ Իբն Խորդ Վ 74, ուր կ'ըսուի թէ գահի տիրոջ երկիրը կ'իյնար Տփղիսի եւ Ալանաց թագաւորին աշխարհին միջեւ: Սակայն ուրիշ վկայութիւններ, բայց ի մասնաւորի Իբն Ռուստայի Վ 17, տեղեկութիւնն, այս ըմբռման հակառակ կը հանդիսանան:

3 Տար. Գ. Վ 17, 5—6:

ալ կային, ապահովապար Իսհակի խիստ կառավարութեան ժամանակ խլրտիլ չէին յանդգնիր:

Բուղայէն՝ 852—855 տարիներու մէջ Սամառա զըկուած հայ եւ աղուան մեծամեծներու երկայն ցանկին մէջ, զոր Յովհ. Կաթ. եւ Թ. Արծրունի յառաջ կը բերեն, վրական իշխան մը անդամ չկայ. Տփղիսէ հիւսիս Կովկասի մէջ ԾԱՆԱՐԳ էին որ կեանքն Արաբացւոց անտանելի կը դարձընէին¹: Իսհակի անկումէն (853) եւ Բուղայի Հայաստանէն ելլելէն վերջը, երբ ամիրապետը Յունաց դէմ պատերազմը վերստին սկսած ըլլալուն համար ստիպուեցաւ իր բանակները Հայաստանէն ետ քաշել, հայք կրցան դարձեալ շունչ առնուլ: Իսկ Վրաստանի մէջ առաջին անգամ Ափխազաց իշխանը՝ բագրատունի ցեղէ վրական իշխաններու մէկ մասին օգնութեամբ ջանաց ոտից հաստատուն կռուան մը գտնել: Աշոտ Մեծին 862ին իշխանաց իշխան անուանելէն ետքն է որ Թ. Արծրունի դարձեալ Վրաստանի իշխաններ կը յիշատակէ. «Բայց քանզի հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռնի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց եւ զԱղուանից, որ եղեւ իսկ²», Մինչեւ այս ժամանակս վրական Բագրատունիները պարզապէս Արտանուշի դաւառական իշխաններն էին եւ մերթ-յունաց՝ մերթ արաբացւոց գերիշխանութեան տակն եւ իբրեւ ամիրապետին աւատառունները՝ Հայաստանի՝ իրենց ցեղակցաց քաղաքականութեան կը

¹ Հմմտ. Թ. Արծր. Գ. ժ. էջ 176: Իտրուրի. Պատմ. Բ. չ. 17, 7, 10, 13. օ՛՛՛՛, 3, 5, 9. օ՛՛՛, 4. օ՛՛՛, 5. օ՛՛՛. 12. օ՛՛՛. Բրուսէ. Coll. d'hist. armén. I, Appendice, էջ 609—613. Daghabaschian, Gründung des Bagratidenreiches, էջ 31 յ՛՛:

² Թ. Արծր. Գ. ժ. 206. Հմմտ. Daghabaschian, յիշ. գործն, էջ 43:

Հետեւէին. Տիգրիսի արաբացի բռնակալներու ձեռքէն ազատելու համար աւելի սերտիւ կը միանային հեռաւոր Բաղդադի ամիրայեանին:

Տայքի Արամնուջի Բագրատունիներէն զատ՝ գիծ եւս կար Սպերի մէջ, որ այս ցեղին հին Բնագաւառն էր¹: Վերը տեսանք թէ ինչպէս Աշոտ՝ Շապուհի որդին եւ Աշոտ Մսակերի եղբորորդին՝ Թէոփիլոս կայսեր խաղաեակն արշաւանաց ժամանակ Սպեր գաւառին իշխան կարգուեցաւ²: Բուղայի արշաւանաց ժամանակն իսկ Սպեր գաւառին մէջ Բագրատունի ցեղէ իշխանիկ մը կը գտնենք, որ Յունաց ձեռքէն «գայլաբար» Արամանեակ բերդը կ'առնու եւ որուն քով կ'ապաստանի Վասպուրականէն Գուրգէն Արծրունին³:

Գեռ ի վիճակի չենք Բագարատ կիւրապաղատէն ետքը Ժամանակագրութեան ներկայացու-

1 Փաստ. Բիւզ. Ե. խգ. էջ 263:

2 Ի յառաջագունէ պէտք է ի բաց մերժել այն շատ հրապուրիչ գաղափարը, թէ հնարաւոր է վրական բագրատունեաց ծագումն այս դէպքիս մէջ փնտռել եւ Շապուհի որդի Աշոտն՝ Վրաստանի մեծ իշխանին Արններսեհի հօր Աշոտի հետ նոյնացընել ըստ Աոստանդինի. վասն զի այն Աշոտը Շապուհ Բագրատունի պատմագրին հայրն ըլլալով — եթէ Վարդանի վկայութիւնը բացարձակապէս անտեսենք — անկարելի է ըմբռնել թէ ինչպէս հնարաւոր է որ այսպիսի կարեւոր իրողութիւն մը, այսինքն Վրաստանի յետագայ թագաւորութեան պատմագրին հօր ձեռքովն իսկ հիմնարկութիւնը, բոլորովին մոռացութեան մէջ մնար:

3 Թովմ. Արծր. Գ. ժգ. 194. «Եւ եղեւ իբրեւ կատարեաց Բուխայ զանցս անցից ընդ Վասպուրական աշխարհս եւ խաղաց յարեւելս կոյս՝ եւ զնաց Գուրգէն ի Սպեր գաւառ. եւ էր յայնժամ առեալ (ի) Յունաց գաղաբար իշխանիկ կոչեցեալ ի սոհմէ Բագրատունի՝ զբերդն Արամանեակ կոչեցեալ: «Գողաբար» անշուշտ յատուկ անուն մը չէ. ես կը կարծեմ որ «Գալաբար» կամ «Գողաբար» ըլլալու է:

ցած կողմնական գծերու սերնդաբանական կծիկն քակելու. սակայն գոնէ կրնանք Վարդանի օգնութեամբ ժամանակագրին կոշտ սխալներն գտնել եւ ուղղել: Գոռարամ¹, Բագարատ կիւրապաղատին կրտսեր եղբայրը՝ Սմբատ Հայոց թագաւորին Աշոտ որդւոյն եղբայրը կը համարուի²: Եւ որովհետեւ Հայոց թագաւորն անոր կնոջ եղբայրն կ'անուանուի, ուստի այս խօսքերուս իմաստն աւ միայն կրնայ ըլլալ թէ անիկա յիշուայ էր Աշոտին՝ որ իշխանաց իշխան եւ յետոյ ալ Հայոց թագաւոր եղաւ, սակայն Վարդանի համաձայն փեսան՝ Գուարամի երեք եղբայրը՝ Բագարատ կիւրապաղատն էր: Գուարամ իբր թէ տիրած ըլլայ Ջալախեթի, Թրիալեթի, Տաշրաց, Աշոցաց եւ Արտասանի եւ սարակինոսաց դէմ պատերազմ մղած, «մերթ յաջող եւ մերթ անյաջող: Գուարամ իր երկիրներն իր Ատարնաս եւ Բագարատ եղբարց մէջ բաժնեց եւ Աշոցքը Հայաստանի թագաւորին՝ իր կնոջ եղբորն տուաւ:» Աշոտ իշխանաց իշխանի եւ Ափխազաց Գէորգի Ա. Աղծէփէլ թագաւորին միջեւ՝ Վրաստանի տէրութեան համար ծագած պատերազմին ժամանակ, որուն պատմութիւնը դժբախտաբար մեզի համար կորսուած է, վրական իշխաններն երկու կուսակցութեան բաժնուեցան. Նստրա՝ Գուարամ՝ մամիալի որդին եւ Գաւիթ կիւրապաղատին հօրեղբորորդին, ու Գուրգէն² Ափխազաց կողմնէին. մինչդեռ Գաւիթ եւ Լիպարիտ Հայոց կ'օգնէին: Նոյն ժամանակը Գուարամ կրօնաւոր եղաւ:» Լիպարիտ Թրիալեթի տիրացաւ եւ կղզեկարնի ամրոցը շինեց եւ Գաւիթ՝ Բագարատ կիւրապաղատի որդին՝ կ'իշխէր: Վարդանի համաձայն,

1 Բրոսէ, Hist. de la Géorgie, էջ 269. Այսպէս հասկնալու է այս տեղէքը, վասն զի Սմբատ Ապարատ Հայոց թագաւոր չէր այլ սպարապետ միայն:

2 Հաւանականօրէն Գուրգէն կիւրապաղատն է:

էջ 85, Աշոտ իրրեւ իշխանաց իշխան իր տերու-
թիւնը տարածեց Վրաստանի եւ Աղուանից վրայ
եւ Վաւկասեան ցեղերն նուաճեց, եւ իրեն միայն
թագն կը պահէր: Գաւթի կուսակցական գիրքին
կատարելապէս կը համապատասխանէ անոր Ատր-
նբրսեհ որդւոյն վարմունքը. եւ անտարակոյս անոր
համար ալ Աշոտէն իրրեւ աւատառու Վրաստանի
իշխան գրուեցաւ. իրապէս ալ Վարդան, էջ 86, կը
գրէ. «Այլ Աշոտ արայ գնէ իշխան Վրաց զքեւ-
որդի իւր (այսինքն զԳաւթի զորդի Բագարատայ),
եւ ինքն կատարի ի Քրիստոս եօթանասուն եւ մի
ամաց:» Խնդիր է միայն թէ արդեօք Վարդանի՝
Գաւթի անուանումն Աշոտի պահուածէն (885)
ետքը դնելն ուղիղ է: «Նոյն ժամանակներն (881ին)
Գուարամ մամիպլի որդին՝ Նասրա մատնութեամբ
սպաննեց Գաւթի Վիրապաղատն, որ Բագարատի
որդին եւ իւր հօրեղբայրն էր. Գաւթէն որդի մը
մնաց՝ Ատրնբրսեհ որ իւր հօրմէ ետքը թագաւոր
եղաւ¹:» Վարդանի համաձայն Գաւթի՝ Բագա-
րատի որդին՝ իւր Գորամ հօրեղբորմէն սպաննուե-
ցաւ² ուստի կ'երեւայ թէ Նասրա կամ Նասր յի-
րականին Գուարամ մամիպլի ուրիշ մէկ անունն է:
Յամենայն դէպս սակայն հիմայ յայտնի կ'ըլլայ թէ
այն տեղեկութիւնը, որուն համաձայն Գուարամ
իր երկիրներն իր եղբարց մէջ բաժնած եւ ինքն
կրօնաւոր եղած է, մտացածին գիւտ մըն է: Գաւթի
Վիրապաղատին սպաննումէն ետքը Հայերն, Լի-
պարիտ եւ Վիրք եւ Գաւթի եղբայրն Աշոտ՝ Նասրի
դէմ միաբանեցան, ճակատ մը մղեցին, զինքն
փախչելու ստիպեցին եւ ամրոցներն ձեռքէն առին.
Նասր Յունաստան կայսեր փախաւ եւ երկայն ատեն

1 Hist. de la Géorgie, 270, 271:

2 Ժամանակագրութեան մէկ ձեռագիրը՝ հարկաւոր
կը համարի ի վեր հանելու թէ Գաւթի՝ իր հօրեղբորորդի
Նասրայէն սպանուիլը թէեւ Գուարամի կենդանութեան
ժամանակ եղաւ, սակայն առանց անոր մեղսակցութեան:

Հոն մնաց: Կոստանդինուպոլսոյ արքունիքն կը գտնուէր նաեւ Ափխազաց Գեմետր թագաւորին Բագարատ որդին որ իր ազգականներէն ստիպուած էր փախչիլ: Երբ վերջինս յաջողեցաւ յունական ուժով Ափխազիստանի տիրել եւ Յոհանի որդի՝ Ատրներսեհ թագաւորն հեռացրնել, Յունաստանէն Նասրն ետ կանչեց՝ ձեռքն բանակ մը տուաւ որով վերջինս Սամցխէ մտաւ, ուր կրցաւ Գուարամի ձեռքէն գրաւուած Օժրիէ, Ջուարխցիխէ եւ Լոմսիանթա երեք ամրոցներն բռնել: Անթիւ բանակաւ մը Նասր Քարթլիի Ատրներսեհ թագաւորին դէմ քալեց, սակայն վերջինս Գուրգէն Արապաղատէն եւ անոր որդիներէն, նաեւ հայերէն օգնութիւն գտնելով, յաղթեց Նասրին եւ անոր նիդակակից Բաքաթար ափխազին, Ոսթի մթաւարին եւ Ափխազաց երիտօթաւին: Նասր գերի բռնուեցաւ եւ Սամցխէի ձորին մէջ սպանուեցաւ (888): Իրմով սպանեցաւ այս գիծն ալ, որովհետեւ իր եղբայրն Աշոտ արդէն 869ին մեռած էր: Ասկէ անմիջապէս ետքն կը կարդանք թէ Գուրգէն Արապաղատն ալ իր մահուանէն յառաջ Ատրներսեհի եւ Սմբատ մամիալի որդւոյն Արտանուջի Բագարատին հետ գժտուեցաւ — վասն զի Տայքի մէջ իր կալմախ կալուածն թողուց եւ կ'ուզէր Շաւշեթի եւ Արտանի մէջ ապրիլ — եւ անոնց հետ Արտանուջի ձորին մէջ Մգլինաւ գիւղին մօտ կռիւ մը մղեց, բայց յաղթուեցաւ եւ գերի ինկաւ եւ առած վերքերուն հետեւութեամբ ալ մեռաւ:

Թէ Ատրներսեհ Գ. երբ մեռաւ, չենք գիտեր. ժամանակագիրը կիրապաղատութեան պատուոյն մէջ իրեն յաջորդ կը դնէ անոր Գաւիթ որդին, որ 937ին մեռաւ¹: Կոստանդին Ծիրանեծնի աւանդածներէն պէտք ենք հետեւցընել թէ այդ յետոյ՝ կողմնակի գծէ սերող Ատրներսեհի (Գ.) անցաւ, որ Բագարատ Մագիստրոսի որդին եւ վրաց

¹ Բրոսէ, Hist. de la Géorgie, 281:

իշխանին եւ Արտանուշի տիրոջ Գուրգէն առաջնոյն եղբայրն էր. այս տան մէջ մնաց կիւրապաղատութիւնը ժառանգարար: Ժամանակագրութիւնն երկու Ատրնեբսեհ կիւրապաղատներն իրարու հետ շփոթած է եւ Կոստանդինէ մեղի ծանօթ Ատրնեբսեհ Գ.ի չորս որդիներն՝ Ատրնեբսեհ Գ.ի կը համարի: Այս այսպէս բլալով հանդերձ Ատրնեբսեհ Գ.ը Բագարատ Մամիլի որդին կ'ընդունի, բայց կիւրապաղատ չի համարիր¹. արդ քանի որ իր չորս որդիներն ձեռքէն կ'առնուին ինքը պետք է կրօնաւոր եղած բլայ: Իր շարրորդ որդին՝ Սմբատ կիւրապաղատ թագաւորը, որ 959ին մեռաւ, կը համապատասխանէ Գաւիթ թագաւորին եղբոր եւ Ատրնեբսեհ թագաւորին որդւոյն²:

Գուրգէն Բ., վրաց իշխանը եւ Քուելի եւ Աջարայի տէրը, որ յետոյ իր աներոջ Աշոտ Կիսկասի ձեռքէն Արտանուշ ամրոցն առաւ, կը նոյնանայ երիւթաւն երիւթաւին հետ որ Գաբրոն վկային վարուց համաձայն Քուել բերդին տէրն էր³: Բագարատ՝ Ափիսպաց Գէորգի թագաւորին կրտսեր եղբայրն՝ իր փեսան՝ իսկ շերեթի Իշխանիկն իւր Գինար քրոջ որդին էր⁴: Կոստանդին զինքն Ատրնեբսեհ Գ. կիւրապաղատին որդւոց հօրեղբորորդին (ἔξ ἁδελφός) կ'անուանէ, որով անշուշտ կ'ուզէ ցուցնել թէ կողմնակի գծի մը սերունդ էր, եւ ստուգիւ ալ Ժամանակագրութիւնը զինքն այդպիսի գծէ մը յառաջ կը բերէ: Սակայն այսու հանդերձ ուրիշ բմբռնում մը ընդունելի դարձած է, որուն համաձայն

¹ Hist. de la Géorgie I, էջ 272:

² Hist. de la Géorgie I, 272:

³ Բրուէ, էջ 276, ծն. 3. տես իմ գործս Ost-europäische und ostasiatische Streifzüge, էջ 184:

⁴ Բրուէ, 278, 279:

այս Գուրգէնը յետսածին մէկ որդին է Գուրգէն առաջնոյն, որ ըստ Կոստանդինի անգլաւակ մեռաւ:

Ասոր հակառակ Բագրատունեաց հետ որեւիցէ առնելիք տալիք չունին Գեորգ իշխանը եւ անոր Արնիկս եղբայրը, «Վրաց երկու քաջ զօրավարները», որոնք Մովսէս Կաղանկեայ համաձայն Սմբատ խոստովանողին կառավարութեան սկիզբներն Եռասուֆ բ. Աբու Սաճ զօրավարին ընդդիմացան երբ վերջինս Վրաստան կողպուտի արշաւանք մը կ'ընէր, բայց անկէ անողորմաբար գլխատուեցան¹. ասոնք Ուտիի Սննորդնաց² (Մաճառ) իշխաններն էին ինչպէս կ'իմանանք Յովհ. Կաթուղիկոսէն (Երուսաղէմ, էջ 235 յղ.):

Կոստանդին Ծիրանեծնի վրական Բագրատունի զժերու ազգակցութեան հայող այն տեղիքն De admin. imp. c. 46, էջ 207, 15, ուսկից շփոթած է Բրոսէ, Additions, էջ 149, այն առնն միայն հասկնալի կ'ըլլայ երբ կ'իմանանք թէ Սմբատի որդի Դաւիթն իւր Բագարատ եղբորմէն ամբողջ սերունդ մը աւելի կրտսեր է եւ թէ երկուքին մայրերն ալ տարբեր են: Ուրեմն ըստ այսմ ալ հօրեղբոր եւ եղբորորդւոյ մայրերն երկու հօրեղբոր աղջիկներ են, այսինքն թէ Ատրներսեհի հայրը՝ Բագարատ իւր խորդ մօրը հօրեղբոր աղջկան հետ ամուսնացած էր, որ անկարելի բան չէ: Ի յետագայս «այժմեան մագիստրոս» կոչուած Ատրներսեհը՝ Բագարատ մագիստրոսին որդին, որուն քոյրը Դաւիթի Սմբատ որդին կնուութեան առած էր, բացարձակապէս չի կրնար նոյնացուիլ Ատրներսեհի հետ ինչպէս կ'ընէ Բրոսէ, որ «այժմեան Կիւրապաղատ» Աշոտին հայրն էր: Վասն զի Ատրներսեհ

¹ Մովս. Կաղանկ. Գ, իա, Հտր. Բ. 64/65:

² Տես իմ յիշ. գործն, էջ 38 յղ.:

մագիստրոսը, ինչպէս «այժմեան մագիստրոս», բա-
ցատրութիւնը կը ցուցնէ՝ զործին գրութեան ժա-
մանակն (952) դեռ կենդանի եւ Աշոտ Կիւրապա-
ղատին հեռաւոր մէկ ազգականն (*ἀνεψιός*) էր (De
admin. imp. c. 45, էջ 203, 16) էր. մինչդեռ Աոր-
ներսէս Կիւրապաղատն Ռոմանոս Լեկապենոս
(920—944) կայսեր Գուրգէն Բ. ի համար մագիս-
տրոսութեան պատիւ բերել տուած ժամանակն
արդէն մեռած էր: Բագարատ Մագիստրոսը, Աոր-
ներսէս Մագիստրոսին հայրը, Յովհաննէս Պրոտոս-
պաթարիոսի (Կուրկուաս) հետ 934ին թէնոզուպոլ-
սոյ (Կարին) դէմ կը կռուի¹, եւ անկէ գրաւուած
Մաստատն կ'ընդունի, զոր սակայն Կարնոյ Մու-
սուլմաններուն կը յանձնէ վերստին (էջ 204, 17):
Այս Բագարատ Մագիստրոսով ուրիշ մէկն չի
կրնար հասկցուիլ բայց եթէ Աշոտ Կիւրապաղա-
տին եղբայրն, որ ժամանակագրութեան համաձայն
Քարթլիի թագաւոր եւ Կիւրապաղատ էր եւ 945ին
մեռաւ, եւ ստուգիւ ալ ասիկա Աորներսէս
անուամբ որդի մը ունէր, որ իւր հօրեղբորմէն
եաքը Կիւրապաղատ եղաւ բայց իր որդիներն
դէնքն վաճը մացուցին, ուր 961ին մեռաւ²:
Ուստի եթէ Կոստանդինի Աորներսէս մագի-
ստրոսը՝ տիրող Կիւրապաղատին (Աշոտի) *ἀνεψιός*ն
կը համարի, այս բառը «եղբորորդի» իմաստով կը
գործածէ:

Դաւթի անզաւակ մեռնող եղբայրը Սպան-
դիադ, զոր Կոստանդին միայն կը յիշէ, առաջին
հայեցուածքով առեղծուածային կ'երեւայ. սակայն
այն տեղեկութիւնը թէ Սպանդիադի մարմինն, ի
բաց առեալ սիրան, զոր պատերազմի ժամանակ
սրտապահով մը սովոր էր պաշտպանել, անվիրաւո-
րելի էր, աներկբայ կը ցուցնէ թէ այս Սպանդիադը

¹ De Muralt, Essai de chronographie byz. I, 590.

² Hist. de la Géorgie I, 280, 284:

նոյն է իրանական այն համբաւաւոր վիպական դիւ-
ցաղնին հետ, որ Այյ-Աշտասպի որդին էր եւ որուն
կը վերագրուի Ալանաց ամրոցին կառուցումն¹։
Սակայն Վիրք զինքն իւրացուցած են. անոր համար
ալ կը պատմեն թէ Պարսէյ գէ՛մ կռուած՝ անոնց
յաղթած եւ ինք զինքն անոնց ահաւոր բրած է²։
Արեւելեան Կաւկասի մէջ Ասպանդիսոյ հսկան
նոյն իսկ իբրեւ աստուած կը պաշտուէր եւ տեղացի
Հոններէն Թանգրի-Խանին հետ կը նոյնացուէր³։
|| Իսկ վրական Բագրատունեաց այսչափ յառաջ եր-
թալը եւ Ալանաց ամրոցին հիմնադիրն իրենց տոհ-
մածառնին մէջ առնուլը անով կը մեկնուի որ ստու-
գիւ ալ Չ. գարուն սկիզբն Բագրատունի ցեղին
ներկայացուցիչ Սպանդիսոյ մը կար. Բարգէն
Կաթողիկոսի սինոդական թղթոյն մէջ, Կաւասի
տասնուութերորդ տարիէն (505/6), «Սպանդիստ
Հայոց ասպետի» մը կը հանդիպինք (Գիրք Թղթոց,
էջ 42)։ Աւանդութեան այսպիսի ակնարկութեանց
հետեւած է Մ. Խորենացին⁴, որուն զիւտերն
Վրաց քով անպտուղ գետնի վրայ չեն ինկած || :

1 Տես իմ յիշ. գործն, էջ 166: Հմմտ. Իրն աւ-
ֆար. Կ 90, 2:

2 Կոստ. Ծիր. De admin. imp. c. 45, էջ 198,
5-14. «Այս Սպանդիատը, ինչպէս իրենք կը պատմեն, Աս-
տուծակ շնորհք ընդունեցաւ որ սրով պատերազմի մէջ
անոր եւ ոչ մէկ անգամն վիրաւորուի, ի բաց առեալ
սիրտը, զոր կռիւներու մէջ պահպանակով մը կը պաշտ-
պանէր, ասոր համար ալ Պարսից ահարկու էր, որոնց դէմ
կռուեցաւ եւ յաղթեց եւ ծանօթ վրացիները դժուարամա-
տոյց տեղեր (ԴԱՐԻՄԱ!) ժողովեց, զորս ցոյսօր դեռ կը
բռնեն անոնք, ուր կամաց կամաց բազմացան ու աճեցան
եւ մեծ ազգ դարձան»:

3 Մովս. Կազնկ. Բ. ի. հար. Ա. 372, 378, իս՝
382/84, 388:

4 Վրական Ժամանակագրութեան մէջ էջ 31, նշա-
նաւոր Սպանդիատ Ռուսլի հսկան՝ ուղիղ կերպով, Պարսից
թագաւորն է:

Խորենացին կ'աւանդէ Բ. կգ. էջ 142, թէ Բագրատունեաց մէջ ի սկզբան հրէական անուններ կը գործածուէին՝ զօր. ԲԱԳԱԴԻԱ, ՍԱՓԱՏԻԱ, ՎԱՉԱՐԻԱ եւն եւն. եւ ստուգիւ ալ Սափատիայ եւ Վաղարիայ անուամբ երկու Բագրատունիներ կը յիշէ Բ. իգ. 99 Ենանոսի որդիներն, որոնք Արշամ թագաւորէն բռնադատուեցան հրէութիւնն ուրանալու: Արդ քանի որ Խորենացւոյ տուած բանալիներուն համաձայն ԲԱԳԱԴԻԱ՝ ԲԱԳԱՐԱՏԻՆ հրէականն է ՎԱՉԱՐԻԱ՝ ՎԱՐԱՉԻՆ¹, ՇԱՄԲԱՏ՝ ՍՄԲԱՏԻՆ, ուստի տարակոյս չի մնար թէ իւր «գրութեան» համաձայն ՍԱՓԱՏԻԱՅԻ մէջ ալ Բագրատունի տան ժառանգական տիտղոսն, ԱՍՊԵՏ, կեցած է². սակայն Սափատիայի մէջ կարելի է Սպանդիազն ալ տեսնել. արդ քանի որ Խորենացիէն Բագրատունեաց հրէական ծագումն յայտնի եղաւ, շատ շուտ Ս. Գրքի մէջ գտան Սափատիայը Դաւթի եւ Աբիտաղայ որդին (Բ. Թագ. Գ, 4. Ա. Մն. Գ. 3)³. եւ արդէն Դաւիթ թագաւորին կը հասցընէ նաեւ Վրացի Բագրատունեաց քով սովորական եղած Դաւիթ անունը: Եւ մէյժ որ իրն այսչափ յառաջացաւ, այն ատեն աւելի ազնուագոյն երեւցաւ Բերսաբէէ սերիլը, որով Սողոմոնի ալ ազգակից կ'ըլլային: Այս կերպով հին իրանական Սպանդիազ դիւցազնը Դաւթի որդի եւ Վրացի Բագրատունիներու նախահաւին եղբայրն եղած է: Ուստի Խորենացւոյ դարակազմիկ գիւտերէն վերջն

¹ ՎԱՐԱՉ-ՏԻՐՈՑ եւ ՎԱՐԱՉ-ՍԱՀԱԿ Բագրատունեաց գործածական անուններն են:

² Մարարասայ անուանեալ հայկական հին պատմութեան մէջ (Սերէոս, էջ 6, 12) կայ Առաք, որդի Բիւրամի (Բիւրամ?):

³ Հմմտ. A. Carrière, La légende d'Abgar dans l'histoire d'Arménie de Moïse de Khoren. Centenaire de l'Ecole des langues orientales vivantes. Paris 1895, էջ 385.

է որ Ախրք գրգուեցան յատուկ գիւտերու եւ անոր ակնարկութեանց հետեւելով իրենց ծագումն Գաւթի տան մէջ գտան: Առտանդինի Աբաջի Ժողովրդեան հայող մէկալ տեղեկութիւնը՝ թէ «Երբ Հերակղ կայսրը զինու զօրութեամբ Պարսից գէմ արշաւեց, Ախրք ալ իբրեւ գաշնակից իրեն հետն էին, այն ժամանակէն ի վեր պարսկական շատ մը քաղաքներ եւ երկիրներ նուաճեցին, աւելի Յունաց Հերակղ կայսեր վախովն քան թէ իրենց ուժով կամ զէնքերովն: Ասան զի Հերակղ կայսերմէ մէյմը յաղթուելէն եւ ջախջախելէն եւ իրենց առաջնորդները կորսնցընելէն ետքը Պարսիկք, ոչ միայն Աբաջիներէն կը յաղթուէին գիւրաւ, այլ նաեւ Սարակինոսներէն¹,» (էջ 198, 14—22) այսչափս միայն իրականութեան հետ կը միաբանի որ Ախրք ալ գոնէ ժամանակ մը իբրեւ գաշնակիցք կայսեր բանակին մէջ կուուեցան² եւ ժամանակագրութեան համաձայն կայսերմէ Քարթլիի միժար անուանուած Ատրներսեհը Զիբզու Խաքանին Տիդիսի պաշարման ժամանակ կ'օգնէր, մինչդեռ Արաստանի օրինաւոր իշխանը մինչեւ իր իշնալը Պարսից հաւատարիմ մնաց (տես վերը էջ 83 եւ 95): Առտանդին Ծիրանեծնէն վերջը (վրական) Բագրատունեաց գաւթեան ծագումն ընդունող առաջին հեղինակը, որ նոյն ծագումնէն կը համարի նաեւ հայկականը, Մխիթար Անեցի ժամանակագիրն է (ԺԲ գարուն), սակայն ինքը Արական ժամանակագրութիւնն արդէն կը գործածէ³: Թէ արդեօք վերջինս Սպանդիադը Բագրատունեաց նախահօր եղբայրն կը համարի թէ

¹ Հմմտ. Hist. de la Géorgie, էջ 234:

² Հմմտ. Մասուգի, Քիթապ առ Թանախիհ Ա Օ Ա, 6 յջ.:

³ Մխիթար Անեցւոյ, Պատմութիւն, էջ 16, 30 (այլ. Պատկանեան):

ոչ, կարելի չէ ըսել: Սակայն այդ՝ ժամանակագրու-
թեան մեզի հասած կերպարանքին տակ կը
պակսի: Վարդան որ ՂԵԽԻԹար յաճախ կը գոր-
ծածէ, ինք զինքն գովելի բրած է այնու որ,
անոր Բագրատունեաց ծագման պատմութունը
կ'անգիտանայ¹:

Վրական Բագրատունեաց հետագայ ճիւղա-
գրական տախտակին մէջ՝ ժամանակագրութեան
աւանդածներն ընդհանր տպուած են:

1. Գուրգէն Ա. Ատրնբրեսէ թագաւորին քեռոր-
դին կը համարուի Յովհ. Կաթ. տպ. Երս. էջ 387.
Ատրնբրեսէ (Գ) Կիւրապաղատի եւ Դաւիթ Մամիսի
մայրերը երկու մորաքոյրներու աղջիկներ են Կոստ. De
admin. imp. էջ 207, 16 յջ.:

2. Յովհ. Կաթ. էջ 182:

3. Յովհ. Կաթ. էջ 183. Ժամանակագրութեան
էջ 291 Դաւիթ Կիւրապաղատ-թագաւորն է, որ 937ին
մեռաւ:

4. Յովհ. Կաթ. էջ 252, 255:

5. Իւր թուը Գուրգէն՝ Երիսթաւ երիսթաւացի՝
Ատրնբրեսէ (Գ) Կիւրապաղատի որդւոյ *εξάδελφος* կը
կոչուի Կոստ. էջ 209, 25:

6. Ժամանակագրութեան մէջ այս Դաւիթիս
սերնդաբանութիւնը շատ շփոթ է, վասն զի մերթ Ատըր-
նբրեսէի՝ Երիսթաւ երիսթաւացի, որդին կը համարի եւ
մերթ Բագարատ Մամիսի. վերջինս յամենայն դէպս
սխալ է քանի որ Բագարատ՝ ըստ Կոստանդինի՝ երեք
որդի միայն ունէր:

7. Կոստ. էջ 208, 11. 209, 3. 210, 7, 12/13,
213, 8/9: Վախուշտի թուականներուն համաձայն
Ատրնբրեսէ (Գ.) Կիւրապաղատէն յառաջ մեռած է.

¹ Եւս հետեւութեան կը յանդիմար ամենայն ստու-
գութեամբ եթէ էջ 91-92ը, համեմատեմք էջ 81-82ին հետ՝

սակայն այս ըստ Կոստանդինի՝ առանց տարակոյտի սխալ է:

8. Յովհ. Կաթ. էջ 183, Կոստ. էջ 206, 9 յջ.:

9. Յովհ. Կաթ. էջ 379 (331):

10. Կոստ. էջ 207, 4, 17. 209, 18. 212, 4, 23 յջ. 213, 10, 20:

11. Կոստ. էջ 209, 18. 210, 9. 211, 12. 212, 4. 213, 6, 9:

12. Կոստ. էջ 204, 17/18, 24. 207, 5/6, 20:

13. Կոստ. էջ 210, 4. «Չորք եղբարք, Ատրնեք-սեհ Կիւրապաղատի որդիք»:

14. Կոստ. էջ 207, 20/21. 203, 16:

15. Կոստ. էջ 207, 8 յջ., 19 յջ.:

16. Hist. de la Géorgie, էջ 287, 292, 295. ասոր հակառակ էջ 285, Բագարատ Գ. Կանուանուի Գեմեարի եւ թեւեղոսի — Գեորգի Բ. ի թող — մէկ քրոջ որդին: [Բոլորովին տարբեր կը ներկայացընէ Մխիթար Անեցին առ վարդանայ էջ 92, որ այս Գորգէնը՝ Հայոց Աշոտ Գ. Ողորմած թագաւորին († 976) երրորդ որդւոյն հետ կը նոյնացընէ: Սակայն այս ծանօթ չէ ժամանակակից Ստ. Ասողիկի, որ բացայայտ կերպով իրարմէ կը զատէ Հայոց Սմբատ Բ. Տիեզերակալ թագաւորին եղբայր Գորգէնը (Գ. Լ. էջ 256) եւ վրաց Բագարատ թագաւորին որդին (Գ. իր. էջ 252, լը. 267, խա. 270) ու Ափխազաց (Սմբատ եւ) Բագարատ թագաւորին հայր՝ Գուրգէնը (Գ. իր. 252, խգ. 276):]



Բ Ո Վ Ա Ն Գ Ը Կ Ո Ւ Թ Ի Խ Ն

Ա. Հայ-Բազրատունիք:

Մինչ եւ Զ. դար ծանօթ Բազրատունիք 1: - Ծիւ-
ղազրական տախտակ հայ Բազրատունեաց մինչեւ
Թ. դար. Սմբատ Վրկանից մարզպան 3: - Վարագ-
տիրոց (Ա.) 4: - Վարագ-Սահակ, Սմբատ (Բ.) Աս-
պետ 5: - Սմբատ (Գ.) տէր Դարբինից, Թէոդ. Ռշտունի,
Գրիգ. Մամիկոնեան. Ղեւոնդի Դ. գլխոյն ժամանակա-
զրական վրիպակներն. Համագասպ կիրապաղատ Մա-
միկ., Վարդ Ռշտունի, Մուշեղ Մամիկ., 650ի սպ-
ստամբուժիչն 5-9: - Սմբատ (Բ.) Ասպետ, Մանուէլ
Մագիստրոս 9/10: - Աշոտ (Բ.) Պատրիկ, 685ի Խազրաց
արշաւանքը, Ասողիկի հակասող տարեթուերը, Գրիգ.
Մամիկ., Սահակ Կթղ., Ներսէս Կամսերական 10-13: -
Սմբատ (Գ.) Պատրիկ 698/705ին կիրապաղատ. Վա-
րագտիրոց (Բ.), Մանուէտ ոստիկանի ըրածներն ի Հայս
եւ Ղեւոնդի տարեթուերն. Վարդ Ռշտ., Աշոտ (Գ.),
Սմբատ (Ե.) իշխ. Վասպուր. որդի Աշոտի (Բ.) 705ի
Նախիջեւանի կոտորածն. Սմբատի (Գ.) Հայաստանէն
հեռանալն, դածք, մահը, «Բիրատեան» անմեկնելի-
պատմագրած հատածներուն քննութիւնն 13-27. - Աշոտ
(Գ.) որդի Վասակայ, Գր. եւ Դաւիթ Մամիկոնեանք 25,
27/28: - Սահակ որդի Բազարատայ, Սմբատ սպարա-
պետ 28/29, Վասակ, Աշոտ, Սահակ, Բազարատ սպր.
29/30: - Աշոտ (Զ.) Մսակեր, Տէլ-Մահրէի տեղեկու-
թիւնն, Ապիկուռա, Նոմնոս, 30-33: - Եաքուբի պատ-
մութիւնն. Վասպուրական Բազրատունիներէն Արծրու-
նեաց կ'անցնի, առաջինք կը տիրեն Տարօնի եւ Տայոց.
Սեւաղա պարսիկ, շրջանիս (786-847) հայող հատածք
Եաքուբիէ, Ներսէս Փիլիպեան, Սահլ Սմբատեան, Կայ-
սիկը, Խահակ Բ. Իսմայիլ եւն. Մ. Կաղնկ.ի պատմու-
թիւնը հակակշռուած Եաքուբիով. Բաղդոյի ամիրա կամ
Խազր Պատղա 33 57, Դաւիթ, Սահակ, Մուշեղ եւ Բա-

գարատը որդիք Մսակերի. Բուռամեանց աղանդին ծագում՝ ըստ Տէլ-Մահրէի, Մահի, Զաւետեան ք. Սահակ (արքայ. Սահլ), Բարայք, ժամանակագրական ինդիքը 57—63: — Բազարատ իշխ. Տարօնի եւ իր գաւառներն 63—64. Սմբատ-Ապարաս, որդի Մսակերի 64—67. վերջին անդամը ազգատախտակին 67/68:

Բ. Վրական Բազրատունիք:

Մուտք 73: — Ե. րդէն մինչեւ Էրդ դար յիշուած Վրաստանի իշխանք 74: — Հայ եւ Վրական եկեղեցիներու քաժամման պատմութեան աղբիւրներուն քննութիւնն. Վրաստանի նոյն ժամանակի քաղաքական դրութիւնը. Մօրիկ եւ Հերակղ կայսերաց գործունէութիւնն ի Վիրս. Վրաստանի իշխանք մինչեւ Թ. րդ դար եւ ժամանակագրական տախտակ 75—92: — Դաւթեան ծագման աւանդութիւնն ըստ Կոստ. Ժիրանեծնի 92: — ժամանակագրութեան մէջ աւանդութեանս զարգացումն 93 յէ.: — Բազրատունեաց կարծեցեալ առաջին գաւառտան ի Վիրս եւ զահակալութիւնն 93 յէ.: — Բազրատունեաց գաղթելու պատմութեան երկրորդ խմբագրութիւնն 97—100: — ծննդաբանութիւն վրական՝ եւ պատմութիւնն հայ Բազրատունեաց ըստ Վարդանի (Շապուհ Բազրատունիէն) Թ. դարու առաջին եռամասէն ետքն 100—106: — Վրական Բազրատունեաց պատմութիւնն մինչեւ Բուդա, ըստ ժամանակագրութեան հակակշռեալ Եաքուրի պատմութեամբ 106—120: — Վարդանի եւ ժամանակագրութեան սերնդաբանութեան յարաբերութիւնը, Դաւթեան ծննդաբանութեան ուշ ժամանակի ծագումն. Բազրատունեաց Վրաստան գալուն ուղիղ ժամանակը. Վրական թագաւորութեան քարծումն. Ս. Աբրի վկայաբանութիւնը 120—132: — Աշոտ Կիւրապաղատ 133: — Բազրատունի կիւրապաղատներն եւ Իսահկ ք. Իսմայիլ 133—138: — Վրական Բազրատունիք եւ Ափխազիստանի եւ Հայաստանի իշխաններն 139—142: — Յաջորդութիւն եւ ազգակցութիւն կիւրապաղատներուն Ժրդ դարուն 162 յէ.: — Վերլուծում Կոստ. Ժիրանեծնի ծագման աւանդութեանն. Սպանդիատ. 144—149: — Տոճմաճառ վրական Բազրատունեաց մինչեւ Ժ. րդ. դար 149—150:

ԱՂԳՈՅԻՆ ՄՈՏՆՆԱԳՐԱՆ

- Ա. Գալեմքեարեան Հ. Գ. Վ., Ուսումնասիրութիւնը Լեհաստանի ղառաստանագրոյն: 1. Պիշոֆ, Լեհաստանի հին իրաւունքը: 2. Գալեմքեարեան, իրաւունք Հայոց: 1890: Էջ 85+59: ֆր. 1.25
- Բ. Մեմեմիշեան Հ. Գ., Ազգաբանութիւն ազն. գարմին Տիւրքանց: 1880: Էջ 50: ֆր. 1.—
- Գ. Տաշեան Հ. Յ., Ազգաբանութիւն առ Գեորգայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ազգաբանութեայ գրոց: 1891: Էջ ԺԱ+159: ֆր. 1.25
- Դ. Տաշեան Դ., Արեւելեան Հայքի Պուրովիւն: Թրգմ. Հ. Գ. Վ. Գալեմքեարեան: 1891: Էջ 79: ֆր. —85
- Ե. Տաշեան Հ. Յ. Վ., Ուսումնասիրութիւնը Ստոյն-Կալիստենեայ Վարոց Աղեքսանդրի: 1892: Էջ Դ+272: ֆր. 3.—
- Զ. Տրվիշե Ա. եւ Գ. Փիսոն, Ուղեւորութիւն ի Փոքր Ասիա: Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1892: Էջ 82: ֆր. 1.—
- Է. Մառ Ն., Ամսոնային ուղեւորութիւնից դէպ ի Հայս: Թրգմ. Ո. Անոպեան: 1892: 89: ֆր. 1.25
- Ը. Կարրիէր Ա., Նորագոյն աղբերք Մովսիսի Խորե-նացոյ: Հտ. Ա.: Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1893: Էջ Ժ+51: ֆր. 1.—
- Թ. Գալեմքեարեան Հ. Գ. Վ., Պատմութիւն հայ լրագրութեան: Հտր. Ա. 1794—1860: (1 լուս-նկարով): 1893: Էջ 232: ֆր. 2.50
- Ժ. Կոնիքի Փ. Կ., Քննութիւնը գրոց Դաւթի Անյաղթի: Թրգմ. եւ յաւ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1893: Էջ Է+92: ֆր. 1.25

- ԺԱ. Գովրիկեան Հ. Գ. Վ., Հայք յեղիսարեթու-
պոլիս Դրանսիլուանիոյ 1680—1779: (1 զըն-
կատիս.) 1893: Էջ Ժ+533: Ֆր. 4.50
- ԺԲ. Խաչաթեան Գր., Ձնորք Գլակ, համեմատական
ուսումնասիրութիւն: 1893: Էջ Զ+78: Ֆր. 1.—
- ԺԳ. Տէր-Մովսիսեան Փ., Հայ զիւղական տունը:
Թրգմ. Հ. Բ. Վ. Պիլէգիկճեան: (6 տխտի. 55
պտկ.) 1894: Էջ Ը+103: Ֆր. 2.—
- ԺԴ. Կարրիկէր Ա., Նորագոյն աղբերք Մովսիսի Խորե-
նացոյ, Հտր. Բ. կամ Յաւելուած: Թրգմ. Հ. Ե.
Վ. Տաշեան: 1894: 8^o Էջ ԺԱ+43: Ֆր. 1.—
- ԺԵ. Տաշեան Հ. Ե. Վ., Ուսումնասիրութիւնք հայերէն
փոխառեալ բառից: Ա. Հ. Հիւլաշման, Սեմական
փոխառեալ բառեր հին հայերէնի մէջ: Բ. Փորթէ-
ման Կ., Յունական փոխառեալ բառեր հայերէնի
մէջ: Գ. Հ. Հիւլաշման, Հայկական Յատուկ անուանք:
1894: Էջ Թ+145: Ֆր. 2.—
- ԺԶ. Տաշեան Հ. Ե. Վ., Մատենագրական Մանր
Ուսումնասիրութիւնք. Մասն Ա: Ա-Զ. Նեմեսիոս,
Պրոկղ Դիաղոխոս, Խոսրովիկ, Գիրք Հերձուածոց,
Պրոկղ եւ Սեկունդոս: 1895: Էջ ԺԲ+296:
Ֆր. 3.60
- ԺԷ. Տաշեան Հ. Ե. Վ., Հայկական աշխատասիրութիւնք
հայագէտ Պ. Փէթթէրի, ամփոփուած եւ թարգմ.
ծանօթութեամբք: 1895: Էջ Թ+202: Ֆր. 2.50
- ԺԸ. Տիւրեան Կ., Սեւ ծովու ոռոսական եզերքը:
1895: Էջ 92: Ֆր. 2.—
- ԺԹ. Գովրիկեան Հ. Գ. Վ., Դրանսիլուանիոյ Հայք
Մետրապոլիսը կամ Նկարագիր Կերլս Հայաբա-
ղաքի ի զիր եւ ի պատկերս: 1896: Էջ Թ+352:
Ֆր. 3.60
- Ի. Տաշեան Հ. Ե. Վ., «Վարդապետութիւն առա-
քելոց» անվանեալական կամոնացմատեանը. Թուղթ
Յակոբայ առ Կողբատոս եւ Կանոնք Թաղղէի:
1896: Էջ Թ+442: Ֆր. 6.—
- ԻԱ. Տոմաշէկ Վ., Սասուն եւ Տիգրիսի աղբերքաց
սամանները: Պատմական եւ տեղագրական հե-

- տազօտութիւն: Թրգմ. Տ. Բ. Պիլէզիկճեան: 1896:
Էջ Է+62: Ֆր. 1.—
- ԻԲ. Կարրիէր Ա., Արգարու զրոյցը Մովսէս Խորե-
նացոյ Պատմութեան մէջ: Թրգմ. Տ. Գ. Վ. Մէնէվիշեան: 1897: Էջ ԺԵ+107: Ֆր. 1.50
- ԻԳ. Յովնանեան Տ. Ղ. Վ., Հետազօտութիւնը Նախ-
նեաց ուսման վրայ: Ուսումնասիրութիւնը եւ
քաղուածներ, Մասն Ա. Ռամկօրէն մատենագրու-
թիւնը: Տետր Ա: 1897: Էջ Ը+272: Ֆր. 4.—
- ԻԴ. Յովնանեան Տ. Ղ. Վ., Հետազօտութիւնը Նախ-
նեաց ուսման վրայ: Տետր Բ: 1897: Էջ Ա—Ը:
273—522: Ֆր. 3.—
- ԻԵ. Գեղցեք Տ., Համառօտ պատմութիւն Հայոց: Թրգմ.
Տ. Գր. Վ. Գալէմբեարեան: Յաւելումս 1. Յանկ
Հայոց կոտորածներու առթիւ լոյս տեսած գրքերու:
2. Գաւազանագիրք Կաթողիկոսաց եւ Պատրիար-
քաց Հայոց: 1897: Էջ Ը+130: Ֆր. 1.50
- ԻԶ. Մեանէվիշեան Տ. Գ. Վ., Գիրք (կամ՝ յօդուած)
գրելու արուեստը: Յաւելում՝ Գիրք կարգաւոր
արուեստը: 1898: Էջ Է+118: Ֆր. 1.25
- ԻԷ. Խաչաթեան Գր., Մ. Խորենացու նորագոյն
աղբիւրների մասին քննադատական ուսումնա-
սիրութիւնը: 1898: Էջ Է+53: Ֆր. 1.—
- ԻԸ. Տաշեան Տ. Յ. Վ., Ակնարկ մը հայ նագրու-
թեան վրայ: Ուսումնասիրութիւն Հայոց գրու-
թեան արուեստին: (10 զնկատիւ պատկերով):
1898: Էջ ԺԱ+202: Ֆր. 2.50
- ԻԹ. Դադեանեան Յ., Փ. Բիւզանդացի եւ իւր պատ-
մութեան խարդախողը: Բնութիւնը Մ. Խորե-
նացու աղբիւրների մասին: 1898: Էջ Թ+175:
Ֆր. 2.50
- Լ. Մանեան Տ. Գ. Վ., Հայերէն քաղաքապետութիւն.
Թրգմ. Ի ուսերէնէ Տ. Գ. Վ. Մէնէվիշեան: 1899:
Էջ Է+26: Ֆր. —.50
- ԼԱ. Կօնեան Տ. Յ. Վ., Հայք Ի Զմիւռնիա եւ ի շրջա-
կայս: Հատոր Ա. Զմիւռնիա եւ Հայք. (պատկե-
րագարդ): 1899: Էջ ԺԲ+369: Ֆր. 5.—

- 1.Բ. Բօսնեան Հ. Յ. Վ., Հայք ի Զմիւնսիա եւ ի շրջա-
կայս: Հատոր Բ. Զմիւնսիոյ վիճակին գլխաւոր
քաղաքներն եւ Հայք. (պատկերազարդ:) 1899:
Էջ Ժ+161: Փր. 2.50
- 1.Գ. Գո՛վրիկեան Հ. Գ. Վ., Հայք յԵղիսաբեթուպոլիս
Դրանսիոյումնիոյ. Բ. Հտր. 1780—1825: 1899:
Էջ Է+554: Փր. 5.—
- 1.Դ. Գագանձեան Յ., Եւզոկիոյ Հայոց գաւառաբար-
բաւոյ: 1899: Էջ Է+120: Փր. 1.—
- 1.Ե. Կարրիէր Ա., Հեթանոս Հայաստանի ութ մնեան-
ներն Ագաթանգեղոսի եւ Մ. Խորենացոյ համե-
մատ: Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան (1 քարտէզով):
1899: Էջ 43: Փր. —.70
- 1.Զ. Տաշեան Հ. Յ. Վ., Ժողովածոյք առակաց վար-
դանայ, ըստ Ն. Մառի, տեղեկատուութիւն եւ
քաղաւածքներ: 1900: Էջ ԺԱ+193: Փր. 2.50
- 1.Ը. Տաշեան Հ. Յ. Վ., Մատենագրական Մանր Ու-
սումնասիրութիւնք. (տես ԺԶ): Մասն Բ: Է-Ժ.
Խիկար եւ իւր իմաստութիւնն, Ագապետոս եւ իւր
Յորդորականք առ Յուստինիանոս, Թղթակցութիւն
Արքարու եւ Արիստոսի ըստ Նորագիւտ արձանա-
գրութեան Եփեսոսի, եւ Գէորգայ Պիսիդեայ Վեց-
օրեայք: 1901: Էջ ԺԲ+384: Փր. 4.50
- 1.Ը. Տէր-Պօղոսեան Գր., Նկատողութիւններ Փաւս-
տոսի Պատմութեան վերաբերեալ: 1901: Էջ
Ը+110: Փր. 1.50
- 1.Թ. Վեբեր Ս., Արարատը Ս. Գրոց մէջ: Թրգմ.
Հ. Բ. Պիլէզիկճեան: 1901: Էջ Ե+77: Փր. 1.—
- 1.Ս. Սանտաշճեան Յովսէֆ Վ., Ատրեստանեայ
եւ Պարսիկ սեպագիր արձանագրութիւնք կամ
որոնք Նաիրի-Ուրարտու աշխարհին պատմութեան
կը վերաբերին: 1901: Էջ 262: Փր. 4.50
- 1.Ս. Խաչաթեանց Բագրատ, Հայ ժողովրդական
զիւցազնական վէպը: 1903: Էջ Ը+72 Փր. 1.—
- 1.Բ. Մեճեվիշեան Հ. Գ. Վ., Արդի լեզուագիտու-
թիւնը: Հտր Ա.: 1903: Էջ Ը+204: Փր. 3.—

- ԽԳ. Մարկոսարտ Յ., Հայ Բռնաշնորհ: Թրգմ. Հ. Թ. Կէտիկեան: 1903: Էջ 39: Փր. -75
- ԽԶ. Գեղեցեք Հ., Սկզբնատրութիւնք Բիւզանդեան քանակաթիւերու դրութեան (1 քարտէզով): Թրգմ. Հ. Գ. Գարանֆիլեան: 1903: Էջ Է+83: Փր. 2.—
- ԽԷ. Կիւրչեւեքեան Բ. Վ., Ժողք, Ժողք-Տուրք եւ Հոմ-Կլայ, պատմական եւ տեղագրական ուսումնասիրութիւն: 1904: Էջ Ը+117: Փր. 1.50
- ԽԸ. Կիւրչեւեքեան Բ. Վ., Կոլոտ Յովհաննէս Պատրիարք. պատմագրական եւ քանասիրական ուսումնասիրութիւն: 1904: Էջ ԺԴ+227: Փր. 3.50
- ԽԹ. Պեղեքսեան Հ., Նպաստ մը հայ. լեզուի պատմութեան: Թրգմ. Հ. Գ. Գարանֆիլեան: 1904: Էջ Ը+87: Փր. 1.25
- ԽՂ. Տէր-Մկրտչեան Գ. և Ամսոնեան Հ. Յ. Հմնութիւն եւ համեմատութիւն Եզնկայնորագիւտ ձեռագրին: 1904: Էջ Է+105: Փր. 1.50
- ԽՃ. Գովրիկեան Հ. Գ. Վ., Հայք յԵղիսաքեթուալոխս: Գ. Հոտ. 1825-1904: Էջ Ժ+658: Փր. 7.--
- Ժ. Ետրեք Մ., Հայաստան, Էրզաստան եւ արեւմտեան Պարսկաստան քաղաքական-ատրեստանեայ սեպագրերու համաձայն: Թրգմ. Հ. Բ. Պիլէգիկեան: 1904: Էջ Է+222: Փր. 3.—
- ԺԱ. Խաչատրեանց Գր., Հայ Արշակունիք ըստ Մովս. Խորենացոյ, կամ Նոր ուսումնասիրութիւններ Մովս. Խորենացոյ մասին: Թրգմ. Արսէն, Ս. Սիմոնեանց: 1906: Էջ Ը+124: Փր. 1.50
- ԺԲ. Պեղեքսեան Հ., Հայերէն եւ դրացի լեզուները: Թրգմ. Հ. Թ. Կէտիկեան: 1907: Էջ ԺԱ+257: Փր. 5.—
- ԺԳ. Հեռքումեան Հ., Հին Հայոց տեղոյ անունները: Թրգմ. Հ. Բ. Պիլէգիկեան: 1907: Էջ ԺԶ+443 Փր. 7.—
- ԺԴ. Պեղեքսեան Հ., Հին հայերէնի ցուցական դերանունները: Թրգմ. Հ. Յ. Տաշեան: 1907: Էջ Է+90: Փր. 2.—

- ԺԵ. Գաւշեւքեարեան Հ. Գ. Վ., Կենսագրութիւն Սարգիս Արքեպիսկոպոսի Սարաֆեան եւ Ժամանակին հայ կաթողիակեայք: 1908: Էջ ԺԳ+433: Ֆր. 5.—
- ԺԶ. Ամառեան Հ., Հայերէն նոր բառեր նորագիւտ Մնացորդաց զրոց մէջ: 1908: Էջ 38: Ֆր. —.60
- ԺԷ. Կիւրճեւեարեան Բ. Ժ. Վ., Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն: 1909: Էջ ԻԸ+458: Ֆր. 7.—
- ԺԸ¹. Ալիանեան Հ. Ն., Տիմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մէջ: Էջ 1—60:
- ԺԸ². Ամառեան Հր., Հայերէն նոր բառեր Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան մէջ: 1909: Էջ 61—106: Ֆր. 1.50
- ԺԹ. Ալիանեան Հ. Ն., Զարարիա Եզ. Գնունեաց եւ իւր տաղերը: 1909: Էջ ԺԲ+87: Ֆր. 1.—
- Կ. Ալիանեան Հ. Ն., Կիրիոն Կաթողիկոս Վրաց: 1910: Էջ ԻԸ+315: Ֆր. 5.—
- ԿԱ. Մեհեմէդիշեան Հ. Գ. Ժ. Վ., Հայերէն լեզուի ուղղագրութեան իննդիրը: 1910: Էջ 73: Ֆր. 1.—
- ԿԲ. Գիւրճեւեարեար Կ., Բիւզանդիոն եւ Պարսկաստան եւ անոնց ղիւանագիտական եւ ազգային-իրաւական յարաբերութիւնները Յուստինիանու Ժամանակ: Թրգմ. Հ. Հ. Համբարեան: 1911: Էջ Ը+162: Ֆր. 2.50
- ԿԳ. Սամոնեւեան Խ., Մխիթար Գօշի Դատաստանագիրքն ու հին Հայոց քաղաքացիական իրաւունքը: 1911: Էջ ԺԲ+344: Ֆր. 5.—
- ԿԴ. Առաքելեան Հ., Պարսկաստանի Հայերը, նրանց անցեալը, ներկան եւ ապագան: Ա. 1911: Էջ Ը+97: Ֆր. 1.50
- ԿԵ¹. Յովնանեան Հ. Ղ. Վ., Միջնադարեան ազգային տաղաչափութիւն ուսմկախառն. էջ 1—48:
- ԿԵ². Ալիանեան Հ. Ն., Յովնաթեան նաղաչ եւ նաղաչ Յովնաթեանեանք եւ իրենց քանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք: 1911. Էջ 49—117: Ֆր. 1.50

- ԿԶ. Մ Է Ա Է Վ Ի Զ Ե Ա Ա Հ. Գ. Ժ. Վ., Գրիգոր Մազիստրոսի «Դամագտականի», ամբողջական լուծույթ: 1912: Էջ ԺԱ+162: Ֆր. 1.50
- ԿԷ. Գ ա ռ թ ի Է Զ Ե Ա Ա Դ Կ տ. Մ. Ս., Անսայ Գաւառաբարբառը եւ Արդի Հայերէն լեզուն: 1912: Էջ Է+416: Ֆր. 6.—
- ԿԸ. Մ ա թ Կ ո շ ա թ տ Պ ռ ո Ֆ. Դ Կ տ. Յ., Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշթոցի: Թրգմ. Հ. Ա. Վարդանեան: 1913: Էջ Է+59: Ֆր. 1.50
- ԿԹ. Ա մ ա ռ Է ա Ա Հ., Հայոց գրերը, ընդ մամուլ:
- Հ. Մ ա տ Ի Կ Է ա Ա Հ. Ա., Անանունը կամ Կեղծ-Սերէոս, ըննական ուսումնասիրութիւն: 1913: Էջ Է+91: Ֆր. 1.50
- ՀԱ. Թ ո թ Գ ո մ Է ա Ա Տ. Վ. Յ., Երեմիա Չէլէսիի Քէօփիւրճեան Ստամբուլի Պատմութիւն: 1913: Էջ ԷԵ+412: Ֆր. 5.—
- ՀԲ. Վ ա թ Դ ա Ա Է ա Ա Հ. Ա., Դասական մանր ընագիւցներ եւ ձեռագրական համեմատութիւններ, Ա.: 1913: Էջ Ը+155: Ֆր. 1.75
- ՀԳ. Մ ա թ Կ ո շ ա թ տ Պ ռ ո Ֆ. Դ Կ տ. Յ., Հայ Բազրատունեաց Ծիւղագրութիւնը ծանօթութիւններով: Թրգմ. Հ. Մ. Հապոզեան: 1913: Էջ 68:
- ՀԴ. Մ ա թ Կ ո շ ա թ տ Պ ռ ո Ֆ. Դ Կ տ. Յ., Վրական Բազրատունեաց ծագումը: Թրգմ. Հ. Մ. Հապոզեան: 1913: Էջ 69-150: Ֆր. 1.75



